ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ԱՊՐԻԼ 2016

Լիահոնա

Ինչպե՞ս են թարգմանվում սուրբ գրությունները, էջ 20

Ճանաչենք մեր նոր Առաքյալին. Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ, էջ 12

Ավագ զույգեր. Կանչված ծառայելու, էջ 26

Երբ ամուսինը պոռնոգրաֆիայի հետ կապված խնդիրներ ունի, կինը նույնպես ունի բժշկման կարիք, էջ 34

Սովորեք օրհներգ նվագել 10 րոպեում, էջ 54

«Քանզի ահա, այսպես է ասում Տերը. Ես կհամեմատեմ քեզ, ո՜վ Իսրայելի տուն, մի ընտանի ձիթենու հետ, որը մի մարդ վերցրեց և խնամեց իր այգում. . . .
. . . Եվ օրհնված եք դուք. քանզի դուք ջանասեր եղաք՝ ինձ հետ այգում աշխատելիս, և պահեցիք իմ պատվիրանները, և ինձ համար նորից բերեցիք բնական պտուղը, այնպես որ իմ այգին այլևս ապականված չէ, և վատը դեն է գցված, ահա, դուք պետք է ինձ հետ իմ այգու պտղի համար ուրախություն ունենաք»:

Հակոբ 5.3, 75

Ձիթապտուղը հիմնականում աճեցրել են Միջերկրական ծովի մոտակայքի երկրներում: Այն ունի երկար բիբլիական պատմություն, սկսած Նոյին ձիթենու տերև բերող աղավնուց մինչև Ձիթենյաց սարի վրա Փրկիչի ուսուցանումն ու ձիթենու վերաբերյալ Հակոբի այլաբանությունը:

Լիահոնա, Ապրիլ 2016

ՈՒՂԵՐՁՆԵՐ

4 **Առաջին Նախագահության Ուղերձ. Մարգարեություն և անձնական հայտնություն**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

7 **Այցելող Ուսուցիչների Ուղերձ. Մեր Երկնային Հոր դուստրերը**

ԸՆՏՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

12 **Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ. տաղանդավոր ղեկավար, նվիրված հայր**
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

18 ***Նա՞ է*** **եպիսկոպոսը:**
Պատրիկ Ջ. Քրոնին III
Ես հասկանում էի, թե ինչու նա չի կարող հավատալ, որ ես այժմ ծառայում էի որպես եպիսկոպոս: Երեսուն տարի առաջ ես լրիվ այլ մարդ էի:

20 **Սուրբգրքյան թարգմանություն. Սրտին հասանելի լեզվով**
Ռ. Վալ Ջոնսոն
Մեր մայրենի լեզվով սուրբ գրքերը կարդալը նման է հոգևոր առումով տուն վերադառնալուն:

26 **Տարեց միսիոներների հիշարժան պահերը**
Նախագահ Ռասել Մ. Նելսոն
Խնդրում ենք, աղոթեք տարեց միսիոներների համար հիշարժան պահեր միասին ստեղծելու այս հնարավորության համար:

28 **Տարեց միսիոներներ. անհրաժեշտ, օրհնված և սիրված**
Ռիչարդ Մ. Ռոմնի
Զույգերը հայտնաբերեցին, որ միսիայում ծառայելը ավելի ճկուն, ավելի քիչ ծախսատար և ավելի հաճելի գործընթաց է, քան իրենք համարում էին:

34 **Երբ պոռնոգրաֆիան ներխուժում է տուն, թե կինը, թե ամուսինը պետք է բժշկվեն**
Անանուն
Եպիսկոպոսը պատմում է, թե ինչպես է օգնում ոչ միայն ամուսիններին, ովքեր պայքարում են պոռնոգրաֆիայի դեմ, այլ նաև նրանց կանանց, ովքեր նույնքան ունեն Փրկչի բուժող զորության կարիքը:

38 **Աշտարակի պահապանները**
Խորացրեք ձեր գիտելիքը մարգարեների մասին, իմանալով, թե ինչպես են նրանց նման աշտարակների պահապանների:

ԲԱԺԻՆՆԵՐ

8 **Մտորումներ Արդյո՞ք հրահանգները հասկանալի են:**
Ռութ Սիլվեր

9 **Եկեղեցում ծառայելը Շնորհակալություն ձեր ծառայության**
Անանուն

10 **Ավետարանի դասականներ Քահանայություն. Ամուր հիմք**
Երեց Լ. Թոմ Փերի

40 **Վերջին Օրերի Սրբերի ձայները**

80 **Մինչև նոր հանդիպում Փնտրեք հոգևոր պարգևներ**
Նախագահ Ջորջ Ք. Քենոն

ԿԱԶՄԻ ՎՐԱ
Դիմացի կազմ և ետևի կազմի ներդիր. Լուսանկարները՝ Լես Նիլսոնի; Ներդիր, դիմացի կազմ. Photograph © RayTango/ Thinkstock.

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՉԱՓԱՀԱՍՆԵՐ

48

44 **Ճանաչել սատանայի կեղծիքները**
Դենիս Ք. Գանթ
Եթե դիտարկենք սատանայի ստերի և Քրիստոսի ուսմունքների միջև ոչ թե նմանությունները, այլ տարբերությունները, ապա կտեսնենք սատանայի կեղծիքները:

48 **Երիտասարդ չափահասների դիմանկարները: Չափենք Մադագասկարի օրհնությունները**
Մայնդի Էնն Սելու
Ապրելով դժվարություններով լի մի երկրում, Սոլոֆո Ռավելոջառնան, այնուամենայնիվ, զգում է, որ իր կյանքը լի է օրհնություններով:

Տեսեք, թե կարող եք գտնել այս համարում թաքնված Լիահոնան: Հուշում. Հետևեք մարգարեին:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

50 **Հոգևոր կայունություն. Կառուցել չսուզվող նավ**
Երեց Դեյլ Գ. Ռենլանդ

54 **Սովորեք օրհներգ նվագել 10 րոպեում:**
Դանիել Քարտեր

57 **Ես որոշել էի թողնել նվագելը**
Գրեթչեն Բլաքբըրն
Ես ամեն ինչի պատրաստ էի դաշնամուր չնվագելու համար, այնպես որ երբ ծնողներս ասացին, որ կարող եմ թողնել նվագելը, եթե 50 օրհներգ սովորեմ, սկսեցի սովորել:

58 **Ողբերգական իրադարձությունը, վիշտը և Աստծո ծրագիրը**
Պաուլա Քեյջուպի
Նայելով հետ՝ իմ կյանքի ամենածանր պահերին, այժմ գիտեմ, որ Երկնային Հայրը այդ ամբողջ ժամանակ ինձ հետ է եղել:

60 **Նույնիսկ եթե դու ամաչկոտ ես**
Երեց Խոսե Ա. Տեքսեյրա
Ապավինիր Տիրոջը և Նա կօրհնի ձեզ ավետարանով կիսվելու ձեր ջանքերում:

62 **Մեր տարածքը**

63 **Պաստառ: Լա՞վ է:**

64 **Հարցեր և պատասխաններ**
Ինձ դպրոցում ծաղրում են ՎՕՍ լինելու համար: Ես գիտեմ, որ պիտի պաշտպանեմ այն, ինչին հավատում եմ, բայց դա այնքան դժվար է: Ինչպե՞ս ես կարող եմ քաջ դառնալ:

ԵՐԵԽԱՆԵՐ

76

66 **Պատասխաններ Առաքյալից: Ի՞նչ են անում Առաքյալները:**
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

67 **Խաղաղությունն իմ սրտում**
Քերոլ Ֆ. Մակքոնկի
Երբ ես տեսա և լսեցի մարգարեին, խաղաղություն զգացի:

68 **Էթանի վկայությունը**
Լարի Հիլլեր
Թվում էր, թե բոլորը, բացի Էթանից, վկայություն ունեին:

70 **Պեսոներ Երկնային Հոր համար**
Անջելա Փենիա Դալի
Մնալով առանց փողի, Անան մտածում էր, թե ինչ է ուտելու վաղը:

72 **Հետևել Մարգարեներին և Առաքյալներին**
Ջեննա Կոֆորդ
Ինչպե՞ս դուք կարող եք հետևել մարգարեին այս ամիս:

74 **Մորմոնի Գրքի հերոսները: Ալման ապաշխարում է**

75 **Ես կարող եմ կարդալ Մորմոնի Գիրքը**

76 **Մորմոնի Գրքի Պատմություններ: Ալման մկրտում է շատ մարդկանց**

79 **Գունավորելու էջ: Կիրակին հատուկ օր է**

ԱՊՐԻԼ 2016 ՀԱՏՈՐ 17 ՀԱՄԱՐ 1
ԼԻԱՀՈՆԱ 13284 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբանդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյլ Գ. Ռենլանդ

Խմբագիր. Ջոզեֆ Վ. Սիտատի

Խմբագրի օգնականներ. Ջեյմս Բ. Մարտինո, Քերոլ Ֆ. Մակքոնկի

Խորհրդատուներ. Բրայան Ք. Էշթոն, Ռանդալ Կ. Բենեթ, Քրեյգ Ա. Քարդոն, Շերիլ Ա. Էսփլին, Քրիստոֆել Գոլդեն, Դուգլաս Դ. Հոլմս, Լարի Ռ. Լորենս, Քերոլ Մ. Սթեֆենս

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Տ. Ուորներ

Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Վինսենթ Ա. Վոգն

Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբորգ

Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն

Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար

Հրապարակման օգնական. Մեգան Վերհոֆ

Գրողներ և խմբագրողներ. Բրիթանի Բիթլ, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լորի Ֆուլեր, Գարեթ Հ. Գարֆ, Լառեն Փորթեր Գանթ, Ջիլ Հեքինգ, Շառլոտ Լարկաբալ, Մայքլ Ռ. Մորիս, Սալի Ջոնսոն Օդեքիրկ, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Ֆինբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Մինդի Էնն Սելու, Պոլ Վանդենբերգ, Մարիսա Վիդիսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն

Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն

Ձևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Մենդի Մ. Բեթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Շայլդ, Նեյթ Ջինս, Քոլլին Հինքլի, Էրից Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մույ, Մարք Վ. Ռոբինսոն, Բրեդ Թիլը, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

Մտավոր սեփականության համակարգող. Քոլեթ Նեբեքեր Օն

Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս

Հրատարակում. Քոննի Բոթորփ Բրիջ, Ջուլի Բըրդեթ, Քեթի Դանքըն, Բրայըն Վ. Գիջի, Դենիզ Քըրբի, Գիննի Ջ. Նիլսոն, Գեյլ Թեյթ Դաֆերթի

Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեջվիկ

Բաշխման տնօրեն. Սթեֆեն Ռ. Քրիսչենսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.orgstore.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոերեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և տեսողական նյութերը կարո՛ն են բազմացվել եկեղեցում կամ տանը առանձին, ոչ-առևտրային օգտագործման նպատակով: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սեփականության հատուկ նշում է արված: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: April 2016 Vol. 17 No. 1. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

Մտքեր ընտանեկան երեկոյի համար

Այս համարը պարունակում է հոդվածներ և միջոցառումներ, որոնք կարող են օգտագործվել ընտանեկան երեկոյի համար: Ահա մեկ օրինակ:

«Նույնիսկ եթե դու ամաչկոտ ես», էջ 60. Ձեր ընտանեկան երեկոն օգտագործեք ավետարանով կիսվելու համար: Ընտանիքով քննարկեք, թե ո՞ր վախի պատճառով եք դուք դժվարանում կիսվել ավետարանով: Ընտանիքով աղոթեք, որ Տերն օգնի ձեզ վստահ զգալ ավետարանով կիսվելիս և ապա աղոթեք, թե ում կարող էիք հրավիրել ընտանեկան երեկոյին: Հրավիրեք ընտանիքի յուրաքանչյուր անդամին դասի ընթացքում վկայություն բերել: Դաս մատուցեք Վերականգնման կամ փրկության ծրագրի մասին: Ձեր օրագրում գրի առեք ձեր փորձառության կամ զգացմունքների մասին:

ԱՎԵԼԻՆ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

Լիահոնան և Եկեղեցու այլ նյութերը տարբեր լեզուներով մատչելի են **www.languages.lds.org կայքում:** Այցելեք **Facebook.com/liahona.magazine** (առկա է անգլերեն, պորտուգալերեն և իսպաներեն) և գտեք ոգեշնչված ուղերձներ, ընտանեկան տնային երեկոների մտքեր, կիրակնօրյա դպրոցի դասերի օգնություն և նյութեր, որոնցով կարող եք կիսվել ընկերների և ընտանիքի հետ:

ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Համարները ցույց են տալիս հոդվածի առաջին էջը:

Ազնվություն, *62*
Ակտիվացում, *18*
Աղոթք, *41, 64*
Այցելությամբ ուսուցում, *9*
Աշակերտություն, *12, 26*
Ապաշխարություն, *18, 74*
Աստվածային էություն, *7*
Դարձ, *43, 58, 75, 76*
Երաժշտություն, *54, 57*
Խաղաղություն, *50, 67*
Ծառայություն, *9, 26, 28, 41*
Կեղծիքները, *44, 63*
Կոչումներ, *18*
Հայտնություն, *4, 10, 20, 41, 42, 50, 70, 72*
Հանգստության օր, *79*
Հավատք, *34, 48, 58, 60*
Հիսուս Քրիստոս, *20, 34, 43, 58*
Հնազանդություն, *8, 34, 62, 72*
Հոգևոր պարգևներ, *80*
Մարգարեներ և Առաքյալներ, *10, 12, 66, 67, 72*
Միսիոներական աշխատանք, *26, 28, 60*
Մկրտություն, *75, 76*
Մորմոնի Գիրք, *43, 44*
Ներում, *34*
Ուսուցանել, *75*
Պատվիրաններ, *8, 72*
Պոռնոգրաֆիա, *34*
Սեր, *40*
Սուրբ Հոգի, *44, 50*
Սուրբ գրություններ, *20*
Վիշտ, *58*
Վկայություն, *64, 68*
Տաղանդներ, *40, 54*
Տասանորդ, *62, 70*
Քաջություն, *48, 64*
Քավություն, *34*

Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Մարգարեություն եկ անձնական հայտնությունն

Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին վերականգնվել է և այսօր գոյություն ունի աշխարհում: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին միշտ առաջնորդվել է ապրող մարգարեների և առաքյալների կողմից, ովքեր մշտապես խորհուրդներ են ստանում երկնքից:

Այդ աստվածային օրինաչափությունը գործել է նաև հին ժամանակներում: Աստվածաշնչում մենք սովորում ենք. «Որովհետեւ Տէր Եհովան ոչ մի բան չի անիլ, եթէ չ՚յայտնէ իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարէներին» (Ամովս 3.7):

Աստված կրկին խոսել է մեր օրերում Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Նա հայտնեց մեզ Հիսուս Քրիստոսի ավետարանն իր լրիվությամբ: Նա վերականգնեց Իր սուրբ քահանայությունը՝ բանալիներով և բոլոր իրավունքներով, զորություններով և քահանայության սուրբ զորության գործառույթներով:

Մեր օրերում ապրող մարգարեները և առաքյալները լիազորված են խոսելու, ուսուցանելու և առաջնորդելու Հայր Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի իշխանությամբ: Փրկիչն ասել է Մարգարեին. «Ինչ որ ես՝ Տերս, ասել եմ, ես եմ ասել, և չեմ արդարանում. ու թեև երկինքն ու երկիրը պիտի անցնեն, իմ խոսքը չպիտի անցնի, այլ բոլորը պիտի կատարվի, լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է» (ՎԵՌ 1.38):

Տարին երկու անգամ գերագույն համաժողովի ժամանակ մենք օրհնվում ենք հնարավորությամբ՝ լսելու մեզ ուղղված Տիրոջ խոսքը Նրա ծառաների միջոցով: Դա անգին արտոնություն է: Սակայն այդ հնարավորության արժեքը կախված է այն բանից, թե արդյոք մենք ստանում ենք խոսքերը նույն Հոգու ազդեցությամբ, որի միջոցով դրանք տրվել էին այդ ծառաներին (տես ՎԵՌ 50.19–22): Ճիշտ ինչպես նրանք են առաջնորդություն ստանում երկնքից, այնպես էլ մենք պիտի ստանանք: Եվ դա մեզանից պահանջում է նույն հոգևոր ջանքերը:

«Կատարեք ձեր առաջադրանքները»

Տարիներ առաջ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներից մեկը խնդրեց ինձ կարդալ համաժողովի ելույթը, որը նա պատրաստում էր գերագույն համաժողովի համար: Ես քվորումի կրտսեր անդամն էի: Ինձ համար մեծ պատիվ էր նրա վստահությանն արժանանալը, որ ես կարող էի օգնել իրեն գտնելու բառերը, որոնք Տերը կցանկանար, որ նա խոսեր: Նա ժպտալով ասաց ինձ. «Օ՜հ, սա ելույթի 22-րդ նախնական տարբերակն է»:

Ես հիշում եմ խորհուրդը, որը սիրելի և բարի Նախագահ Հարոլդ Բ. Լին (1899–1973) տվեց ինձ տարիներ առաջ՝ շեշտելով ամեն մի խոսքը: «Հալ, եթե դուք ուզում եք հայտնություն ստանալ, կատարեք ձեր առաջադրանքները»:

Ես կարդացի, խորհեցի և աղոթեցի այդ 22-րդ տարբերակի համար: Սուրբ Հոգու ազդեցության ներքո ես փորձեցի որքան հնարավոր է լավ ուսումնասիրել այն: Մինչ այն պահը, երբ քվորումի այդ անդամը ելույթ ունեցավ, ես կատարել էի իմ առաջադրանքը: Վստահ չեմ, թե օգնեցի նրան, սակայն գիտեմ, որ ես փոխվել էի այդ ելույթը լսելիս: Ես ստանում էի ուղերձներ, որոնք

ավելին էին, քան իմ կարդացած և նրա ասած բառերը: Բառերն ունեին ավելի մեծ իմաստ, քան նրանք, որոնք ես կարդացել էի նախնական տարբերակում: Եվ ուղերձը կարծես թե նախատեսված էր ինձ համար՝ համընկնելով իմ կարիքների հետ:

Աստծո ծառաները ծոմ են պահում և աղոթում, որպեսզի ստանան ուղերձը, որը Նա ունի նրանց համար, որ տան նրանց, ովքեր ունեն հայտնության և ոգեշնչման կարիք: Այդ և նմանատիպ շատ փորձառություններից ես սովորել եմ, որ ապրող մարգարեներին և առաքյալներին լսելուց մեծ օգուտ քաղելու համար մենք ինքներս պետք է վճարենք հայտնություն ստանալու գինը:

Տերը սիրում է յուրաքանչյուրին, ով լսում է Իր ուղերձը, և Նա գիտի յուրաքանչյուրի սիրտն ու պայմանները: Նա գիտի, թե որ ուղղումը, որ քաջալերանքը և ավետարանի որ ճշմարտությունը լավագույնս կօգնի յուրաքանչյուրին՝ ընտրելու իր ուղին, որը կտանի դեպի հավերժական կյանք:

Մենք, երբ լսում և դիտում ենք գերագույն համաժողովի ուղերձները, երբեմն հետո մտածում ենք. «Ի՞նչ եմ ես ամենալավը հիշում»: Տերը հուսով է, որ մեզանից յուրաքանչյուրը կտա հետևյալ պատասխանը. «Ես երբեք չեմ մոռանա այն պահերը, երբ իմ մտքում և սրտում զգացել եմ Հոգու ձայնը, որն ասում էր ինձ, թե ես ինչ կարող եմ անել, որպեսզի գոհացնեմ իմ Երկնային Հորը և Փրկիչին»:

Մենք կարող ենք ստանալ այդ անձնական հայտնությունը, երբ լսում ենք մարգարեներին և առաքյալներին և երբ հավատքով աշխատում ենք, որպեսզի ստանանք այն, ինչպես Նախագահ Լին է ասել, ինչ մենք կարող ենք: Ես իմ փորձով և Հոգու վկայությամբ գիտեմ, որ դա ճիշտ է: ■

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Դուք կարող եք բարձրաձայն կարդալ Նախագահ Այրինգի պատմությունը իր քվորումի անդամի համաժողովի ելույթի նախնական տարբերակն ուսումնասիրելու մասին: Դուք կարող եք հարցնել. «Ի՞նչ գին պետք է վճարել հայտնություն ստանալու համար»: Ձեր քննարկումից հետո դուք կարող եք հրավիրել նրանց, ում այցելել եք, մտածել և կազմել ծրագիր, որը կօգնի նրանց ստանալ հաջորդ գերագույն համաժողովի ուղերձները «նույն Հոգու ազդեցությամբ, որով դրանք տրվել էին [Աստծո] ծառաներին»:

ՈՐՈՍՈՒՄ ԵՆՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Երկնային Հայրը խոսեց ինձ հետ համաժողովի ելույթի միջոցով

Էն Լալեսկա Ալվես դե Սուզա

Ես չէի կողմնորոշվում, թե համալսարանի որ ֆակուլտետում պիտի սովորեի: Շատերը թերահավատորեն էին արտահայտվում իմ ընտրած ուղու վերաբերյալ, այնպես որ ես աղոթեցի Տիրոջը, որ տեսնեի, թե արդյոք Նա համաձայներ իմ որոշման հետ:

Իմ պատասխանը եկավ հաջորդ օրը, երբ *Լիահոնայում* կարդում էի գերագույն համաժողովի մի ելույթ: Ես զգացի կարծես Երկնային Հայրն ասում էր ինձ, որ Նա չէր կարող իմ փոխարեն ընտրել: Դա մի որոշում էր, որը ես ինքս պիտի կայացնեի: Գիտեի, որ անկախ այն բանից, թե ինչ ընտրություն կկատարեի, հաջողության հասնելու համար պետք էր տքնաջան աշխատել:

Գիտեմ, որ ստացա իմ աղոթքի պատասխանը: Սուրբ Հոգու հաստատումն օգնեց ինձ որոշում կայացնել: Ես սովորեցի, որ պետք է լավագույն ջանքերս ներդնեմ և իմանամ, որ Երկնային Հայրը կօգնի ինձ:

Էն Լալեսկա Ալվես դե Սուզան ապրում է Մերժիպիում, Բրազիլիա:

ԼՈՒՍԱՆԱՎԱՐԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄՈՂԵԼԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

ԵՐԵԽԱՆԵՐ

Հետևեք մարգարեին

Մարգարեներն ու առաքյալները խոսում են Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի անունից: Նրանք ուսուցանում են մեզ՝ ինչպես հետևել Հիսուսին: Գնացեք գծված արահետներով և տեսեք, թե մարգարեն և առաքյալները ինչ են պատվիրել մեզ անել:

ԿԱՄԸ՝ ԻՆՉ ՊԱՏՎԻՐԵՑԻՆ ՄԵԶ ԱՆԵԼ

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և փորձեք հասկանալ, թե ինչով պետք է կիսվեք: «Ընտանիք՝հայտարարություն աշխարհին» փաստաթղթի բովանդակության հասկանալն ինչպե՞ս կմեծացնի ձեր հավատքն առ Աստված և կօրհնի նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք reliefsociety.lds.org:

Մեր Երկնային Հոր դուստրերը

Սուրբ գրությունները սովորեցնում են մեզ, որ «Աստուծոյ ազգիցն ենք» (Գործք 17.29): Աստված դիմեց Էմմա Սմիթին՝ Մարգարե জոզեֆ Սմիթի կնոջը, որպես «իմ դուստր» (ՎԵՎՈՒ 25.1): Ընտանիքի վերաբերյալ հռչակագիրը սովորեցնում է, որ մեզանից յուրաքանչյուրը «երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր . . . դուստրն է»:[1]

«Նախաերկրային կյանքում մենք իմացանք կնոջ՝ մեր հավերժական ինքնության մասին»,- ասել է Սփոփող Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական Քույր Քերոլ Մ. Սթեֆենսը:

«Մեր մահկանացու ճամփորդությունը դեպի երկիր չփոխեց այդ ճշմարտությունները»:[2]

«Ձեր Երկնային Հայրը գիտի ձեր անունը և գիտի ձեր պայմանները»,- ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց জեֆրի Ռ. Հոլլանդը: «Նա լսում է ձեր աղոթքները: Նա գիտի, թե ինչ հույսեր և երազանքներ դուք ունեք՝ ներառյալ ձեր վախերն ու հիասթափությունները»:[3]

«Մեզանից յուրաքանչյուրը պատկանում է Աստծո ընտանիքին, որտեղ կա մեր կարիքը»,- ասել է Քույր Սթեֆենսը: «Երկրի վրա բոլոր ընտանիքները տարբեր են: Եվ մինչ մենք ջանասիրաբար փորձում ենք ամուր ավանդական ընտանիքներ ստեղծել, Աստծո ընտանիքի անդամ լինելը կախված չէ որևէ տեսակի կարգավիճակից, լինի դա ամուսնական, ծնողական, ֆինանսական, սոցիալական և անգամ սոցիալական կայքերում նշված կարգավիճակ»:[4]

Լրացուցիչ սուրբ գրություններ

Երեմիա 1.5, Հռովմայեցիս 8.16, Վարդապետություն և Ուխտեր 76.23–24

Խորհեք այս մասին

Իմացությունը, որ դուք Աստծո դուստրն եք, ինչպե՞ս է ազդում ձեր որոշումների վրա:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
2. Քերոլ Մ. Սթեֆենս, «Ընտանիքն Աստծուց է», *Լիահոնա,* մայիս 2015, 11:
3. Jeffrey R. Holland, “To Young Women,” *Liahona,* Nov. 2005, 28.
4. Քերոլ Մ. Սթեֆենս, «Ընտանիքն Աստծուց է», 11:
5. See Gospel Topics, “First Vision Accounts,” topics.lds.org.

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Մեր պատմությունից

Պատմելով Առաջին Տեսիլքի մասին[5] Մարգարե জոզեֆ Սմիթը բազմաթիվ ճշմարտությունների շարքում հաստատում է նաև այն, որ մեր Երկնային Հայրը գիտի մեր անունը:

Պատանի জոզեֆը փորձում էր իմանալ, թե որ եկեղեցուն միանար և առաջնորդություն գտավ Հակոբոս 1.5-ում: জոզեֆը որոշեց, որ պետք է հարցներ Աստծուն:

1820 թվականի գարնանային մի առավոտ նա գնաց անտառ աղոթելու, սակայն անմիջապես նրան համակեց մի չար ուժ: Այդ ամենի վերաբերյալ նա գրել է.

«Հենց այդ մեծ տագնապի պահին, իմ գլխավերևում ես տեսա արևի պայծառությունը գերազանցող լույսի մի սյուն, որն աստիճանաբար իջնում էր ցած, մինչև որ ընկավ ինձ վրա:

Լույսի հայտնվելուն պես, ես ինձ ազատված գտա այդ թշնամու կապանքներից: Երբ լույսը հանգչեց ինձ վրա, ես տեսա երկու Անձնավորություն, ինձանից վեր՝ օդի մեջ կանգնած, որոնց պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. *Սա է Իմ Սիրելի Որդին: Լսիր Նրան*»: (জոզեֆ Սմիթ—Պատմություն 1.16–17):

ԱՐԴՅՈ՞Ք ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԵՆ:

Ռութ Սիլվեր

Հեծանիվով կատարած ուղևորության արդյունքում համոզվեցի, որ մենք պետք է մշտապես ստուգենք Տիրոջ կողմից նախատեսված մեր կյանքի ուղու քարտեզը:

Մի քանի տարի առաջ ես հեծանիվով ուղևորություն կատարեցի դեպի Ֆրանսիա իմ քրոջ, քենու և նրա աղջկա հետ: Ամեն առավոտ մեզ տալիս էին երեք էջից բաղկացած մանրակրկիտ հրահանգներ, որոնց ճշտությամբ հետևելու դեպքում կհայտնվեինք այդ օրվա համար նախատեսված ճիշտ վայրում: Մինչ մենք վարում էինք մեր հեծանիվները այգիների միջով, ուղեցույցում հանդիպում էինք նմանատիպ հրահանգների. «վարեք 50մ դեպի հյուսիս, ապա թեքվեք ձախ և վարեք 100մ»: Հրահանգներում հաճախակի տրվում էին նշաններ և փողոցների անուններ:

Մի առավոտ մենք անցնում էինք մի գեղեցիկ արահետով, սակայն շուտով հասկացանք, որ մեր ուղեցույցը չէր համապատասխանում այդ տարածքի հետ: Հասկանալով, որ մոլորվել ենք, մենք որոշեցինք վերադառնալ այնտեղ, որտեղ մենք վերջին անգամ նկատել էինք, որ ճիշտ ճանապարհի վրա ենք, որպեսզի տեսնեինք, թե կարող ենք կողմնորոշվել, թե ուր գնալ:

Երբ մենք հասանք այդտեղ, մենք անմիջապես գտանք ճանապարհային մի փոքրիկ նշան, որը տրված էր նաև մեր հրահանգներում, որը մենք չէինք նկատել: Շուտով մենք կրկին ճիշտ ուղու վրա էինք, համապատասխանեցնելով մեր առաջընթացը հրահանգների հետ, որոնք կրկին լիովին հասկանալի էին մեզ համար:

Այս փորձառությունը փոխաբերական իմաստով պատասխանեց ինձ շփոթեցնող մի հարցի: Երբ մարդը վկայություն ունի ավետարանի մասին, ինչպե՞ս կարող է նա երբևէ շեղվել ճիշտ ճանապարհից: Ինձ համար պարզ դարձավ մի բան, որ երբ մենք սխալ ուղղությամբ ենք ընթանում (մեղք ենք գործում) կամ թերանում ենք հետևել Աստծո պատվիրաններին, հրահանգները (Աստծո խոսքը) այլևս հասկանալի չեն լինում մեզ համար: Քարտեզը, ինչպես եղել էր այն ժամանակ, այլևս չի համապատասխանում այն տարածքի հետ, որտեղ մենք ենք: Եթե մենք շատ չենք հեռացել ճիշտ ճանապարհից, կարող ենք նկատել, որ մենք սխալ ուղի ենք ընտրել և պետք է վերադառնանք այնտեղ, որտեղ մենք գիտեինք, որ հետևում էինք ճիշտ ուղուն (ապաշխարենք) կամ կրկին պարտավորվենք ապրել ըստ Աստծո պատվիրանների:

Շատ հաճախ, երբ հրահանգներն այլևս չեն համապատասխանում այն վայրին, որտեղ մենք ենք, մենք հարցականի տակ ենք դնում հրահանգները: Ետ վերադառնալու փոխարեն մենք քննադատում ենք հրահանգները և ապա խուսափում դրանցից ընդհանրապես: Ի վերջո, այլևս չունենալով մեր նպատակակետի հետ կապված հեռանկար, մենք մոլորվում ենք, թափառելով այն ուղիներում, որոնք ժամանակավորապես կարող են շատ գրավիչ թվալ, սակայն չեն կարող հասցնել մեզ այնտեղ, որտեղ մենք պիտի լինենք:

Ամեն օր մենք հնարավորություն ունենք ուսումնասիրելու սուրբ գրությունները: Եվ ամեն վեց ամիսը մեկ մենք դիտում ենք Եկեղեցու գերագույն համաժողովը: Արդյոք սրանք այն պահերը չեն, երբ մենք կարող ենք ստուգել մեր քարտեզը և համոզվել, որ մենք այնտեղ ենք, որտեղ պիտի լինենք: Մի անգամ համաժողովը լսելիս զգացի, որ լինելով անկատար՝ որպես այդպիսին, մենք կարող ենք իմանալ, որ ճիշտ ուղու վրա ենք, եթե այդ հրահանգները հասկանալի են մեզ համար:

Ինչպես ճիշտ հրահանգներին հետևելը մեզ այս կյանքում կհասցնի նպատակակետին, այնպես էլ սուրբ գրությունների ուսումնասիրությունը և ապրող մարգարեների խորհրդին հետևելը մեզ թույլ կտան ստուգել մեր ընթացքը և անհրաժեշտության դեպքում՝ ուղղել այն, որպեսզի ի վերջո հասնենք մեր երկնային տուն: ■

Հեղինակը, ով ապրում էր Կոլորադոյում, մահացել է անցած տարի:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՏԱՅԼՈՐԻ ԵՅԻ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՁԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Անանուն

Դուք մարմնավորում եք այն կանանց, ովքեր Նավուի օրերից սկսած ծառայել են միմյանց՝ սիրալիր և ոգեշնչված այցելող ուսուցման միջոցով:



Ես չգիտեմ ձեր անունը, ձեր տարիքը կամ որևէ այլ բան ձեր մասին: Ես միայն գիտեմ, որ դուք Աննայի այցելող ուսուցիչն եք, և ես իմ ողջ սրտով երախտապարտ եմ ձեր բարեխիղճ ծառայության համար:

Ես գիտեմ, որ իմ հարս Աննայի (անունը փոխված է) նման քիչ ակտիվ քրոջն այցելելը հեշտ չէ, հատկապես, երբ նա հավանաբար այնքան էլ հյուրընկալ չէ: Կասկածում եմ, թե նա ի սկզբանե կցանկանար, որ դուք այցելեիք: Սակայն Աննան ասել է ինձ, որ դուք իսկական ընկեր եք եղել նրա համար՝ այցելելով և հետաքրքրվելով, թե ինչպես է նա և ընդունելով նրան այնպիսին, ինչպիսին կա:

19 տարիների ընթացքում, ինչ Աննան ամուսնացել է որդուս հետ, սա առաջին անգամն է, որ նա նշում է, որ ունի այցելող ուսուցիչ: Վերջերս նա ասաց ինձ, թե որքան հաճախ եք այցելում և որքան մտահոգված և բարի եք միշտ: Նա ասաց, որ բազմիցս օգնել եք նրան, երբ հիվանդ է եղել և նույնիսկ առաջարկել եք տանել իմ թոռնուհուն Երիտասարդ Կանանց դասին:

Վերջին 10 տարիների ընթացքում նա, իմ որդին և նրանց ընտանիքը հարյուրավոր մղոններ հեռու են ապրում մեզանից: Ես աղոթել եմ, որ ուրիշները սիրեն և հոգ տանեն նրանց համար այնպես, ինչպես ես, և ես արցունքներն աչքերիս աղերսել եմ Երկնային Հորը, որ ուրիշները օգնության հասնեն նրանց այնպես, ինչպես ես կանեի, եթե նրանք ինձ մոտ ապրեին: Ըստ Աննայի պատմածի, դուք իմ աղոթքների պատասխանն եք:

Եթե նույնիսկ Աննան և իմ որդին չեն հնազանդվում Իմաստության Խոսքին և չեն հաճախում եկեղեցի, նրանք միևնույնն է լավ մարդիկ են և սիրում են իրենց երեխաներին: Ինչ-որ կերպ ձեր աչքերը ամպամած չէին Աննայի ծխախոտի ծխից: Դուք կարծիք չեք կազմել նրա մասին ըստ այն փաստի, թե արդյոք նա հաճախում է եկեղեցի, թե ոչ: Դուք ցանկացել եք ճանաչել նրան և հասկացել եք, որ նա սիրող մայր է, ով ցանկանում է, որ իր դուստրը հաճախի եկեղեցի և վկայություն ձեռք բերի: Եվ երբ Աննան վիրահատվեց, դուք ընթրիք բերեցիք նրա համար, ոչ թե մտածեցիք, թե արդյոք նա չէր իր առողջական խնդիրներից մի քանիսի պատճառը:

Որքան երախտապարտ եմ ես, որ դուք օրինակ եք իմ թոռնուհու համար: Նա կարող է վերաբերվել ձեզ որպես մեկի, ով հոգում է բոլորի համար և մի կողմ է դնում իր գործերը, որպեսզի սիրալիր հոգածություն ցուցաբերի: Նա ասաց ինձ, որ մի օր, երբ դուք մեքենա չունեիք, մեկ մղոնից ավելի քայլել եք ձեր փոքրիկ երեխաների հետ, որպեսզի քաղցրավենիք բերեք:

«Ես մտածում էի ձեր և ձեր մայրիկի մասին և ցանկանում էի պարզապես ինչ-որ լավ բան անել ձեր համար»,- ասել եք դուք նրան:

Երանի թե կարողանայի ասել ձեզ, թե որքան երախտապարտ եմ՝ որպես այցելող ուսուցիչ ձեր կոչմանը նվիրված լինելու համար: Դուք մարմնավորում եք այն կանանց, ովքեր Նավուի օրերից սկսած ծառայել են միմյանց՝ սիրալիր և ոգեշնչված այցելությամբ ուսուցանելու միջոցով: Դուք ցույց եք տվել այդ ծառայությունը և սերը, երբ արդյունավետ կերպով այցելել եք իմ քիչ ակտիվ հարսին:

Շնորհակալություն: ■

ՔԱՐՏԻՐ ԵՎ ԾՐԱՓԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ © ISTOCK/THINKSTOCK

Երեց Լ. Թոմ Փերի
(1922–2015)
Տասներկու
Առաքյալների
Քվորումից

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ. ԱՄՈՒՐ ՀԻՄՔ

Այս հոդվածը երիտասարդ քահանայություն կրողների համար պատրաստել է Երեց Լ. Թոմ Փերին 2015թ. մայիսի 28-ին՝ իր մահից երկու օր առաջ։

Իմ կյանքի ամենամեծ զորությունը Աստծո քահանայությունն է։ Ես հավատում եմ, որ այն ամուր հիմք կլինի նաև ձեզ՝ երիտասարդ տղամարդկանց համար։ Բայց որպեսզի այն զորություն ունենա ձեր կյանքում, դուք պիտի հասկանաք և կիրառեք այն։

Քահանայության իմ վաղ փորձառությունները

Ես մեծացել եմ բարեկեցիկ միջավայրում Լոգանում (Յուտա)։ Մանկության տարիներին ես խնդիրներ չեմ ունեցել սնունդի, տանիքի կամ կրթության հետ կապված։ Բայց հավանաբար այդքան հեշտ կյանքի պատճառով ես ինչ-որ բանի կարիք ունեի, որից պիտի կառչեի, և որը պիտի ամրացներ ինձ։

Այդ խարիսխը ինձ համար Աստծո քահանայությունն էր։ Երբ մեծանում էի, ես անսովոր իրավիճակում էի։ Երբ ես մի տարեկան էի, իմ հայրիկը կանչվեց եպիսկոպոս, և նա իմ եպիսկոպոսն էր 19 տարի։ Նրա հայրական ու հոգևոր առաջնորդությունը հսկայական օգնություն էր ինձ համար։

Կարծում եմ, որ հիմնականում այդ պատճառով էր, որ իմ 12-րդ տարեդարձի օրը ես անհամբերությամբ սպասում էի, թե երբ պիտի ստանամ Ահարոնյան Քահանայություն։ Ես հիշում եմ, թե ինչպես այդ հատուկ օրը ես զգացի իմ հոր ձեռքերն իմ գլխին, երբ նա ձեռնադրում էր ինձ։ Դրանից հետո ես առաջ շարժվեցի Ահարոնյան Քահանայության բոլոր պաշտոններով և ստացա կոչումներ, որոնք ես մեծ բավականությամբ էի կատարում։

Հաղորդություն բաժանելը յուրահատուկ էր ինձ համար։ Ես տեսնում էի, թե ինչպես էին մարդիկ պարտավորվում հնազանդվել Աստծուն ու պահել Նրա պատվիրանները, երբ ճաշակում էին Նրա մարմնի ու արյան խորհրդանիշերը։

Մեծանալով Քահանայության ըմբռնումով

Տարիներն անցան, ես ավարտեցի ավագ դպրոցը և մի տարի քոլեջում սովորելուց հետո կանչվեցի ծառայելու միսիայում։ Ես վայելում էի դրա ամեն մի րոպեն և սիրում էի իմ զուգընկերներին։ Նրանցից մեկը հատկապես մեծ ուժ էր տալիս ինձ։ Մեր պարտականությունների կատարման ընթացքում ես շատ բան սովորեցի նրանից։

Քանի որ երկիրը պատերազմի մեջ էր, երբ ես վերադարձա միսիայից, միացա Միացյալ Նահանգների ծովային ուժերին։ Պատերազմի ավարտից հետո ես վերադարձա քոլեջ, ամուսնացա և ընտանիք կազմեցի։ Միմյանց հաջորդող մասնագիտական տեղաշարժերի պատճառով ես եղա Միացյալ Նահանգների շատ վայրերում, որտեղ շատ բան սովորեցի բազմաթիվ քահանայական կոչումներում ծառայելիս։ Ի վերջո, ես դադար առա Բոստոնում (Մասաչուսեց), որտեղ ծառայեցի որպես ցցի նախագահ։ Այնտեղից էր, որ ես կանչվեցի որպես Տասներկուսի օգնական, իսկ 17 ամիս անց՝ Տասներկու Առաքյալների Քվորում։

Դասեր, որոնք սովորել եմ որպես Առաքյալ

Ի՞նչ եմ ես սովորել որպես Տասներկուսի Քվորումի անդամ։

Ես սովորել եմ, որ քահանայությունը ուղեցույց է, հիմք և պաշտպանություն։

Քահանայությունը միշտ էլ գոյություն է ունեցել։ Նախքան աշխարհ գալը Ադամը քահանայություն ուներ։ Քանի որ Ադամի սերունդները ցրվեցին քահանայության հետ միասին, անհրաժեշտություն առաջացավ կազմակերպել քահանայության կառավարումը։ Տերն արեց այդ՝ կանչելով Աբրահամին նախագահելու իր ընտանիքի քահանայություն կրողներին։ Այս

կազմակերպությունը շարունակվեց Իսահակի և Հակոբի ներքո, ում անունը ավելի ուշ փոխվեց Իսրայել:

Դարեր անց Իսրայելի զավակները հայտնվեցին գերության մեջ: Տերն ուղարկեց Մովսեսին ազատելու նրանց, բայց երբ նա արեց այդ, նրանք ցույց տվեցին, որ որպես ժողովուրդ պատրաստ չէին Մելքիսեդեկյան Քահանայության համար: Այսպիսով, նրանց մնաց միայն Ահարոնյան Քահանայությունը, մինչև Փրկիչի գալուստը:

Ես շատ հետաքրքիր եմ համարում այն, ինչ Փրկիչն արեց առաջինը՝ նախքան կսկսեր Իր ծառայությունը: Նա կազմավորեց Մելքիսեդեկյան Քահանայությունը: Նա կանչեց տասներկու Առաքյալների և ուսուցանեց նրանց քահանայության օրենքներն ու կարգը: Նա կանչեց Պետրոսին՝ որպես գլխավոր Առաքյալ, հիմնադրելով քահանայության իշխանության գիծն Իր եկեղեցում Այդ օրից սկսած մինչև հիմա Հիսուս Քրիստոսն է, ով ընտրում է Իր գլխավոր Առաքյալին՝ նախագահելու Եկեղեցում, և Փրկիչն է, որ ուղղորդում է նրան իր քահանայական պարտականություններում:

Այսպիսով, քահանայությունն ունի ուղիղ գիծ մեր Տիրոջից՝ գլխավոր Առաքյալի միջոցով դեպի մյուս Առաքյալները և շարունակ մինչև Եկեղեցու այլ քահանայություն կրողները: Իշխանության բանալիները տրվում են Առաքյալներին, և քանի դեռ այդ բանալիները երկրի վրա են, մենք կառաջնորդվենք անմիջապես Տիրոջից: Այս աստվածային ուղղորդումը պաշտպանում է մեզ և հավաստիացնում, որ Եկեղեցին չի տարբերվի ճշմարտությունից: Այն հաստատուն կմնա, որովհետև այն չի ուղղորդվում որևէ երկրային արարածի կողմից: Այն ուղղորդվում է Տիրոջ կողմից:

Սովորեք Քահանայության վարդապետությունները:

Մեծագույն խորհուրդը, որ ես ունեմ ձեր՝ երիտասարդ տղամարդկանց համար, քահանայության վարդապետությունները սովորելն է, հասկանալով այն ուժը, որն ունեք ձեր քահանայությունը գործադրելիս, և իմանալով, թե այն ինչպես կարող է օրհնել ձեր և ուրիշների կյանքը:

Ես խոստանում եմ, որ եթե դուք սովորեք քահանայության վարդապետությունները և կատարեք քահանայության ձեր պարտականությունները, քահանայությունը կլինի այն ամուր հիմքը, որը ձեզ կպահի հոգեպես ապահով և մեծ ուրախություն կբերի ձեզ: Եղեք իսկական քահանայության քվորում: Օգնության ձեռք մեկնեք ձեր ընկերներին և դարձրեք նրանց ձեր քվորումի անդամը: Ձեր քվորումում ստեղծեք այնպիսի եղբայրություն, որը մշտական հիմք կլինի ձեր կյանքի համար: ■

Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ.

ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ՂԵԿԱՎԱՐ, ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՐ

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ռոն Ռասբենդը երբևէ չէր կասկածել, որ ինքը ծառայելու էր լիաժամկետ միսիայում: Միակ հարցը, որ 19-ամյա երիտասարդն ուներ միսիայի կանչը բացելիս, այն էր, թե *որտեղ* պիտի ծառայեր:

«Իմ հայրիկը ծառայել է իր միսիան Գերմանիայում: Իմ ավագ եղբայրը ծառայել է միսիան Գերմանիայում: Քրոջս ապագա ամուսինը միսիան ծառայել է Գերմանիայում», - վերհիշում է նա: Կարծում էի, ես կգնամ Գերմանիա:

Բայց Տերն ուրիշ ծրագրեր ուներ: Փոխարենը Ռոնը կանչվել էր Արևելյան Նահանգների Միսիա, որի գլխավոր գրասենյակը տեղակայված էր Նյու Յորք Սիթիում (ԱՄՆ): Հիասթափված, նա վերցրեց կանչի թուղթը, մտավ ննջասենյակ, ծնկի իջավ, աղոթեց, բացեց իր սուրբ գրությունների պատահական մի էջ և սկսեց կարդալ.

«Ահա, տե՛ս, ես բազում ժողովուրդ ունեմ այս վայրում, մերձակա շրջաններում. և արդյունավետ դուռ պիտի բացվի մերձակա շրջաններում, *արևելյան այս հողում*:

Հետևաբար, ես՝ Տերս, թույլ եմ տվել, որ դուք գաք այս վայրը. քանզի ինձ այդպես էր նպատակահարմար հոգիների փրկության համար» (ՎԵՈՒ 100.3–4 շեշտադրումն ավելացված է):

Անմիջապես Սուրբ Հոգին հաստատեց Ռոնին, որ նրա կանչը Արևելյան Նահանգների Միսիա սխալ չէր:

«Իմ զգացմունքները հիասթափությունից անցան դեպի սուրբ գրություններից ստացած իմ առաջին տպավորությունները այն մասին, որ սա այն տեղն է, որ Տերն ուզում է՝ ես գնամ», մտաբերում է նա: Դա կարևոր հոգևոր փորձառություն էր ինձ համար:

Նրա միսիան դեպի արևելյան նահանգներ Եկեղեցու այն մի քանի կոչումներից առաջինն էր, որ նրան կտաներ այնպիսի տեղեր, որ նա երբևէ չէր ակնկալել: Եվ յուրաքանչյուր կոչման հետ՝ որպես ուսուցիչ, եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, միսիայի նախագահ, Յոթանասունի անդամ, Յոթանասունի Ավագ Նախագահ և Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաքյալ Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդն ընդունել է Տիրոջ կամքը և շարունակել ապավինել Նրա Հոգուն՝ Աստծո զավակներին ծառայելիս:

Վերևում աջից՝ Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդը որպես միսիայի նախագահ Նյու Յորք Սիթիում 1998 թվականին: Աջից վերջում՝ Երեց Ռասբենդը իր քրոջ՝Նենսի Շինդլերի հետ, մայրը և եղբայրները, Ռասսելն ու Նեյլը: Աջից՝ ծնողների հետ, յոթ տարեկանում:



Լինել հրաշալի ծնողների զավակ

Որպես Հիսուս Քրիստոսի Առաքյալ իր առաջին ելույթի ժամանակ Երեց Ռասբենդը իր անկեղծ երախտագիտությունն արտահայտեց իր նախնիներին: «Ես ծնվել եմ ավետարանով ապրող հրաշալի ծնողներից, - ասել է նա, - իսկ նրանք՝ վեց սերունդ ետ, հրաշալի ծնողներից»:[1]

Նրա մայրը՝ Վերդա Անդերսոն Ռասբենդը սիրող ղեկավար էր, ով խրախուսում էր երիտասարդ Ռոնի սերը դեպի սուրբ գրությունները: Նրա հայրը՝ Ռոլոն Հոկինս Ռասբենդը, հավատարիմ քահանայություն կրող էր, ով տքնաջան աշխատող մարդու օրինակ էր:

Ռոնալդ Ա. (Անդերսոն) Ռասբենդը ծնվել է ԱՄՆ-ի Յուտա նահանգի Սոլթ Լեյք Սիթի քաղաքում, 1951 թվականի փետրվարի 6-ին և ծնողների միության միակ երեխան էր: Երկուսն էլ նախկինում ամուսնացած և ամուսնալուծված էին եղել, և Ռոնը մեծացել էր երկու ավագ եղբայրների և ավագ քրոջ հավելյալ խնամքի տակ:

«Նա մեր ծնողների համակցությունն էր, ուստի մենք բոլորս սիրում էինք նրան», - ասում է նրա քույրը՝ Նենսի Շինդլերը: «Ռոնը երբեք թույլ չէր տալիս մայրիկին ու հայրիկին կանգնել կամ նստել կողք կողքի՝ առանց նրանց մեջտեղում լինելու»:

Ռոնը ընդհանրապես լավ տղա էր, բայց նա ընդունում է, որ բացասական կողմեր ուներ:

«Շատ անգամներ իմ [Երեխաների Միության] ուսուցիչը գնում էր մայրիկիս մոտ, ով ցցի Երեխաների միության նախագահն էր, և ասում էր. «Այդ Ռոնի Ռասբենդը համառ փոքրիկ տղա է»: «Բայց նրանք երբեք չէին դադարում ինձ սիրելուց: Նրանք ինձ շատ էին սիրում և միշտ նորից կանչում դասարան»:[2]

Ռոնի մանկությունը կենտրոնացած էր Եկեղեցու վրա՝ ծխի ժողովների, ծխի երեկույթների, ծխի ճաշկերույթների և ծխի սպորտային թիմերի: Երբ նա զբաղված չէր լինում Քաթնհուդի Առաջին Ծխի ժողովատանը, ապա կատարում էր պատահական աշխատանքներ, անում սկաուտական միջոցառումներ և ժամանակ անցկացնում ընկերների հետ: Տանը ընտանիքի ժամանակը կենտրոնացած էր սուրբ գրությունների, խաղերի և տնային գործերի վրա:

«Հայրս իր օրինակով ուսուցանել է ինձ, թե ինչ բան է աշխատանքը», - ասում է նա: «Մայրս աշխատանքի մասին սովորեցրել է, որ պիտի անեմ այն ինքնուրույն»:

Ռոնի հայրը վարում էր հաց առաքող մեքենա, ամեն առավոտ արթնանում էր 4-ին ու տուն գալիս ուշ երեկոյան: Նրա մայրը մնում էր տանը և մեծացնում երեխաներին, հավելելով ընտանիքի եկամուտը ճենապակյա ժանյակավոր տիկնիկներ պատրաստելով ու վաճառելով:

Ռոնի՝ ղեկավարելու,

ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒՍՄՈՒՆԴՐԵԼ Է ՈՒՍԱԲԵՆԴՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՆՇՎԱԾ ՉԷ:

Ամուսնության սկզբից Երեց և Քույր Ռասբենդները առաջին տեղում դրել են Տիրոջը: Ամուսնանալով 1973 թվականի սեպտեմբերի 4-ին (ներքևում), նրանք ի վերջո օրհնվեցին չորս դուստրերով և մի որդիով (վերևում): Դիմացի էջ՝ Ջոն Հանսման Ավագ, Երեց Ռասբենդի նախկին գործընկեր և ուսուցիչ, Երեց Ռասբենդին կոչում է «եռանդուն անձնվիրությամբ տաղանդավոր ղեկավար»:

հանձնարարելու և արագ գործելու բնածին կարողությունը, որ պիտի օգնեին նրան իր մասնագիտական և եկեղեցական պարտականություններում, ի հայտ եկան վաղ տարիքից:

«Ռոնին հանձնարարում էին կտրել սիզամարգի խոտը», - հիշում է քույրը: Բայց Ռոնը, ինչպես Մարկ Տվենի Թոմ Սոյերը, համոզելու ձիրքի շնորհիվ, ընկերներին էր տալիս այդ գործն անելու:

«Դուրս կնայեր ու կտեսներ, որ իր լավ ընկերն արդեն հնձում էր խոտը իր փոխարեն», - ասում է Նենսին: «Հաջորդ շաբաթ մեկ ուրիշ ընկեր էր կտրում խոտը: Նա պարզապես նստում էր դռնամուտքին և ծիծաղում ու կատակում, մինչ նրանք անում էին իր աշխատանքը»:

Ռոնի ծնողները ֆինանսական մաքառումների մեջ էին, բայց ընտանիքն ապրում էր ավետարանով: «Մենք երբեք շատ փող չենք ունեցել, - հիշում է Ռոնը, - բայց դա երբեք չի անդրադարձել իմ երջանկության վրա»:

Հուսալի ընկերներ ու ղեկավարներ

Պատանեկության տարիներին նա օրհնված էր լավ ընկերներով ու վստահելի քահանայության ղեկավարներով, որոնց թվում էր Ջեյմս Ե. Ֆաուստը (1920–2007), ով Ռոնի պատանեկության տարիներին ցցի նախագահն էր 14 տարի, իսկ հետո հաջորդաբար ծառայեց Տասներկու Առաքյալների Քվորումում և Առաջին Նախագահությունում: Ռոնի ընտանիքը մոտ հարաբերությունների մեջ էր Նախագահ Ֆաուստի և նրա ընտանիքի հետ: «Նա ինձ միշտ կոչում էր Քաթնհուդի իր տղաներից մեկը, քանի որ օգնել էր մեծացնել ինձ», - ասում է նա:

Ավագ դպրոցում Ռոնը ժամանակ չուներ սպորտով զբաղվելու, քանի որ միշտ աշխատում էր, բայց ժամանակ էր գտնում հավատարիմ ընկեր լինելու համար, որը շարունակվեց ողջ կյանքում:

«Ես միշտ հիացել եմ Ռոնով այն բանի համար, թե ով է նա, բայց նա կատարյալ չէր», - ասում է մանկության ընկեր Քրեյգ ՄակՔլերին: Ապա ժպտալով ավելացնում է. «Ես ասել եմ նրան, որ երբ նա գնա երկինք, ես նույնպես կգնամ, քանի որ մեծանալիս մենք միշտ արել ենք նույն բաները»:

Ռոնը մեկնեց միսիայի 1970 թվականի սկզբում, բայց Քրեյգը մտածում էր հետաձգել միսիոներական ծառայությունը՝ մինչ աշնանային որսի սեզոնի ավարտը: Հենց այդ ժամանակ Ռոնը զանգահարեց նրան միսիայից:

«Ես չգիտեմ, թե նա ինչպես էր զանգելու թույլտվություն ստացել, բայց խիստ հանդիմանեց ինձ, որ ես ավելի ոգևորված չէի միսիա գնալ անմիջապես», - ասում է Եղբայր ՄակՔլերին: «Իհարկե, ես չհետաձգեցի այն»:

Ռոնն իր միսիան կոչում է «աներևակայելի» փորձառություն: «Տերն օրհնեց ինձ շատ հրաշալի, հավատը խթանող փորձառություններով», - ասում է նա: «Իմ միսիան մեծ նշանակություն ունեցավ իմ հոգևոր կյանքում»:

Իր միսիայի մի մասը Ռոնն անցկացրեց Բերմուդյան կղզիներում: Նրա միսիայի նախագահը՝ Հարոլդ Նեփի Վիլկինսոնը, այնտեղ էր ուղարկում միայն «ազնիվ ու շիտակ միսիոներներին», քանի որ նա հազվադեպ էր կարողանում այցելել նրանց:

«Մենք բոլորովին մենակ էինք, բայց նախագահը կարող էր չանհանգստանալ մեզ համար», - հիշում է Ռոնը: «Մենք մեր գործը կատարում էինք»:

Դելտա Ֆիի «Երազանքի աղջիկը»

1972 թվականին միսիան ավարտելուց հետո Ռոնը աշխատանք գտավ, այդ աշուն ընդունվեց Յուտայի Համալսարան և միացավ Դելտա Ֆի Կապպային՝ վերադարձած միսիոներների համայնքին: Համայնքի սոցիալական միջոցառումների ժամանակ նա նկատեց մի հմայիչ երիտասարդ կնոջ Մելանի Թուիշել անունով: Մելանին Դելտա Ֆիի ընտրյալ «երազանքի աղջիկներից» էր, ով օգնում էր կազմակերպել համայնքի ծառայության միջոցառումները:

Ինչպես Ռոնը, Մելանին նույնպես Վերջին Օրերի Սրբերի ակտիվ ընտանիքից էր: Նրա հայրը՝ գործող զինվորական մի սպա, և նրա մայրը երբեք թույլ չէին տալիս, որ ընտանիքի հաճախակի տեղափոխությունները պատրվակ ծառայեին եկեղեցուց բացակայելու համար:

Մելանին տպավորված էր Ռոնի բարությամբ, բարեկրթությամբ և ավետարանի իմացությամբ: «Ես ասացի ինձ. «Նա այնպիսի զարմանալի մարդ է, որ նշանակություն չունի, նույնիսկ, եթե ես նրա հետ երբեք չժամադրվեմ: Ես պարզապես ուզում եմ լինել նրա լավագույն ընկերը»»:

Երբ նրանց հարաբերությունները խորանում էին, Հոգին հաստատում էր Ռոնի մասին նրա ստացած տպավորությունը և Տիրոջ հանդեպ վերջինիս ունեցած պարտականությունը: Շուտով նրանց ընկերությունը ծաղկեց ու վերաճեց «գրքային կամ կախարդական հեքիաթի սիրավեպի», ինչպես Մելանին է այն կոչում:

Երեց Ռասբենդն ասում է, որ Մելանին կատարյալ թեկնածու էր: «Մելանին ինձ կատարելապես հավասար էր ավետարանին ու ժառանգությանն իր նվիրվածությամբ: Մենք դարձանք լավագույն ընկերներ և այդ ժամանակ էր, որ ես խնդրեցի նրան ամուսնանալ ինձ հետ:

Նրանք ամուսնացան 1973 թվականի դեկտեմբերի 17-ին, Սոլթ Լեյքի Տաճարում: Այդ ժամանակից ի վեր նա ասում է, որ իր «անշահախնդիր հավերժական զուգընկերը . . . օգնել է ձուլել իրեն՝ ինչպես կավագործի կավը, դարձնելով Հիսուս Քրիստոսի ավելի հոկված մի աշակերտ: Նրա սերն ու աջակցությունը, նաև մեր 5 երեխաների, նրանց կանանց ու ամուսինների, մեր 24 թոռների աջակցությունը սատարում են ինձ»:[3]

«Եկեք գնանք»

Երբ Ռոնը ծառայում էր որպես երեցների քվորումի նախագահ իր ամուսնացած ուսանողների ծխում, նա ծանոթացավ Ջոն Հանսման Ավագի՝ ծխի բարձրագույն խորհրդի խորհրդականի հետ: Ջոնին անմիջապես տպավորեց այն եղանակը, որով Ռոնը ղեկավարում էր քվորումը:

«Նա ուներ ղեկավարելու և կազմակերպչական անհավանական հմտություններ», - վերհիշում է Երեց Հանսմանը, ով որպես Տարածքային Յոթանասունական ծառայեց 1996-2011 թվականներին: «Ես կարծում էի, որ անսովոր է, որ երիտասարդ տղամարդը, ով դեռ սովորում է քոլեջում, կարող էր այդ ձևով ղեկավարել քվորումը»:

Մի քանի ամիս Ջոնը հետևում էր, թե Ռոնը ինչպես էր գաղափարները կյանքի կոչում, երբ ավարտում էր քահանայության պարտականությունները: Երբ ավագ մարքետոլոգի մի պաշտոն բացվեց Ջոնի ընկերությունում, որը հետո պիտի դառնար Հանսմանի Քիմիական Կորպորացիա, նա եզրակացրեց, որ Ռոնն ուներ այն հմտությունները, որ ինքը փնտրում էր, և առաջարկեց նրան այդ աշխատանքը: Նա պիտի աշխատանքի անցներ հաջորդ շաբաթ Օհայոյում (ԱՄՆ):

«Ես ասացի Մելանիին. «Ես չեմ պատրաստվում թողնել քոլեջը և տեղափոխվել», - պատմում է Ռոնը: «Ես աշխատել եմ իմ ողջ կյանքում, որպեսզի ավարտեմ քոլեջը, և, ի վերջո, ես մոտ եմ իմ նպատակին»:

Մելանին հիշեցրեց Ռոնին, որ լավ աշխատանք գտնելը այն նպատակն էր, որի համար նա քոլեջում էր:

«Ինչի՞ համար ես դու անհանգստանում», հարցրեց նա: «Ես գիտեմ ինչպես հավաքել իրերս ու տեղափոխվել: Ես արել եմ այդ իմ ողջ կյանքում: Ես թույլ կտամ, որ դու զանգես քո մայրիկին ամեն երեկո: Արի գնանք»:

Ջոնի վստահությունը Ռոնի հանդեպ արդարացավ: Ջոնի հովանավորությամբ Ռոնը արագ առաջ գնաց աճող ընկերությունում, 1986 թվականին դառնալով դրա նախագահը և գլխավոր գործադիր տնօրենը: Նա շատ էր ճամփորդում ընկերության գործերով երկրի ներսում և արտասահմանում: Չնայած իր զբաղված գրաֆիկին, Ռոնն աշխատում էր տանը լինել հանգստյան օրերին: Իսկ ճամփորդելիս նա երբեմն ընտանիքի անդամներին վերցնում էր իր հետ:

«Երբ նա տանն էր, այնպես էր անում, որ երեխաներն իրենց իրոք սիրված ու կարևոր զգային: Նա մասնակցում էր նրանց միջոցառումներին և սպորտային իրադարձություններին, երբ կարողանում էր: Ջենեսսա Մակֆերսոնը՝ զույգի չորս դուստրերից մեկը, ասում է, որ իր հոր կիրակնօրյա եկեղեցական պարտականությունները հաճախ նրան հնարավորություն չէին տալիս

Եկեղեցու ժողովների ժամանակ նստել ընտանիքի կողքին:

«Մենք կռվում էինք, թե ով պիտի նստեր նրա կողքին եկեղեցում, քանի որ նա հազվադեպ էր այնտեղ լինում», - ասում է նա: «Հիշում եմ՝ ինչպես էի ձեռքս դնում նրա ձեռքի մեջ և ինքս ինձ մտածում. «Եթե միայն ես կարողանայի սովորել նրա նման լինել, ես կլինեի ճիշտ ուղու վրա և ավելի կնմանվեի Փրկիչին»: Նա միշտ իմ հերոսն էր»:

Զույգի որդին՝ Քրիստիանը, վերապրում է «հայր և որդի ժամանակի» քնքուշ հիշողությունները: Ընկերները գալիս ու գնում էին ընտանիքի հաճախակի տեղափոխությունների պատճառով, ասում էր նա, «բայց իմ հայրը միշտ իմ լավ ընկերն էր մնում», թեև մրցակցային:

Դա լիներ բասկետբոլի խաղ Քրիստիանի հետ, թե սեղանի խաղեր դուստրերի հետ, թե ձկնորսություն ընտանիքի ու ընկերների հետ, Ռոնը միշտ սիրում էր հաղթել:

«Մինչ մենք մեծանում էինք, նա երբեք *թույլ* չէր տալիս, որ որևէ մեկը հաղթեր», - ասում է Քրիստիանը: «Մենք պիտի վաստակեինք այդ հաղթանակը, բայց դա մեզ ավելի լավն էր դարձնում: Եվ ավանդույթը շարունակվում է նրա սիրելի թոռնիկների հետ»:

Տարիների ընթացքում Ռոնի ընտանիքը նկատում էր, թե Եկեղեցու ղեկավարությունում ծառայելն ինչպես էր բազմապատկում նրա՝ սեր ու գթություն ցուցաբերելու, հոգու զգացմունքներն արտահայտելու և ուրիշներին ոգեշնչելու կարողությունը: Երբ ծնվեց Ռոնի և Մելանիի թոռնիկ Փաքստոնը, ընտանիքը ամբողջովին ապավինեց Ռոնի հոգևոր ուժին և աջակցությանը:

Փաքստոնը ծնվել էր հազվագյուտ գենետիկ արատով և տառապում էր բազմաթիվ առողջական խնդիրներից, որոնք ընտանիքը ենթարկում էին ֆիզիկական, հոգևոր և զգացմունքային փորձությունների: Ուղևորությունը, որը հաջորդեց Փաքստոնի ծնունդին, Երեց Ռասբենդն անվանեց «դաժան փորձություն՝ սովորելու հավերժությունների հետ կապված հատուկ դասեր»:[4]

Երկրի վրա Փաքստոնի կյանքի երեք կարճ տարիների ընթացքում, երբ հարցերն ավելի շատ էին, քան պատասխանները, Երեց Ռասբենդը կանգնած էր որպես հոգևոր սյուն, առաջնորդելով իր ընտանիքի ընթացքը Հիսուս Քրիստոսի Քավության զորությամբ:

Նրա նոր կոչման հայտարարությունը չզարմացրեց ընտանիքի մի քանի անդամներին և ընկերներին: «Մեզանից նրանք, ովքեր նրան բոլորից լավ էին ճանաչում,- ասում է Քրիստիանը-, մեր ձեռքերը բարձրացրինք ամենից վեր, երբ աջակցում էինք նրան որպես Առաքյալ»:

«Ես կգնամ ծառայելու»

1996 թվականին 45 տարեկանում Ռոնն իր հաջող կարիերայի կեսին կանչվեց ծառայելու որպես միսիայի նախագահ Նյու Յորքի Հյուսիսային Միսիայում: Ինչպես հին ժամանակների Առաքյալները,

Ամենավերևում՝ Երեց և Քույր Ռասբենդները Եկեղեցու անդամների հետ Հնդկաստանի Նոր Դելի քաղաքում 2015 թվականի նոյեմբերին: Վերևում՝ Երեց և Քույր Ռասբենդները Նյու Յորք Սիթիում՝ որպես միսիայի նախագահ նրա ծառայության ընթացքում՝ 1996–99 թվականներին իրենց թոռնիկ Փաքստոնի հետ, ով օգնեց ընտանիքին սովորել «հատուկ դասեր՝ կապված հավերժությունների հետ», նաև Սակրամենտո Կալիֆորնիա Տաճարի հիմնարկեքի արարողության ժամանակ:

նա «շուտով իրանց [իր] ուռկանները թողած» (Մատթեոս 4.20):

«Կանչն ընդունելը ընդամենը մի ակնթարթ խլեց», - ասում է Երեց Ռասբենդը: Նա ասաց Տիրոջը. «Դու ուզում ես, որ ես գնամ ծառայելու, ես կգնամ»:

Ռոնն իր հետ տարավ մի մեծ դաս, որը նա սովորել էր իր մասնագիտական փորձից. «Մարդիկ ավելի կարևոր են, քան մնացած ամեն բան»:[5] Այդ գիտելիքով և ղեկավարելու իր հղկված հմտություններով նա պատրաստ էր սկսել լիաժամկետ ծառայությունը Տիրոջ արքայությունում:

Ռոնն ու Մելանին միսիոներական աշխատանքը Նյու Յորք Սիթիում համարում էին թե դժվար, թե զորացնող: Ռոնը միսիոներներին պատասխանատվություններ էր տալիս՝ ոգևորելով նրանց հավատարմությունը և ուսուցանելով, կառուցելով ու ընթացքում աջակցելով նրանց:

2000 թվականին, երբ Ռոնն ու Մելանին ավարտեցին իրենց միսիան, Ռոնը կանչվեց որպես Յոթանասունական, որտեղ նրա պատրաստվածությունը, փորձը և շատ այլ տաղանդներ օրհնեցին Եկեղեցին: Որպես Յոթանասունի Քվորումի անդամ նա ծառայեց որպես խորհրդական Կենտրոնական Եվրոպայի տարածաշրջանի նախագահությունում, օգնելով վերահսկել աշխատանքը 39 ազգերի մեջ: Չնայած նա ավարտել է քոլեջը ավելի քան 40 տարի առաջ, նա մնացել է լուրջ ուսանող, ընդունելով շարունակական ուսուցումը իր ավագ Եղբայրների կողմից, վերահսկելով Հյուսիսային Ամերիկայի արևմտյան, հյուսիս-արևմտյան և Յուտայի երեք տարածքները, ծառայելով որպես Տաճարային Բաժնի գործադիր տնօրեն, ապա Յոթանասունի Նախագահությունում՝ սերտորեն աշխատելով Տասներկու Առաքյալների հետ:

Վերջերս Երեց Ռասբենդը նշել է. «Ինչպիսի մեծ պատիվ և արտոնություն է ինձ համար լինել ամենափոքրը Տասներկու Առաքյալների թվում և սովորել նրանցից ամեն եղանակով և ամեն առիթով»:[6]

«Ինչ որ նրանք գիտեին, ես գիտեմ»

Երկու նկարներ զարդարում են Երեց Ռասբենդի գրասենյակի պատերը: Մեկում մորմոն միսիոներները Դանիայում ուսուցանում են մի ընտանիքի 1850-ականներին: Երկրորդում վաղ շրջանի միսիոներ Դեն Ջոնսը Բրիտանական կղզիներում քարոզում է ջրհորին ամրացված պատվանդանին կանգնած: Նկարները (վերևում աջից) Երեց Ռասբենդին հիշեցնում են իր սեփական նախնիների մասին:

«Այս վաղ շրջանի պիոներները իրենց ամեն ինչը տվեցին Հիսուս Քրիստոսի ավետարանին և թողեցին ժառանգություն, որին իրենց սերունդները պիտի հետևեն», - վկայել է նա:[7] Այն, ինչն առաջ մղեց Երեց Ռասբենդի նախնիներին ձախորդության ու հալածանքի մեջ, ամենաշատն է նրան իրավունք տալիս իր նոր կոչման համար՝ գիտելիքն ու ամուր վկայությունը Տիրոջ և Նրա աշխատանքի մասին:

«Ես այնքան շատ բան ունեմ սովորելու իմ նոր կոչման մեջ», - ասել է նա: Ես ինձ շատ խոնարհ եմ զգում այդ առումով: Բայց իմ կոչման մեջ կա մի նպատակ, որը ես կարող եմ անել: Ես կարող եմ բերել «Քրիստոսի անվան հատուկ վկայությունը ողջ աշխարհում» (ՎԵՈՒ 107.23): Նա ապրում է»:[8]

Որպես պիոներների ծոռների հետնորդ նա ավելացնում է. «Ինչ որ նրանք էին զգում, ես եմ զգում: Ինչ որ նրանք գիտեին, ես գիտեմ»:[9]

Եվ ինչ հույս, որ նրանք ունեին իրենց սերունդներից, մարմնավորված է Ռոնալդ Ա. Ռասբենդի կյանքում, ուսմունքներում և ծառայության մեջ, ով հետևում է նրանց օրինակին և մեծարում նրանց ժառանգությունը՝ որպես Տիրոջ հատուկ վկա առաջ ընթանալիս: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ռոնալդ Ա. Ռասբենդ, «Ես մնում եմ զարմացած» *«Լիահոնա»* նոյեմբեր 2015, 89:
2. Ronald A. Rasband, “Friend to Friend: Golden Nuggets,” *Friend,* Oct. 2002, 8.
3. Ռոնալդ Ա. Ռասբենդ, «Ես մնում եմ զարմացած», 89:
4. Ռոնալդ Ա. Ռասբենդ, «Հատուկ դասեր», *Լիահոնա* մայիս 2012, 80:
5. Ronald A. Rasband, press conference, Oct. 3, 2015.
6. Ronald A. Rasband, testimony, Priesthood and Family Department devotional, Dec. 1, 2015.
7. Ռոնալդ Ա. Ռասբենդ, «Ես մնում եմ զարմացած», 89:
8. Ռոնալդ Ա. Ռասբենդ, վկայություն:
9. Ronald A. Rasband, Pioneer Day address, Tabernacle, Salt Lake City, July 24, 2007.

ՎԵՐԻՇՈՒՄ ՇԱԽԻՑ՝ ԼՈՒՍԱՆԿԱՐ ՀԻՆԴԻ ՔՐԻԼԵՐԻ, ԱՋԻՑՄՈՄՈՆ, ՔՈՐԵՑՈՒՄՆԵՐԻ, ՄԻԱՐՈՒԹՅԱՆ, ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՆԱԽՆԻՆԵՐԻ ՖՐԱՆՖԵՐԳԻ ԿՈՂՄՈՒՑ (ՀՈՒՍԻՍԱՅԻ ՊԱՆՊԳԱՄՐԻ ՆԿԱՐԻ ԿՐԵԱ, 1856), ԴԵՆ ՋՈՆՍ ՕԳԵՆՍ ՈՒՆԵՑԱՎ, ՔԱՐՈԶ ԹԵԼԼԻ ԹՐՈՒՅԹ

Քանի որ տարիներ առաջ ես ակտիվ չէի եղել, այդ տարիներին ինձ ճանաչող մի անդամ չէր հավատում, որ ես կանչվել էի որպես եպիսկոպոս:

Պատրիկ Ջ. Քրոնին III

Քահանայության գործադիր հանձնախմբի ժողովին մեր լիաժամկետ միսիոներները զեկուցեցին, որ հանդիպել են մի անդամի, ում գրանցումը մեր ծխում չէր: Ես անմիջապես հիշեցի այդ անունը և նշեցի, որ տարիներ առաջ ես և նա եղել ենք նույն ծխում:

Միսիոներներից մեկն ասաց. «Այո, եպիսկոպոս, նա հիշեց և շատ ապշած էր, որ դուք եք եպիսկոպոսը»:

Ես հարցրեցի նրանց. «Ի՞նչ ասաց նա»:

Նրանք ասացին, որ նա զարմացել էր և ասաց. «*Նա՞ է* եպիսկոպոսը»:

Ես ծիծաղեցի և բացատրեցի, որ այդ քույրը ինձ որպես այլ անձնավորություն գիտեր 30 տարի առաջ:

Հետագայում այդ մասին խորհելիս մտածեցի, թե որքան էր փոխվել իմ կյանքն այս 30 տարիների ընթացքում, երբ ես և իմ ընտանիքը անդամներ էինք: Ես շատ անդամների եմ ճանաչել մեր ծխում, ծառայել եմ որպես ճյուղի նախագահ և եպիսկոպոս, սակայն այդ անդամներից ոչ մեկը ինձ չէր ճանաչում 30 տարի առաջ: Թեպետ ապաշխարության և Հիսուս Քրիստոսի Քավության մասին ուսուցանելիս ես երբեմն պատմել եմ իմ անցյալից որոշ դեպքերի մասին, սակայն ծխի մեծ մասը չգիտեր, թե ինչպիսի աներևակայելի ուղի եմ անցել Եկեղեցում:

Ես և մեր ընտանիքը ծանոթացանք Եկեղեցուն 1979թ. մայիսին, և ես անմիջապես հասկացա, որ մենք այստեղ էիք պատկանում: Մենք մկրտվեցինք հունիսին, և սկզբում բոլորս ակտիվ էինք, սակայն շատ չանցած ես դադարեցի եկեղեցի հաճախել և վերադարձա իմ հին սովորություններին: Ես երբեք որևէ կասկած չէի ունեցել ավետարանի ճշմարտացիության և Վերականգնման մասին, սակայն կարծում էի, որ չունեի Եկեղեցու լավ անդամ լինելու համար անհրաժեշտ գծերը:

1982թ. դեռևս շարունակում էի չարաշահել ալկոհոլը, և կինս, ով երբեք չէր թերացել իր հավատքում, դիմեց ամուսնալուծության համար: Այդ ժամանակ իմ ընտանիքն ապրում էր Օկլահոմայում, ԱՄՆ, բայց ես վերադարձել էի Իլինոյս, որտեղ մեծացել էի: Ես հասել էի այն կետին, որ կորցնում էի իրոք ինձ համար միակ կարևոր բանը՝ իմ ընտանիքը:

Սկսեցի գիշեր ու ցերեկ ծնկաչոք աղոթել Աստծուն, որի գոյությանն այլևս չէի հավատում, իսկ եթե Նա կար, ես կարծում էի, Նա շատ վաղուց արդեն մոռացել էր ինձ: Ինչևէ, երեք ամիս ես հավատքով աղոթեցի: Մի օր վաղ առավոտյան, երբ խորը աղոթքի մեջ էի, մի հրաշալի հոգեթով զգացում պարուրեց ինձ, և ես իմացա, որ Աստված ապրում է, որ Նա ճանաչում և սիրում է ինձ: Ես նաև իմացա, որ այլևս ալկոհոլի ոչ մի կաթիլ իմ բերանը չէր գնալու:

Հենց այդ երեկոյան ինձ զանգեց կինս և տեղեկացրեց, որ պատրաստվում էր փոստով ուղարկել ամուսնալուծության թղթերը, որպեսզի ես ստորագրեի: Այդ զրույցի ժամանակ նա հանկարծ ասաց. «Մի առանձնահատուկ բան եմ զգում քո մեջ: Չեմ հավատում, որ այլևս չես խմելու, և ես պատռելու եմ այս թղթերը»: Մենք վերամիավորվեցինք, և երկու տարի անց նա լույս աշխարհ բերեց մեր երրորդ որդուն:

Նա՞է ԵՊԻՍԿՈՊՈՍԸ՝

Գուցե ենթադրեք, թե լիարժեք ակտիվ անդամ դարձա Եկեղեցում, բայց ես կամակոր մարդ եմ: Վերադարձա եկեղեցի մի որոշ ժամանակով և նույնիսկ կանչվեցի որպես երեցների քվորումի ուսուցիչ: Սակայն շուտով սկսեցի ուսուցանելու համար ինձ անհամապատասխան զգալ և կրկին ոչ ակտիվ դարձա:

1991թ. մենք տեղափոխվեցինք մի փոքր ճյուղ: Նախքան մեր փոքր որդու ութ տարին կլրանար, կինս, որը Երեխաների Խմբի նախագահն էր, հարցրեց նրան, թե ում կուզենար, որ կատարեր իր մկրտությունը: Իհարկե, նա ցանկացավ, որ իր հայրը կատարեր այդ արարողությունը: Կինս ասաց նրան, որ հավանաբար դա տեղի չէր ունենա: Որդիս չընդունեց այդ պատասխանը և հայրիկին ակտիվացնելու խնդիր դրեց իր առջև: Նա բավական անխոնջ էր, և շատ կարճ ժամանակ անց ես արդեն ծառայում էի որպես սկաուտների ղեկավար, իսկ ավելի ուշ մկրտեցի և հաստատեցի որդուս:

Ակտիվ դառնալուն հաջորդող ութ ամիսները հագեցած էին: Մենք որպես ընտանիք կնքվեցինք Չիկագո Իլինոյս տաճարում, և ես կրկին կանչվեցի ծառայելու որպես երեցների քվորումի ուսուցիչ, միայն թե այս անգամ անձնատուր չեղա: Այնուհետև կանչվեցի որպես ճյուղի նախագահության խորհրդական, իսկ հինգ ամիս անց կանչվեցի ծառայելու որպես ճյուղի նախագահ: Իմ կանչվելուց մեկ ամիս անց հիշում եմ՝ ես մտածում էի. «*Ես* ճյուղի նախագա՞հ»:

Տարիներ շարունակ ասում էի բազմաթիվ մաքառող Սրբերին, որ եթե ես կարողանում եմ առաջադիմել ավետարանում, ուրեմն ամեն ոք կարող է: Պետք է պարզապես ճիշտ ընկալել Փրկչի և Նրա Քավության բուն զորությունը և քայլեր ձեռնարկել Նրա մոտ գալու համար:

Ի վերջո, ես երախտապարտ եմ կնոջս ու երեխաներիս, բոլոր հավատարիմ տնային ուսուցիչներին, քվորումի ղեկավարներին, եպիսկոպոսներին և այլ հավատարիմ Սրբերին, ովքեր հրաշալի օրինակ են ծառայել ինձ համար: Ինձ համար պատիվ է եղել ծառայել Տիրոջը և Սրբերին այս վերջին 20 տարում: Իմ կյանքն օրհնվել է առավել, քան կարող էի պատկերացնել: ■

Հեղինակն ապրում է Իլինոյսում, ԱՄՆ:

ՆԱՄՈՒԱՅԼՈՒՄԸ՝ ՄԱՐԿ ՍՄԻԹԻ © 2016

ՍՈՒՐԲԳՐՔՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ.

Սրտին հասանելի լեզվով

Այդ փորձառությունները ծանոթ են նրանց, ովքեր ներգրավված են եղել անգլերենից այլ լեզուներ սուրբ գրությունների թարգմանության մեջ: Դրանք տեղի են ունենում կրկին ու կրկին:

Մի հայ երիտասարդ, ձեռքում բռնած Մորմոնի Գիրքը, որը նոր էր թարգմանվել իր լեզվով, մոտենում է խմբի անդամներից մեկին, որն օգնել է թարգմանել այն: «Շնորհակալություն»,- ասում է նա: «Ես կարդացել եմ Մորմոնի Գիրքը անգլերեն: Ես կարդացել եմ Մորմոնի Գիրքը ռուսերեն: Ես կարդացել եմ Մորմոնի Գիրքը ուկրաիներեն: Սակայն ես չէի կարողանում իրականում հասկանալ այն, մինչև որ հնարավորություն ունեցա կարդալ հայերեն լեզվով: Երբ կարդացի հայերեն, այն ի վերջո հասկանալի դարձավ: Դա նման էր տուն վերադառնալուն»:

Տուն վերադառնալ

Եթե Հիսուս Քրիստոսի ավետարանը մեր հոգևոր տունն է, ապա պետք է, որ այն հարմար և ծանոթ լինի մեզ: Տանը մենք հանգստանում ենք: Մենք սնուցում ենք մեզ: Մեր սիրելիների հետ խոսում ենք այն լեզվով, որը սովորել ենք մեր մոր ծնկների վրա: Դա մեր սրտի լեզուն է, և քանի որ ավետարանը պիտի սրտին հասնի, շատ կարևոր է, որ մենք կարդանք սուրբ գրությունները մեր սրտի լեզվով:

Վարդապետություն և Ուխտերում խոսվում է այդ մասին: Այնտեղ Տերը հայտնում է, որ քահանայության բանալիների միջոցով, որ կրում է Առաջին Նախագահությունը, «Տիրոջ բազուկը կհայտնվի զորությամբ՝ համոզելու ազգերին . . . իրենց փրկության ավետարանի մասին:

Քանզի այդ օրը կլինի այնպես, որ ամեն մարդ կլսի ավետարանի

ԱՆԹԻՎ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԿՆՀԱՅՏ ԵՆ ԴԱՐՁՆՈՒՄ ՏԻՐՈՋ ՁԵՌՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ:

Ռ. Վալ Ջոնսոն
Եկեղեցու ամսագրեր

ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ԱՌՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՊՈՐՏՈՒԳԱԼԵՐԵՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԴԱՄԲԵՐԸ, ԸՍՏ ԼՈՒՐՍ ՍՐԹԳՐ, *DESERET NEWS*

Սուրբ գրություններն ավելի հզոր ազդեցություն են ունենում սրտի վրա, երբ մենք այն կարդում ենք մեր մայրենի լեզվով՝ մեր սրտի լեզվով։

Մորմոնի Գիրքն ամբողջությամբ տպագրվել է 89 լեզուներով, իսկ ընտրված մասերը թարգմանվել են ևս 21 լեզուներով:

լրիվությունն իր լեզվով՝ իր մայրենի լեզվով, նրանց միջոցով, ովքեր կարգված են այդ զորությանը, Մխիթարիչի սպասավորությամբ, որը կթափվի նրանց վրա Հիսուս Քրիստոսի հայտնության համար» (ՎևՈւ 90.10–11):

Ջիմ Ջուլը, ով աշխատում էր Եկեղեցու գլխավոր վարչության սուրբ գրությունների թարգմանության թիմում, պատմում է, թե որքանով կարող են սուրբ գրությունները մոտ գալ տանը, երբ թարգմանված են սրտի լեզվով.

«Երբ Մորմոնի Գիրքը թարգմանվում էր սեսոտո լեզվով, լեզու, որով խոսում են Աֆրիկայի լեսոտո ազգում, մենք պետք է գտնեինք մեկին, ով կօգներ մեզ գնահատել թարգմանչական խմբի աշխատանքը: Ծրագրի ղեկավարը՝ Լերի Ֆոլեյը, ներկայացրեց Եկեղեցու մի անդամի Լեսոտոյից, ով ավարտել էր Յուտա Նահանգի Համալսարանը: Լեսոտոյում կրթությունը տրվում է անգլերեն լեզվով, ուստի այս կինը և նրա երեխաները սովորում էին անգլերեն լեզվով, սակայն նրանք տանը խոսում էին սեսոտո լեզվով:

Նա համաձայնվեց աշխատել թարգմանության վրա: Նրա գնահատականն իսկապես օգտակար եղավ այն գլուխների վերաբերյալ, որոնք ուղարկվել էին իրեն: Մենք պարբերաբար ներկայացնում էինք կոնկրետ հարցեր բառապաշարի և լեզվային կառուցվածքի վերաբերյալ, որոնց հետ կապված նա օգտակար մեկնաբանություններ էր կատարում: Այնուամենայնիվ, մենք նկատեցինք, որ նա դեղինով նշել էր բազմաթիվ հատվածներ, որոնք կապված չէին մեր հարցերի հետ: Երբ մենք հարցրինք նրան ընդգծված հատվածների մասին, նա ասաց. «Օ՜հ, դրանք այն հատվածներն են, որոնք խորապես դիպչել են իմ սրտին, որոնք ես չէի կարողացել լավ հասկանալ անգլերենով: Ես ընդգծել եմ դրանք, որպեսզի կարողանամ կիսվել իմ երեխաների հետ»:

Սուրբ գրությունների թարգմանության օրինակ

Աստվածաշնչի թարգմանությունն ունի երկար և հետաքրքիր պատմություն, որը սկսում է Հին Կտակարանի որոշ մասերի եբրայերենից հունարեն թարգմանությամբ: Ավելի ուշ Աստվածաշունչը հունարենից թարգմանվեց լատիներեն, իսկ լատիներենից, եբրայերենից ու հունարենից թարգմանվեց անգլերեն և մի շարք այլ լեզուներով:[1] Արդյունքում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստվածաշունչը չի թարգմանում տարբեր լեզուներով, այլ ընդունում է քրիստոնյաների կողմից տվյալ լեզուներով արդեն իսկ որպես հեղինակություն ընդունված տարբերակները:[2]

Ուստի, Եկեղեցու կողմից կատարվող սուրբ գրությունների թարգմանության աշխատանքների մեծամասնությունը վերաբերում է Մորմոնի Գրքին (որն առաջինն է թարգմանվում),

«ՔԱՆԶԻ . . . ԿԼԻՆԻ ԱՅՆՊԵՍ, ՈՐ ԱՄԵՆ ՄԱՐԴ ԿԼՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԼՐԻՎՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԼԵԶՎՈՎ՝ ԻՐ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎՈՎ, ՆՐԱՆՑ ՄԻՋՈՑՈՎ, ՈՎՔԵՐ ԿԱՐԳՎԱԾ ԵՆ ԱՅԴ ԶՈՐՈՒԹՅԱՆԸ» (ՎԵՎՈՒ 90.11):

ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Թարգմանության հաստատումը

- Սուրբ գրությունների թարգմանությունը պատվիրվում է Տարածքային Նախագահության կողմից, երբ Եկեղեցու անդամների թիվը, ովքեր խոսում են այդ լեզվով, աճում է, և երբ Եկեղեցու հիմնական նյութերը թարգմանված են այդ լեզվով:
- Պատվերը վերանայվում է Եկեղեցու գլխավոր վարչության մի քանի հանձնախմբերի կողմից՝ ներառելով Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին և Առաջին Նախագահությանը:

Թարգմանության փուլերը

Նախնական փուլ.

- Արդեն իսկ թարգմանված Աստվածաշնչի տարբերակն ընտրվում է Եկեղեցու օգտագործման համար:
- Առաջինը թարգմանվում են հիմնական նյութերը. *Ավետարանի հիմունքները* (ներառում է հիմնական վարդապետությունները, ինչպես նաև Եկեղեցու անունը, հաղորդության աղոթքները, մկրտության աղոթքը և Հավատո Հանգանակը), *Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությունը* գրքույկը և LDS.org վեբ կայքի էջը:
- Գերագույն համաժողովի ելույթները նույնպես կարող են թարգմանվել:

Փուլ 1.

- Մորմոնի Գիրք, Վարդապետություն և Ուխտեր, Թանկագին Մարգարիտ (մոտավորապես 10 տարվա աշխատանք).
- Հիմնադրույթային տեքստերը, ինչպիսին են «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», ընտրված օրհներգեր և «*Քարոզիր իմ ավետարանը*»:

Վարդապետություն և Ուխտերին և Թանկագին Մարգարիտին: Լեզուն, որից այս գրքերը թարգմանվում են, անգլերենն է, այն լեզուն, որով Մարգարե Ջոզեֆ Սմիթը երևան բերեց դրանք՝ նրա սրտի լեզուն: Գործընթացը, որի արդյունքում սուրբ գրությունները թարգմանվում են անգլերենից տարբեր լեզուներով, պետք է ծանոթ լինի ուսանողներին Եկեղեցու պատմությունից: Դա հիմնականում նույն գործընթացն է, որի միջոցով Մարգարեն թարգմանեց Մորմոնի Գիրքը անգլերեն լեզվով:

Ջոզեֆ Սմիթը խոնարհ, հիմնականում անուսում, ագարակում մեծացած տղա էր: Սակայն նա ուներ այն որակները և ներուժը, որոնք անհրաժեշտ էին Տիրոջն այն աշխատանքի համար, որը պետք է կատարվեր: Ջոզեֆը և նրա ընտանիքն իսկապես պատրաստված էին և ճիշտ տեղում էին գտնվում՝ կատարելու այդ աշխատանքը:[3]

Նեփիացիների հիշատակարանները թարգմանելիս Ջոզեֆը նաև աստվածային և մարդկային աջակցություն ստացավ: Մորոնի հրեշտակը չորս տարի շարունակ այցելում էր Ջոզեֆին, մինչև որ թույլ տվեց նրան ձեռք բերել հիշատակարանը: Մենք ամեն բան չգիտենք, թե ինչ ուսուցանեց Մորոնին Մարգարեին, սակայն ակնհայտ է, որ նրա այցելությունները հոգևոր և մտավոր առումներով նախապատրաստեցին նրան՝ իրեն սպասվելիք առաջադրանքը կատարելու համար:[4]

Տերը նաև նախապես պատրաստել էր «մեկնիչներ»՝ որպես հնադարյան լեզվից թարգմանելու միջոցներ: Երկու քարերը՝ արծաթե աղեղների մեջ և նմանատիպ մի գործիք, որը կոչվում էր տեսանողի քար, օգնեցին Մարգարեին թարգմանել Նեփիի հիշատակարանը անգլերեն լեզվով: Մարգարեն չի մանրամասնել գործընթացը. նա պարզապես վկայել է, որ թարգմանել է Մորմոնի Գիրքը «Աստծո պարգևով և զորությամբ»:[5]

Ի լրումն նրան տրված աստվածային աջակցության՝ Ջոզեֆին նաև օգնում էին մարդիկ որպես դպիրներ, ովքեր կազմում էին ձեռագիր տարբերակը, որն էլ ուրիշներն ի վերջո մեքենագրեցին, տպագրեցին, վճարեցին դրա համար և տարածեցին աշխարհում:

Ինչպես Ջոզեֆին նախապատրաստեցին ու աջակցեցին իր թարգմանչական աշխատանքում, այնպես էլ այսօրվա թարգմանիչները, ովքեր լիազորված են թարգմանել սուրբ գրությունները, նախապատրաստվում են Տիրոջ կողմից և իրենց աշխատանքում ստանում թե աստվածային, թե մարդկային աջակցություն:

Հայտնության աշխատանքը

Ճշգրիտ թարգմանչական աշխատանքի գործընթացում ներշնչում ստանալը հավանաբար լավագույնս նկարագրվում է որպես «խորհուրդ հայտնությամբ»: Երկու կամ երեք մարդ, ովքեր ընտրված են որպես թարգմանիչներ, խումբ են կազմում մյուսների հետ՝ կատարելու այս աշխատանքը: Նրանց աշխատանքը ղեկավարվում է Եկեղեցու գլխավոր գրասենյակի կողմից, տեղում ունեն վերանայողներ, բառարանային հղումներ,[6] թարգմանչական ուղեցույցներ, համակարգչային ծրագրեր և հոգևոր առաջնորդություն, որը տանում է մինչև Առաջին Նախագահություն: (Տես կից աղյուսակը:) Երբ Առաջին Նախագահությունը տալիս է վերջնական թույլտվություն, այդ ժամանակ աշխատանքը համակարգչով հավաքվում, տպագրվում և տարածվում է: Պատրաստված լինելով թվային ձևաչափով՝ դրանք նաև տեղադրվում են LDS.org-ում և Ավետարանի գրադարան հավելվածում:

Այս համատեղ ջանքերը պահանջում են և լարում, և ոգեշնչում:

Առավելագույն ուշադրություն է դարձվում բովանդակության և ձևաչափի որակին, ինչպես այն տրված է: Թարգմանությունները վերանայվում են տարբեր մակարդակներում, հատկապես եկեղեցու մակարդակում՝ փնտրելով Տիրոջ հավանությունը: Թարգմանչական աշխատանքը առաջ է ընթանում միայն այն ժամանակ, երբ տրվում է այդ հավանությունը: Թեև հայտնությունները չեն տրվում այնպես, ինչպես Մարգարե Ջոզեֆ Սմիթին տրվեցին Մորմոնի Գրքի թարգմանության ժամանակ, գործընթացը հստակորեն առաջնորդվում է Տիրոջ կողմից՝ Նրա պարգևներով և Նրա զորությամբ:

Սա չի նշանակում, որ թարգմանությունը առաջին իսկ էտապից կատարյալ բնույթ է կրում: Հաճախ ժամանակի և հետագա վերանայումների ընթացքում, որը կատարվում է սուրբ գրություններն ուսումնասիրողների կողմից, խորհուրդ է տրվում բարելավել քերականությունը, բառապաշարը կամ նկատվում են տպագրական կամ ուղղագրական սխալներ: Հազվադեպ է պատահում, որ փոփոխություններ կատարվեն վարդապետության պարզաբանման մեջ: Դա տեղի է ունենում միայն Առաջին Նախագահության ղեկավարության ներքո:

Տերը ապահովում է միջոցներ

Տերը նաև այլ եղանակներով է աջակցում այս թարգմանչական աշխատանքին: Թարգմանչական խումբը սովորաբար զեկուցում է Եկեղեցու գլխավոր գրասենյակին, և անհրաժեշտության դեպքում Տերն ապահովում է միջոցներ:

Ահա բազմաթիվ օրինակներից մեկը. թարգմանչի կարիք կար Եկեղեցու նյութերը մամ լեզվով (մայաների լեզվացեղից, որը կիրառվում է Գվատեմալայում) թարգմանելու և ձայնագրելու համար: Գվատեմալա կանչված առաջին միսիոներներից մեկը մի երեց էր, ում պապիկը խոսել էր մամ լեզվով: Միսիոները մեծացել էր քաղաքում և խոսել էր միայն իսպաներեն: Սակայն նրա պապը ամեն գիշեր այցելում էր իրեն երազներում և սովորեցնում մամ լեզուն: Այս երիտասարդ երեցը դարձավ մամ լեզվի հիմնական թարգմանիչը Եկեղեցում:

Հաճախ թարգմանության աշխատանքը կատարվում է անձնական մեծ զոհաբերության շնորհիվ: Կախված ֆինանսական իրավիճակներից՝ որոշ թարգմանիչներ նվիրաբերում են իրենց ծառայությունը, իսկ ոմանք էլ վճարվում են, որպեսզի նրանք ժամանակ ունենան թարգմանության գործին նվիրվելու համար:

Այն մարդը, ով դարձավ ուրդու լեզվի թարգմանիչներից մեկը, Եկեղեցում դարձի եկավ Պակիստանում, երբ աշխատում էր որպես ուսուցիչ: Դարձի գալու արդյունքում նա կորցրեց իր աշխատանքը, կորցրեց իր տունը, որը նրան տրամադրել էր դպրոցը, որտեղ նա ուսուցանում էր, և նրա երեխաները զրկվեցին կրթություն ստանալու հնարավորությունից: Եկեղեցու թարգմանությունների ղեկավարը հրավիրեց նրան ծառայել որպես թարգմանիչ և առաջարկեց համեստ փոխհատուցում: Մի քանի ամիս որպես թարգմանիչ աշխատելուց հետո այդ մարդը այցելեց ղեկավարին և ամաչելով խնդրեց, որ ղեկավարը մի նոր գնդիկավոր գրիչ առներ իր համար: Նրա գրիչի թանաքը վերջացել էր: Միայն այդ ժամանակ ղեկավարը բացահայտեց և ուղղեց ուղղագրական սխալը, որի արդյունքում թարգմանիչը վճարվեց հասանելիք գումարից շատ ավելի քիչ:

Սակայն, ինչպես Տերն օրհնեց Ջոզեֆ Սմիթին միջոցներով, որոնք թույլ տվեցին նրան ավարտել իր աշխատանքը, Տերն օրհնում է Իր թարգմանիչներին: Օրինակ,

Փուլ 2.

- Կարող են պատվիրվել մի շարք այլ նյութեր, ինչպես օրինակ *Լիահոնա* ամսագիրը, սեմինարիայի և ինստիտուտի ձեռնարկները, կիրակնօրյա հրահանգների ձեռնարկը, օրհներգեր և մանկական երգեր, տաճարային և ընտանեկան պատմության նյութերը և ցցի ու տարածաշրջանի հեռարձակումների մեկնաբանությունները:

Աշխատողների հիմնական խմբերը

Թարգմանչական խումբը.

- Տաճարին արժանի երկու կամ երեք Եկեղեցու անդամներ, ովքեր ունեն ավետարանի վերաբերյալ համապատասխան գիտելիքներ
- Հատված առ հատված թարգմանության ուղեցույց, տերմինների բառարան և Եկեղեցու գլխավոր գրասենյակի թարգմանության ղեկավար:

Եկեղեցու վերանայող հանձնաժողով.

- Երեքից հինգ տղամարդիկ ու կանայք, ովքեր Եկեղեցու ղեկավարներ են տվյալ տարածքում:
- Կանչված և ձեռնադրված անձինք, ովքեր օգնում են վերանայել թարգմանության դյուրընթեռնելիությունը և վարդապետության ճշտությունը:
- Ձևակերպումներում փոփոխություններ չեն կատարվում, քանի դեռ հանձնաժողովը միաձայն համաձայնության չի եկել, և փոփոխությունները համահունչ չեն թարգմանության ուղեցույցին:

Անդամ վերանայողներ.

- Եկեղեցու տեղական անդամները նույնպես վերանայում են թարգմանությունը:
- Նրանք իրենց կարծիքն են հայտնում բովանդակության պարզության և համապատասխանության վերաբերյալ:
- Թարգմանության պարզությունը հաստատում է, որ Սուրբ Հոգին կարող է վկայություն բերել ուսմունքների ճշմարտացիության մասին:

Սուրբ գրությունների թարգմանության գործընթացը ներառում է թե գլուխը, թե սիրտը, թե մտավոր ունակությունները, թե հոգևոր խորաթափանցությունը:

լատիշերեն լեզվով սուրբ գրությունների թարգմանիչը մի իրավաբան էր, ով իրավաբանություն էր սովորել Ռուսաստանում, որտեղ էլ նա դարձի էր եկել դեպի վերականգնված ավետարանը: Լատվիայում նա իր բիզնեսն էր սկսել: Նա նաև ծառայում էր որպես ճյուղի նախագահ: Դրանից ավելի շատ աշխատել նա չէր կարող, սակայն Եկեղեցին ուներ նրա և նրա անգլերենի իմացության կարիքը:

Նա ժամանակ խնդրեց, որ աղոթեր այդ մասին, քանի որ, ինչպես ինքն էր ասել Եկեղեցու ներկայացուցչին՝ այդ առաջարկն ընդունելը «կկտրի իմ երեխաների հացը»: Աղոթելուց հետո նա որոշեց համաձայնվել, սակայն խնդրեց Տիրոջն օրհնել իրեն միջոցներով, որ կարողանար կատարել այդ դժվար, հոգևոր բարձր պահանջներ ակնկալող, ժամանակատար աշխատանքը:

Նա սկսեց ամեն օր մեկ ժամ շուտ գնալ իր իրավաբանական գրասենյակ և օգտագործեց այդ ժամանակը Մորմոնի Գիրքը թարգմանելու համար: Նա հաջողությամբ ավարտեց այն հինգ տարում, որքան սովորաբար դա տևում էր: Ի դեպ, նրա թարգմանությունը ամենաարագը կատարվեց Մորմոնի Գրքի Ջոզեֆի թարգմանությունից հետո, որը տևել էր մոտ 60 օր:

Կարելի է թվարկել բազմաթիվ փորձառություններ, որոնք կլուսաբանեն Տիրոջ ձեռքի առկայությունը Իր սուրբ գրությունների թարգմանության գործում: Դրանք բոլորը հստակ հայտարարում են, որ սա Նրա աշխատանքն է, և որ Նա մեծապես հոգ է տանում դրա համար: Նա պատրաստում է մարդկանց անելու Իր աշխատանքը: Նա պատրաստում է գործիքներ աշխատանքն արագացնելու համար: Եվ Նա ոգեշնչում և օրհնում է նրանց այդ ընթացքում:

Արդյունքում աշխարհին հասանելի է դարձել Աստծո խոսքը, որը տրվել է Նրա զավակներին սրտի լեզվով: ■

ՏԻՐՈՋ ՍՈՒՐԲ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԱՐԳՄԱՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՊԱՐՋ Է ԴԱՌՆՈՒՄ, ՈՐ ՍԱ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔՆ Է: ՆԱ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԳՈՐԾԻՔՆԵՐ, ՈՐՈՆՑ ԿԱՐԻՔԸ ՆՐԱՆՔ ՈՒՆԵՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՐԱԳԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵՎ ՆԱ ՈԳԵՇՆՉՈՒՄ ԵՎ ՕՐՀՆՈՒՄ Է ՆՐԱՆՑ ԱՅԴ ՃԱՆԱՊԱՐՀՆ ԱՆՑՆԵԼԻՍ:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես ութ հատորներից բաղկացած գիրքը, “How the Bible Came to Be,” հեղինակ՝ Լենեթ Հ. Ռիդ, *անգլերեն լեզվով* տպագրվել է 1982թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում:
2. “Church Edition of Spanish Bible Now Published,” mormonnewsroom.org.
3. Matthew S. Holland, “The Path to Palmyra,” *Liahona,* June 2015, 14–19.
4. Kent P. Jackson, “Moroni’s Message to Joseph Smith,” *Ensign,* Aug. 1990, 12–16.
5. Ջոզեֆ Սմիթ, Մորմոնի Գրքի նախաբանում: Մորմոնի Գրքի Ջոզեֆ Սմիթի կատարած թարգմանության վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար տես Gospel Topics, “Book of Mormon Translation,” topics.lds.org:
6. Բառարանային հղումներում տրվում է յուրաքանչյուր բառի սահմանումը համաձայն անգլերեն լեզվով հրատարակված սուրբ գրությունների, որպեսզի թարգմանիչները կարողանան ավելի լավ հասկանալ բառերի իմաստները: Հաճախ բառերն ունենում են մեկից ավելի իմաստներ, ուստի թարգմանիչները պետք է ուշադրություն դարձնեն ենթատեքստին, ոգեշնչման և միահամուռ ուժերի միջոցով տան ճիշտ լուծումներ: Երբեմն իմաստի հետ կապված հարցերը լուծումներ են գտնում միայն Առաջին Նախագահության կողմից:



Նախագահ
Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու
Առաքյալների
Քվորումի
Նախագահ

Տարեց միսիոներների ՀԻՇԱՐԺԱՆ ՊԱՀԵՐԸ

Տարեց զույգերի համար հրաշալի հիշողություններ ունենալու լավագույն եղանակներից մեկը միասին միսիա ծառայելն է:

Երբ մեր 60–70 տարեկան ընկերները մոռանում են ինչ-որ բան, մենք հաճախ հիշողության նման կորուստները կատակով տարիքի հետ ենք կապում՝ անվանելով դրանք «տարեցներին հատուկ պահեր»: Բայց ես կցանկանայի անդրադառնալ տարիքի հետ կապված այլ պահերին, որոնք այնքան հրաշալի են, որ դրանց մասին հիշողությունները հարատև կլինեն: Դրանք այն պահերն են, երբ տարեց միսիոներական զույգը հասկանում է, որ իրենք անում են այն, ինչ Տերը կցանկանար, որ անեին: Նման հիշարժան պահերին նրանք հասկանում են, որ՝

- Կարող են կիսվել իրենց կյանքի փորձով, և իրենց տաղանդներով, հմտություններով և ավետարանի հասկացողությամբ կարող են օրհնել մյուսների կյանքը:
- Նրանց օրինակը օրհնություն է իրենց երեխաների և թոռների համար:
- Ծառայելիս նրանք ամուր ընկերական կապեր են ստեղծում:
- Օրեցօր իրենց ամուսնությունն ավելի է ամրանում:
- Նրա անունով ծառայելը հաճելի պահեր է պարգևում:

Հիշարժան պահեր

Իմ սիրելի տարեց զույգեր, իմ ընկերներ, ձգտեք նման պահեր ապրել: Ուզում եմ անդրադառնանք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի պատմությանը, թե ինչ կարողացավ անել Չիլիում ծառայող տարեց զույգը: Մահացել էր մի երիտասարդ երեցի ծնողը: Միսիայի նախագահը շատ հեռու էր գտնվում և չէր կարող անմիջապես հանդիպել այդ միսիոների հետ:

«Բայց այդ տարածքում մի հրաշալի տարեց միսիոներական զույգ էր ծառայում,- ասում է Երեց Հոլլանդը:- Նրանք եկան, նստեցին այդ միսիոների կողքին, գորովանքով սփոփեցին ու մխիթարեցին նրան, մինչև որ միսիայի նախագահը կկարողանար հանդիպել նրան: Մեր միսիաներում մենք հրաշալի երիտասարդ միսիոներներ ունեինք, բայց ոչ մի երիտասարդ միսիոներ չէր կարող այդ երեցի համար անել այն, ինչ այդ զույգը կարողացավ անել»:[1]

Կարիքի պահին նրանք պարզապես կարեկցանք դրսևորեցին: Նրանք մտածում էին ոչ թե օտար լեզվով, այլ Քրիստոսանման սիրո լեզվով խոսելու մասին: Նրանք չէին անհանգստանում, որ բաց թողեցին թոռնիկի ծնունդը կամ նորածնին օրհնելու պահը, որքան էլ որ կարևոր էին այդ իրադարձությունները: Նրանց համար կարևոր էր լինել այնտեղ, որտեղ Տերը կարող էր օգտագործել իրենց՝ օրհնելով Իր զավակներից մեկի կյանքը: Եվ տեսնելով նրանց կամեցող սիրտը, Նա թույլ տվեց, որ նրանք ներկայացնեին Իրեն:

Ծառայությունը հազվադեպ է հարմարավետ լինում

Ճիշտ է՝ ոչ մի տարեց միսիոների համար տնից հեռանալը հաճելի բան չէ: Նույնը կարելի է ասել Ջոզեֆ Սմիթի, Բրիգամ Յանգի, Ջոն Թեյլորի կամ Վիլֆորդ Վուդրուֆի համար: Նրանք ևս երեխաներ ու թոռներ ունեին, և մեզ նման սիրում էին իրենց ընտանիքները: Բայց նրանք նաև սիրում էին Տիրոջը և ցանկանում էին ծառայել Նրան: Մի օր մենք գուցե հանդիպենք այդ քաջարի տղամարդկանց, ովքեր օգնեցին հիմնել այս

տնտեսությունը: Այդ ժամանակ մենք կցնծանք, որ մեր բաժին ծառայությունն ենք մատուցել՝ չխորշելով դրանից և ստվերում չմնալով:

Ոմանք գուցե զերադասեն ծառայել տանը: Երբ կաթվածից հետո Ազ Շումախեր Նելսոնը հայտնվեց անվասայլակին գամված, նա վախեցավ, որ գուցե չիրականանա ամուսնու՝ Դոնի հետ միսիա ծառայելու իր վաղեմի ցանկությունը: Բայց մի օր հարևանն իրենց հետ զրուցելիս պատմեց, որ Եկեղեցում միսիա է ծառայում եպիսկոպոսի պահեստում աշխատելով: Դրանից քաջալերված, նրանք զրուցեցին այդ հաստատության ղեկավարի հետ, լրացրեցին իրենց երաշխավորագրերի ձևերը և կանչվեցին շաբաթը երկու օր ծառայելու իրենց մոտակա պահեստում:

«Հեշտ է պարզապես հետ կանգնել և մտածել՝ դե իմ կարիքն այլևս չկա,- ասում է Ազ Նելսոնը,- Բայց այժմ ես զգում եմ, որ *իմ* կարիքը կա: Եվ դա վկայություն եղավ ինձ համար»:

Զույգը Սեուլում, Հարավային Կորեա, վայելում է միասին ծառայելու հաճույքը:

Ձեր կարիքն իրոք կա

Եթե դուք գայթակղվում եք մտածելու, որ ձեր կարիքը չկա, ուզում եմ կրկին անգամ ձեզ հավաստիացնել, որ ձեր կարիքը կա: Եկեղեցում չկա մի միսիայի նախագահ, ով չուզենա իր միսիայում ծառայող լրացուցիչ զույգեր ունենալ: Տարեց միսիոներներն ամրացնում են երիտասարդ երեցներին և քույրերին: Նրանք օգնում են մյուսներին ավելի լավ ծառայել իրենց պատասխանատվության շրջանակներում: Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ է նշանակում ղեկավարի համար, ով, լինելով ընդամենը մի քանի տարվա անդամ, օգնության հասնելու պատրաստ Եկեղեցու տարեց և փորձառու անդամներ ունի իր կողքին: Տարեց զույգերը հաճախ են եպիսկոպոսների և ճյուղերի նախագահների համար աղոթքների պատասխաններ դառնում:

Մենք խրախուսում ենք միսիայի նախագահներին փնտրել տարեց զույգերի, ովքեր կօգնեն բավարարել իրենց միսիայի կարիքները: Եպիսկոպոսները պետք է փնտրեն զույգերի, ովքեր կարող են ծառայել: LDS.org կայքում էջերով թվարկվում են տարեց զույգերի ծառայության հնարավորությունները: Բայց նախևառաջ զույգերը կարող են ծնկի իջնել և հարցնել Երկնային Հորը, թե արդյոք իրենց համար միասին միսիա ծառայելու ճիշտ ժամանակն է: Բոլոր արժանիքների մեջ ծառայելու *ցանկությունը* կարող է ամենակարևորը լինել (տես ՎԿՈՒ 4.3):

Տարեց միսիոներների աշխատանքը գովաբանելու հետ մեկտեղ ես հասկանում եմ, որ կան շատերը, ովքեր ցանկության հետ միասին ի վիճակի չեն ծառայել: Պետք է իրատեսորեն մոտենալ ոչ միայն վատ առողջությամբ կամ տարիքով պայմանավորված սահմանափակումներին, այլև ընտանիքի անդամների կարևոր կարիքներին: Երբ, չնայած նման խոչընդոտներին, ցանկությունը դեռևս այրում է ձեր սիրտը, մյուսները կարող են ձեր ձեռքերն ու ոտքերը լինել, և դուք կարող եք անհրաժեշտ ֆոնդեր տրամադրել:

Տարեց զույգեր, կարևոր չէ՝ ով եք դուք կամ որտեղ եք ապրում, խնդրում եմ՝ աղոթեք միասին տարեց միսիոներների հրաշալի պահեր ապրելու այս հնարավորության համար: Երկնային Հայրը կօգնի ձեզ իմանալ, թե ինչ կարող եք դուք անել: ■

ՀՂՈՒՄ

1. Jeffrey R. Holland in Joseph Walker, “Elder Jeffrey Holland: LDS Church Desperately Needs More Senior Missionaries,” *Deseret News,* Sept. 14, 2011, 3.

Վերև. Մալմրոզները հաճախակի հանդիպում են Նախագահ Ռոբիսոնի հետ, որպեսզի քննարկեն, թե ինչպես կարող են օգտագործել իրենց տաղանդները, մինչ ծառայում են ուրիշներին: Վերևում՝ Երիտասարդ միսիոներները Ակրա Գանա ուսուցման կենտրոնում ասում են, որ Երեց և Քույր Մալմրոզների կողմից աջակցությունը նման է երկրորդ մայր և հայր ունենալուն, ովքեր ծառայում են իրենց կողքին:

ՏՆԻՑ ԿԱՄ ՏՆԻՑ ՀԵՌՈՒ

Ծառայելով տնից կամ իրենց տներից հեռու՝ ավագ միսիոներական զույգերը գալիս ու օգնում են ծխերում և ճյուղերում, միսիոներական գրասենյակներում, այցելուների կենտրոններում, տաճարներում, քաղաքներում, կատարում են բժշկական հանձնարարականներ, աշխատանքի ռեսուրսների կենտրոններում, ինքնապահովման ծրագրերում, կախվածությունից ազատվելու ծրագրերում, ընտանիքի պատմության, արձանագրությունների պահպանման կենտրոններում, Եկեղեցու Կրթական Համակարգում, հանրային կապերում, մարդասիրական ծառայություններում և այլն: Եվ անհրաժեշտ են ավելի ու ավելի շատ զույգեր:

Տարեց միսիոներներ. ԱՆՀՐԱԺԵՇՏ, ՕՐՇՆՎԱԾ ԵՎ ՍԻՐՎԱԾ

Որպես միսիոներական զույգ ծառայելը կարող է լինել ավելի հարմար, ավելի քիչ ծախսեր պահանջել և ավելի ուրախ լինել, քան կարծում եք:

Ռիչարդ Մ. Ռոմնի
Եկեղեցու ամսագրեր

«Կարո՞ղ եք գալ և օգնել»:

Սա այն հարցն է, որին նախկինում պատասխանել են Ջերալդ և Լորնա Մալմրոսները ԱՄՆ-ից: Նրանք ասել են այո, երբ իրենց նախկին եպիսկոպոսը, ապա միսիայի նախագահը հարցրել է, թե արդյոք նրանք կծառայեն իր հետ արևմտյան Հնդկաստանում: Նրանք կրկին ասացին այո, երբ իրենց ցցի նախագահը կանչեց նրանց իրականացնելու ծառայողական միսիա Եկեղեցու գլխավոր գրասենյակում, որը գտնվում է ԱՄՆ-ի Յուտա նահանգի Սոլթ Լեյք Սիթի քաղաքում՝, աշխատելու համակարգիչներով և հումանիտար ռեսուրսների հետ:

Երբ նրանց նախկին եպիսկոպոսը և միսիայի նախագահը՝ Ռեյդ Ռոբիսոնը, կրկին զանգեց, այս անգամ որպես միսիոներների ուսուցման կենտրոնի նախագահ Ակրայում՝ Գանա, նա հարցրեց, թե արդյոք Մալմրոզները կարող էին օգնել ևս մեկ անգամ:

«Մենք գիտեինք, որ կարող էինք վստահել Տիրոջը»,- ասում է Երեց Մալմրոզը: «Ուստի, մենք որոշեցինք կրկին վստահել Նրան»: Նրանք ասացին այո, լրացրին իրենց թերթիկները, ստացան իրենց կանչը և շուտով մեկնեցին Գանա:

Ծառայել որպես զույգեր

Մալմրոզների փորձառությունը ներկայացնում է որոշ սկզբունքներ միսիա ծառայող ավագ զույգերի մասին, որոնք միգուցե լայնորեն չեն ընկալվում:

- *Կա երկու տեսակի միսիա:* (1) Եկեղեցու Նախագահը կանչում է ավագ զույգերին ծառայել կամ իրենց տարածքներում կամ տանից հեռու:
(2) Ցցի նախագահը կանչում է Եկեղեցում ծառայող միսիոներական զույգերին հոգալու տեղի կամ տարածաշրջանային կարիքները, աշխատելով կես դրույք՝ շաբաթական 8–32 ժամ: Նրանք սովորաբար ապրում և ծառայում են իրենց տարածքներում, սակայն երբեմն կարող են ծառայել տնից հեռու:
- *Միսիաների նախագահներին խրախուսում են գտնել զույգերի, ովքեր կարող են աջակցել իրենց միսիայի կարիքներին, և զույգերը կարող են նշել իրենց նախապատվությունները:* «Մենք չենք ասում, որ զույգերը կարող են ընտրել իրենց միսիոներական գործունեությունը»,- ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը: «Կանչը մնում է կանչ: . . . [Սակայն] մենք մեր ավագ զույգերի հետ խոսում ենք ծառայության հետ կապված իրենց նախընտրությունների մասին և արվում է հնարավոր ամեն բան, որպեսզի նրանք ծառայեն որտեղ և ինչպես ուզում են»:[1]
- *Միսիայի նախագահները խորհրդակցում են զույգերի հետ, թե ինչպես լավագույնս օգտագործեն նրանց հմտությունները և ունակությունները:* «Որպես ավագ զույգեր ամենահմաստալից փորձառություններն ունենալու համար դուք պետք է ունենաք ձեր նախընտրած վայրում և ձեր հմտություններին համապատասխան ոլորտում ծառայելու հնարավորություն, որպեսզի զգաք, որ կարող եք օգտակար լինել»,- ասում է Նախագահ Ռոբիսոնը:

ԱՅԺՄ ՊԱՏՐԱՍՏՎԵՔ

«Մենք շատ ու շատ ավագ զույգերի կարիքն ունենք: . . . Այժմ պատրաստվեք: . . . Քիչ պահեր կլինեն ձեր կյանքում, երբ դուք [առատորեն] կվայելեք հոգու և բավարարվածության քաղցրությունը, որը գալիս է Վարդապետի աշխատանքում միասին ծառայելու արդյունքում»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն, «Միասին կրկին հանդիպելով», *Լիահոնա*, նոյ. 2010, 6:

Օրինակ՝ Նախագահ Ռոբիսոնը գիտեր, որ Երեց Մալմրոզը խոսում է ֆրանսերեն, ինչը կարող էր օգտակար լինել, քանի որ շատ աֆրիկացիներ խոսում են ֆրանսերեն: «Ես պատկերացնում էի նրան ճամփորդությունների մեջ ներգրավված և վիզաների վրա աշխատելիս»,- ասում է Նախագահ Ռոբիսոնը: «Մակայն երբ նա ժամանեց, ես զգացի, որ այդ ամենը նրան այդքան էլ չէր հետաքրքրում: Ուստի, ես հրավիրեցի նրան օգտագործել իր համակարգչային հմտությունները: Նա օգնեց մեզ խնայել»: Երեց Մալմրոզը նաև օգնում է միսիոներներին, հատկապես ֆրանսերեն խոսող միսիոներներին՝ պատրաստելու անուններ և տաճարային աշխատանք կատարելու իրենց ընտանիքների համար: Քույր Մալմրոզը, ով մասնագիտությամբ բժշկի օգնական էր, նշանակվեց աշխատելու միսիայի բժշկի և բուժքրոջ հետ:

Նա պատրաստում է ուղին

Ինչպես Մալմրոզները, այնպես էլ այլ զույգեր գտնում են, որ երբ իրենք վստահում են Տիրոջը, Նա ուղի է պատրաստում: Հենց այդպես էլ եղավ Ալվին և Քորազոն Ռիետաների դեպքում, ովքեր Քեվետից էին, Ֆիլիպինների Կավիտ քաղաքից:

«Ծառայելու որոշում կայացնելուց երկու տարի առաջ մենք սկսեցինք հիմնավոր ծրագրեր մշակել մեր ընտանեկան բիզնեսի համար»,- բացատրում է Երեց Ռիետան: «Մեր որդին ու դուստրը ավարտել էին ուսումը և կարող էին փոխարինել մեզ, սակայն մենք մտահոգվում էինք, թե ով էր լուծելու բիզնեսի հետ կապված խնդիրները և ինչպես մեր հաճախորդները կարձագանքեին մեր ծրագրերին»:

Քույր Ռիետան նաև մտահոգվում էր իր տարեց մոր համար: «Ես վախենում էի, որ միգուցե կորցնեինք նրան, մինչ մենք բացակայում էինք»,- ասում է նա: «Ես նաև վստահ չէի, որ կկարողանայի ուսուցանել ավետարանը»:

Նրանք խորհրդակցեցին իրենց եպիսկոպոսի և մի զույգի հետ, որը նոր էր ծառայել Դավաոյում: «Նրանք բոլորն էլ ամուր վկայություն բերեցին, որ Տերը կառաջնորդի յուրաքանչյուր զույգին իմանալու, թե ինչպես կարգավորել իրենց գործերը տանը, իրենց ընտանիքում և իրենց միսիայի ծախսերի հետ կապված հարցերը»,- ասում է Քույր Ռիետան:

«Մինչ մենք առաջնորդություն էինք փնտրում,- ասում է Երեց Ռիետան,- մեր մտավախությունները գտան իրենց լուծումները. չնայած դժվարություններին մեր բիզնեսը լավացավ, մեր հաճախորդները ուրախ էին և պատրաստ աջակցելու, իսկ մեր ընտանիքը ավելի համախմբվեց՝ հոգ տանելով մեր հիվանդ մոր մասին: Մենք սկսեցինք հասկանալ, որ Տերն իսկապես կօգներ մեզ»:

Ռիետաներն այժմ ծառայում են անդամների և ղեկավարների աջակցության ծրագրում Ֆիլիպինների Կագաբան դե Օրո Միսիայում:

Դուք *կարող եք* շատ բան անել

Որոշ զույգեր մտահոգվում են ֆիզիկական սահմանափակումների համար, սակայն ոչ Քեյթ և Ջենիլին Մաուրմենները Յուտայից (ԱՄՆ): Տարիներ առաջ Լոս Անջելես Կալիֆորնիա Տաճարում ամուսնանալուց չորս ամիս անց Քիթը պատրաստվեց և ուղարկվեց պատերազմ: Որպես օդայինների ջոկատի հրամանատար նա քայլում էր մյուս զինվորների առջևից, երբ պայթեց ականը: Նա կորցրեց իր երկու ոտքերը: Երբ նա տուն վերադարձավ, Ջենիլինը վազեց նրան ընդառաջ:

«Ես գիտեի, որ չպիտի մտահոգվեի,- ասում է Քիթը,- քանի որ մենք ունեինք հավերժական ամուսնություն: Իմ կինը մշտապես աջակցել է ինձ: Նա շարունակում է աջակցել ինձ ամեն օր:

Երբ Քույր Մաուրմենը թոշակի անցավ, նրանք որոշեցին միսիա ծառայել: Բայց արդյո՞ք Երեց Մաուրմենը, լինելով անդամալույծ, խնդիրներ չէր ստեղծի: «Միշտ կլինեն բաներ, որոնք ես *չեմ կարող* անել,- ասում է նա,- սակայն կան շատ բաներ, որոնք ես *կարող եմ* անել, մենք գիտեինք, որ կլիներ համապատասխան տեղ մեզ համար»:

Մինչ նրանք լրացնում էին իրենց թերթիկները, նա նշեց այն վանդակը, որը ցույց էր տալիս, որ ինքը ծառայել էր բանակում: Շուտով նրանք զանգ ստացան Եկեղեցու Ռազմական Կապերի բաժնից: «Ես ունեի վկայական, որը մեզ թույլ կտար մտնել ռազմակայաններ, ուստի նրանք հարցրին մեր թույլտվությունը, որպեսզի նշանակեին մեզ ռազմական կապերի միսիայում ծառայելու»:

Մաուրմենները կանչվեցին ծառայելու Հյուսիսային Կարոլինայի (ԱՄՆ) ռազմակայանում: Երեց Մաուրմենը հիշում է. «Դարպասների վրա գրված էր «Ֆորտ Բրեգ, Օդային Դեսանտի ապաստարան»: Երբ ժամապահը ողջունեց մեզ օդայինների կարգախոսով՝ «Բոլորն առաջ», տարիներ անց առաջին անգամ ես լսեցի այն: Այնպիսի զգացողություն ունեի, ասես տուն էի վերադարձել, չնայած ես երբեք չէի եղել Fort Bragg-ում: Ես գիտեի, որ մեր միսիայի կանչը կատարելապես համապատասխանում էր մեզ, և որ Տերը մտահոգվում էր ինձ համար:

Մենք դասեր տվեցինք ինքնավստահ և աննկուն դառնալու և ամուսնությունները ամրապնդելու վերաբերյալ»,- ասում է Քույր Մաուրմենը: «Սկզբում մենք չէինք ուզում կիսվել մեր պատմությունով, սակայն նկատեցինք, որ դրանով կիսվելը շատ բան փոխեց: Զինվորներն ու նրանց կանայք նայեցին մեզ և ասացին. «Եթե դուք կարող եք անել դա, մենք նույնպես կարող ենք»:

Մաուրմեններն այնպիսի դրականփորձառություն ունեցան Հյուսիսային Կարոլինայում, որ խնդրեցին կրկին ծառայել: Այսօր նրանք շաբաթական երկու անգամ ճամփորդում են մոտ 64 կմ իրենց տնից հեռու՝ Օրեմից մինչև Սոլթ Լեյք Սիթի, որպեսզի ծառայեն Եկեղեցու Ռազմական Կապերի գրասենյակում: Նրանք նաև ուսուցանում են ավագ զույգերին Պրովոյի միսիոներների ուսուցման կենտրոնում, որտեղ բացահայտում են, որ գրեթե յուրաքանչյուր խմբում լինում է մեկը, ով ծառայելու համար հաղթահարել է խոչընդոտներ:

Հաղթահարելով ֆինանսական մտահոգությունները՝ Երեց և Քույր Ռիետաները ծառայում են իրենց իսկ երկրում՝ Ֆիլիպիններում:

Մաուրմենների համար ռազմական գործերում ծառայելը կատարյալ հնարավորություն է: «Դա նման էր տուն վերադառնալուն»,- ասում են նրանք:

Ոգեշնչված բերելով հավայան կիթառը՝ Ռոմրելները օգտագործում են այն, որպեսզի կիսվեն երաժշտության համամարդկային լեզվով, մինչ նրանք այցելում են տներ և երգում են օրհներգեր:

Համամարդկային լեզուներ

Կանչված լինելով Բրազիլիա Կուիաբա Միսիա՝ Յուտայից, Ռենդի և Լոու Էլեն Ռոմրելները մտահոգ էին: Չնայած Երեց Ռոմրելը ծառայել էր Բրազիլիայում որպես երիտասարդ միսիոներ, նա մոռացել էր պորտուգալերենը: Իսկ Քույր Ռոմրելը պորտուգալերեն չգիտեր: Ինչևիցե, ուսուցումը և ջանասիրությունն օգնեցին Երեց Ռոմրելին վերհիշել պորտուգալերենը, իսկ Քույր Ռոմրելին՝ սովորել այն: Նույնը տեղի ունեցավ նաև հավայան կիթառի դեպքում:

«Ես իրականում չէի էլ նախատեսել բերել այն,- ասում է Քույր Ռոմրելը,- սակայն Երեց Ռոմրելը ոգեշնչում ստացավ դրա վերաբերյալ և հրաշալի է տեսնելը, թե ինչ արեց այն: Մինչ մենք ուսուցանում ենք լսողներին և աշխատում ենք վերաակտիվացնել և ընկերակցել մարդկանց, զվարճալի է տեսնելը, թե ինչպես է այն հրավիրում մարդկանց օրհներգեր երգելու: Մենք սովորում ենք լեզուն, իսկ օրհներգերը ուժեղ հոգի են բերում իրենց հետ»:

Չնայած նա դեռ պետք է աշխատի իր պորտուգալերենի վրա, նա արդեն հմտացել է երաժշտության ոլորտում: «Երաժշտությունը միավորում է մարդկանց»,- ասում է նա: «Նույնիսկ երբ մեր այցելությունների ժամանակ ես չեմ կարողանում նրանց ասած ամեն բառը հասկանալ, երբ մենք երգում ենք, մենք միավորվում ենք»: Երբ նրանց հրավիրեցին դպրոցներում խոսել ամերիկյան Գոհաբանության տոնի մասին, Ռոմրելները երգեցին երախտագիտության օրհներգեր հավայան կիթառի նվագակցությամբ: Իսկ Քույր Ռոմրելը եկեղեցում օրհներգեր երգելիս ավելի ավանդական գործիքի՝ դաշնամուրի օգնությամբ նվագակցում է մեզ:

Իսկ պորտուգալերե՞նը: «Եթե նույնիսկ դուք ազատ չեք տիրապետում որևէ լեզվի, ընդամենը մի քանի բառ սովորելն օգնում է»,- ասում է նա: «Պարզապես բարևելը և մարդկանց ողջունելը շատ բան կարող է ասել: Թող



«ԿԼԻՆԵՄ, ԻՆՉ ԿՈՒԶԵՍ»

«Երբ ես մտածում եմ ավագ զույգերի մեծ կարիքի մասին, միշտ մտաբերում եմ «Կգնամ, ուր կուզես, Դու, Տեր» (*Hymns,* no. 270) օրհներգը և դրա ուղերձը՝ «Կլինեմ, ինչ կուզես, Դու, Տեր»:

Երեց Դալլին Հ. Օուքս՝ Տասներկու Առաքյալների Քվորումից:

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ ԶՈՒՅԳԵՐ

«Մեր բոլոր հասուն զույգերին ուղղված մեր ուղերձը շատ պարզ է. մենք շատ ունենք ձեր կարիքը: Մենք անում ենք ամեն բան, որպեսզի միսիա գնալը հնարավորինս հարմարավետ դարձնենք ձեզ համար: . . . Ժամանակներն են ներկայացնում այդ պահանջը: Կան մարդիկ, որոնք ունեն ձեր պահանջը: Խնդրում ենք, գնացեք»:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Տասներկու Առքյալների Քվորում, *Deseret News,* Sept. 14, 2011.

նրանք իմանան, որ դուք սովորում եք: Պարզեցրեք այն և ապավինեք Հոգուն»: Իսկ Հոգին, անշուշտ, մեկ այլ լեզու է, որը յուրաքանչյուրը կարող է հասկանալ:

Ծառայել տանը

Պաուլ և Մար Ջեն Լուիսները Յուտայից արդեն իսկ միասին ծառայել են երեք միսիա (Պալմիրա Նյու Յորք Տաճար, Հոնգ Կոնգ Չինաստան Տաճար և Խորվաթիայում՝ Սերբիա և Սլովենիայում սեմինարիաների և ինստիտուտների հետ): Նրանք պատրաստվում էին ծառայել մեկ այլ միսիա, երբ նրանց ցցի նախագահը հարցրեց. «Կցանկանա՞ք ծառայել հենց այստեղ՝ մեր իսկ ցցում, աջակցելով այն միսիային, որտեղ մենք ապրում ենք»:

«Մենք նոր էինք տեղափոխվել այդտեղ, ուստի, դա հրաշալի հնարավորություն էր»,- ասում է Քույր Լուիսը: «Մենք ծառայում ենք երիտասարդ երեցների և քույրերի հետ, շատ մտերիմ ենք միսիայի նախագահի հետ, գնում ենք շրջանի և տարածքի ժողովներին և աշխատում ենք ցցերի միսիայի ղեկավարի հետ»: Նրանք նաև այցելում են լսողներին և նրանց, ովքեր քիչ ակտիվ են:

«Մենք հանդիպել ենք հրաշալի մարդկանց, որոնց այլ հանգամանքներում երբեք չէինք ճանաչի,- ասում է Քույր Լուիսը,- ներառյալ նրանց, ովքեր շեղվել են ճանապարհից: Տեսնել, թե ինչպես են նրանք վերադառնում, ստանում արարողություններ և գնում տաճար, հրաշալի օրհնություն է»:

«Շատ զույգեր, երբ մտածում են միսիա ծառայելու մասին, մտահոգվում են, թե ինչ են անելու իրենց տան կամ մեքենայի հետ, կամ ինչ իրադարձություններ բաց կթողնեն իրենց ընտանիքի անդամների հետ կապված»,- ասում է Երեց Լուիսը: «Մենք հնարավորություն ենք ունեցել ապրելու մեր իսկ տանը և վարելու մեր իսկ մեքենան: Մեզ խրախուսվում է մասնակցել ընտանեկան միջոցառումներին, եթե դրանք չեն խոչընդոտում միսիոներական պարտականություններին: Եվ մենք նույնիսկ այստեղ ենք եղել այն ժամանակ, երբ ծնվել է մեր թոռնիկը»:

Ծառայելով տանից՝ Լուիսները վայելում են լիաժամկետ միսիոներներին և իրենց իսկ ցցի անդամներին ճանաչելու հնարավորությունը:

Սորենսենները Կուկի կղզիների դպրոցականներին տալիս են փոքրիկ ժայռաբեկորներ, որպեսզի հիշեցնեն նրանց «ժայռի պես ամուր մնալ Քրիստոսում»:

Ընտանիքի օրհնությունները

Մյուս կողմից, Ջիլ և Քենթ Սորենսենները, ովքեր այդ նույն ցցից են, ասում են, որ իրենց ընտանիքը ամրացնելու ամենալավ ուղիներից մեկը եղել է տնից հեռու ծառայելը: Քույր Սորենսենն ասում է. «Չգնալու համար զույգերը հիմնականում բերում են հետևյալ պատճառաբանությունները՝ թոռնիկներ, ամուսնացած երեխաներ, ովքեր ունեն խնդիրներ, դուստրեր, որոնք երեխայի են սպասում, ծեր ծնողներ, դուք կարող եք շարունակել թվարկելը: Ընտանիքն առաջնահերթություն է, և դուք կարոտում եք նրանց ամեն օր: Սակայն միսիա գնալը հրաշալի ուղերձ է, որ միսիոներական աշխատանքը նույնպես կարևոր է»:

Բացի դրանից, Երեց Սորենսենը նշում է, «որ այժմ կան կապի բազմաթիվ ուղիներ, որոնց միջոցով կարող ենք տեղեկանալ միմյանց մասին»:

Սորենսենների միսիոներական ճամփորդությունը սկսվեց երեք տարի առաջ, երբ նրանց եպիսկոպոսը խնդրեց նրանց այցելել զույգերի ամենամյա հավաքույթին, ովքեր մտածում են միսիոներական ծառայություն կատարելու մասին: «Մշտապես դրա մասին խոսելուց հետո,- ասում է Քույր Սորենսենը,- մենք ինքներս պետք է գնայինք»: Նրանք կանչ ստացան ծառայելու Կուկի կղզիներում, որտեղ Ջիլի տատիկն ու պապիկը ծառայել էին 50 տարի առաջ:

Այսօր, այլ պարտականությունների շարքում, նրանց խնդրել են սովորեցնել Աստվածաշունչը դպրոցներում:

«Մենք խոսում ենք այն մասին, որ Քրիստոսն է ժայռը»,- ասում է Երեց Մալմրոզը: «Մենք ուսանողներին տալիս ենք մի փոքրիկ ժայռաբեկոր և խրախուսում ենք նրանց ժայռի պես ամուր մնալ Քրիստոսում: Այժմ ամենուրեք մեզ տեսնելիս մարդիկ ասում են. «Ժայռի պես ամուր»:

Ողջ աշխարհով մեկ զույգերն ասում են, որ ի լրումն ուրիշներին օգնելու, միասին ծառայելը ամրացնում է նրանց ամուսնությունը և ավելի է մոտեցնում նրանց Երկնային Հորը:

Եկեք և օգնեք

Եթե դուք մտածում եք լիաժամկետ միսիայի կամ Եկեղեցում ծառայության միսիայի մասին, այս բոլոր զույգերը կտան ձեզ նույն հարցը, որը Նախագահ Ռոբիսոնը տվեց Ջերալդ և Լորնա Մալմրոսներին. «Կարո՞ղ եք գալ և օգնել»: Եվ նրանք կասեն ձեզ, որ անկախ այն բանից, թե ինչպես դուք կմասնակցեք, այս խոստումը հաստատ է. Կա ձեր կարիքը, դուք կարող եք աջակցել, դուք կօրհնվեք և կսիրվեք: ■

ՀՂՈՒՄ

1. “Elder Jeffrey Holland: LDS Church Desperately Needs More Senior Missionaries,” *Deseret News,* Sept. 14, 2011, deseretnews.com.

ԾԱՌԱՅԵԼՈՒ ԲԱԶՄԱԹԻՎ ՈՒՂԻՆԵՐ

Վերանայեք ներկայիս հնարավորությունները, լսեք նրանց, ովքեր ներկայումս ծառայում են և գտեք հարցերի պատասխաններ lds.org/callings/missionary-ում:

ԱՎԵԼԻ ՀԵՇՏ, ՔԱՆ ԵՐԲԵՎԷ

Ճկուն քաղաքականությունը պարզեցնում է զույգերի ծառայությունը:

- Եկեղեցում ծառայող զույգերը կարող են ապրել իրենց տանը և ծառայել իրենց տարածքում:
- Զույգերը կարող են ծառայել 6, 12, 18 կամ 23 ամիս: Նրանք կարող են ծառայել 18 ամսից պակաս, եթե վճարեն ճամփորդության համար:
- Իրենց հաշվին զույգերը կարող են կարճատև ընդմիջում վերցնել, սովորաբար յոթից տասը օր, ընտանեկան ծայրահեղ դեպքերի ժամանակ տուն վերադառնալու համար:
- Բնակարանային ծախսերը կատարվում են մասնակի: Զույգերը վճարում են ոչ ավելի, քան բնակարանային ծախսերի համար որոշված գումարը, որը ներառում է բնակարանի վարձը, կոմունալ վարձերը և կահավորումը:
- Բնակարանները կլինեն ապահով և հարմարավետ: Միսիաները կամ տարածքային գրասենյակները ապահովում են բնակարաններով, որոնք մաքուր են, ունեն համեստ կահավորում և հարմարավետ են:
- Օրակարգերը քիչ ծանրաբեռնվածություն ունեն: Զույգերից չի պահանջվում հետևել աշխատանքային ժամերի և միջոցառումների նույն օրակարգին, որը պարտադիր է երիտասարդ միսիոներների համար:
- Ընտանիքի հետ շփումը ավելի հաճախ է տեղի ունենում: Զույգերը կարող են շփվել իրենց ընտանիքների հետ ավելի հաճախ, քան նախատեսված է երիտասարդ միսիոներների համար:

ԵՐԲ պոռնոգրաֆիան ներխուժում է տուն, թե ԿԻՆԸ, թե ԱՄՈՒՍԻՆԸ պետք է բժշկվեն

Ես անձամբ տեսել եմ, որ Փրկիչի բուժող զորությունը կարող է հանգչել ինչպես կանանց, այնպես էլ ամուսինների վրա, երբ ամուսինները պայքարում են պոռնոգրաֆիայի դեմ:

Անանուն

Որպես եպիսկոպոս ծառայելու առաջին վեց ամիսների ընթացքում իմ ծխում ունեցել եմ մի քանի զույգեր, որոնք առանձնազրույց են ունեցել ինձ հետ, պատմելով, որ ամուսինները խնդիրներ ունեն պոռնոգրաֆիա օգտագործելու հետ կապված: Որոշ դեպքերում կինը չէր կարողանում ուշքի գալ այն հարվածից, որը հասցրել էր նրան նոր իմացած աղետալի գաղտնիքը, ուրիշներն էլ ամիսներ կամ տարիներ շարունակ իմացել էին այդ մասին:

Ես կարեկցանք եմ զգացել այս զույգերից յուրաքանչյուրի հանդեպ և զգացել եմ Փրկիչի փրկագնող զորությունը, մինչ ես պարբերաբար և նրբանկատորեն խորհուրդ եմ տվել եղբայրներից յուրաքանչյուրին, որպեսզի օգնեմ նրանց թոթափել շղթաները, որոնք կարող են նրանց ամուր կապել (2 Նեփի 9.45):

Ինչևիցե, Հոգու ամենամեծ ոգեշնչումները եկել են, երբ ես հանդիպել եմ նրանց կանանց: Ես բացահայտեցի, որ չնայած որոշ վերքեր թարմ էին, իսկ ոմանք էլ տարիների ընթացքում սպիացել էին, բոլոր քույրերն էլ հոգու մեծ ցավ են ապրել, տալով իրենց հետևյալ հարցերը. «Ի՞նչ եմ ես արել, որի պատճառով գրավիչ չեմ նրա համար» կամ «Ինչո՞ւ է նա ցանկանում պատկերացնել իրեն մեկ ուրիշի հետ, այլ ոչ թե իմ»:

Քանի որ ամուսինն է օրինազանցություն գործողը, հեշտ է եպիսկոպոսի համար զգալ, որ ամուսինը մեծապես կարիք ունի օգտվելու Փրկիչի բուժող զորությունից, բայց ես նաև հասկացա, որ ցավից ու կրած վնասներից բուժվելու կարիքը կանանց մոտ նույնքան մեծ է, որքան ամուսինների մոտ մեղքից և հետապնդող մտքերից բուժվելու կարիքը:

Նեփիացիներին ուղղված իր խոսքում Հակոբ մարգարեն մեղադրեց տղամարդկանց անհավատարիմ վարքի համար իրենց կանանց հանդեպ, «որոնցից շատերի զգացմունքները չափազանց քնքուշ էին, և մաքրաբարո ու նուրբ՝ Աստծո առջև, բան, որը հաճո է Աստծուն» (Հակոբ 2.7): Նա շարունակել է. «Դուք կոտրել եք ձեր քնքուշ կանանց սրտերը . . . նրանց առաջ ձեր վատ օրինակի պատճառով, և նրանց սրտերի հեկեկոցը բարձրանում է վեր՝ առ Աստված, ձեր դեմ» (Հակոբ 2.35): Ես իմ աչքերով եմ տեսել այդ հեկեկոցները: Դրանք հաճախ բխում են ոչ միայն պոռնոգրաֆիայի օգտագործման արդյունքում ամուսինների դավաճանության պատճառով կանանց մոտ առաջացած խորը վիրավորանքից, այլ նաև նվաստացնող բառերից և կոպիտ վարքից, որոնք հաճախակի արտահայտվում են նրա ներքին պայքարի արդյունքում: Ի դեպ, հաճախ է պատահում, որ ամուսինը, ում վարքը հայտնի է դարձել, սկսում է իր վարքի համար մեղադրել կնոջը, վկայակոչելով տարբեր գործողություններ, որոնք նա արել է կամ չի արել: Դժբախտաբար, հաճախ կինը սկսում է կասկածել և նույնիսկ հավատալ այդ մեղադրանքներին:

Մի այդպիսի զույգ նստած էր իմ գրասենյակում՝ պոռնոգրաֆիայի հակում ունենալու ամուսնու վարքի բացահայտումից ընդամենը օրեր անց, ինչի մեջ նա

ներգրավվել էր իր պատանեկությունից սկսած: Քույր Լինդա Ս. Ռիվսի 2014 թ. ապրիլի գերագույն համաժողովի «Պաշտպանություն պոռնոգրաֆիայից՝ Քրիստոսակենտրոն տուն» ելույթի վրա հիմնված Սփոփող Միության դասը լսելու ընթացքում կինը սկսել էր նկատել, որ իր հանդեպ ամուսնու քննադատական վարքում առկա էին ուսուցչի նշած հակումներից շատերը: Դասից հետո նա ամուսնուն տալիս է որոշակի հարցեր, և վերջինս խոստովանում է գաղտնիքը, որը թաքցրել էր տարիներ շարունակ: Նրա արդեն իսկ ոտնահարված արժանապատվությունն այժմ միաձուլվեց խորը վիրավորանքի հետ: Մեր առաջին հանդիպման ժամանակ նրանք չէին կարողանում պատկերացնել, որ իրենց ամուսնությունը կարող էր շարունակվել: Ես համոզեցի նրանց, որ հույս կար, տվեցի լրացուցիչ խորհուրդներ և հրավիրեցի նրանց վերադառնալ և հանդիպել ինձ հետ անհատապես:

Այս հանդիպումներին նախապատրաստվելիս ջերմեռանդ աղոթքներին զուգահեռ ես վերանայում

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՆԵԼ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Երբ ղեկավարներն աշխատում են այն անդամների կողակիցների հետ, ովքեր պայքարում են պոռնոգրաֆիայի դեմ, նրանց ջանքերը, համոզվելու համար, որ այս կողակիցները զգում են, որ իրենց լսում են և հասկանում, կարող են լինել նույնքան կարևոր, որքան ցանկացած խորհուրդ, որ նրանք կարող են տալ: Խորհեք հետևյալ խորհուրդների շուրջ, որոնք վերցված են Օգտակար Խորհուրդներից (ministering.lds.org):

- Հաճախակի հանդիպեք նրանց հետ և առաջարկեք օգնություն:
- Շեշտեք, որ Փրկիչը կարող է անհատապես բուժել պոռնոգրաֆիա օգտագործողների կողակիցներին (տես Ալմա 7.11 և Մատթեոս 11.28–30):
- Պատշաճ պահի հրավիրեք տվյալ անձնավորությանը խորհել կախվածությունից ազատվելու ծրագրի կամ նմանատիպ աջակցող խմբի ժողովներին հաճախելու մասին:
- Օգնեք կողակցին հասկանալ, որ նա անձամբ կարող է ոգեշնչում ստանալ, իմանալու համար, թե ինչպես հաստատել պարզ սահմաններ հարաբերություններում և տանը:
- Օգնեք կողակցին գտնել հավատարիմ ընկեր կամ ընտանիքի անդամ, ով կարող է շարունակ իմաստալից աջակցություն ապահովել:
- Օգնեք պոռնոգրաֆիա օգտագործող անհատին պատասխանատու լինել իր արարքների համար և աջակցել իր կողակցին:
- Պոռնոգրաֆիա օգտագործողի կողակցին առաջարկեք դիմել մասնագետի օգնությանը կամ ստանալ խորհրդատվություն մասնագետի կողմից: Ներկայացրեք նյութեր, որոնք ներառում են ծառայություններ, որոնք համահունչ են ավետարանի սկզբունքների հետ:

Ներքևում. Քերրին վիատվել էր, իմանալով պոռնոգրաֆիայի հետ կապված խնդիրների մասին, որոնց տրվել էր իր ամուսինը, սակայն նա հույս և բուժում գտավ Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության միջոցով:

էի խորհուրդները, որոնք տրված էին LDS.org-ի Ministering Resources էջում, հատկապես այն նյութերը, որոնք նախատեսված էին պոռնոգրաֆիա օգտագործողների կողակիցների համար, որտեղ ես կարդացի հետևյալը. «Արտահայտեք ձեր սերն ու հոգատարությունը նրա հանդեպ, ինչպես նաև նրա ամուսնու հանդեպ: Պարզաբանեք, որ նա պատասխանատու չէ այն բանի համար, որ իր ամուսինը պոռնոգրաֆիա է օգտագործում կամ վատ վարք է դրսևորում, և նրանից չի ակնկալվում դիմանալ կոպիտ վարքագծին»:

Երբ ես հանդիպեցի այս քրոջ հետ, ես հետևեցի այդ խորհրդին և ավելացրեցի այն համոզմունքը, որ նրա ամուսնու վարքագիծը ընդհանրապես կախված չէր իրենից, կամ մի բանից, որ նա էր արել կամ չէր արել, այլ կախված էր ամուսնու սեփական ներքին խնդիրներից: Ես տեսա, թե ինչպես թեթևություն և մխթարություն իջավ նրա վրա, մինչ ուշադիր լսում էր այս խոսքերը և զգում Հոգու հաստատումը, որ դրանք իսկապես ճիշտ էին: Հարցազրույցի վերջում նա քահանայության օրհնություն խնդրեց ինձանից: Ես հասկացա, որ ես միակ մարդն էի, ում նա կարող էր դիմել նման օրհնության համար, քանի որ նա նախընտրում էր գաղտնի պահել իր իրավիճակը ընտանիքից և ընկերներից:

Բուժման գործընթացն արագացնելու համար ես հրավիրեցի ամուսնուն այցելել տեղի Վերջին Օրերի Սրբերի կախվածությունից ազատվելու խմբակ, իսկ կնոջը ես խրախուսեցի այցելել համապատասխան խմբակ, որը նախատեսված է կողակիցների և ընտանիքի անդամների համար: Նա պատմեց ինձ, որ մխիթարություն էր զգացել՝ հանդիպելով այլ քույրերի հետ, ովքեր հասկանում էին իր տառապանքները և լցվել էր հույսով, տեսնելով զույգերի, ովքեր անցել էին այդ նույն փորձության միջով և միասին դուրս էին եկել դրանից:

Մի քանի ամիս է անցել այս զույգի հետ իմ առաջին հանդիպումից, և իմ սերն ու մտահոգությունը նրանց համար մեծացել է մեր հաճախակի շփման արդյունքում: Չնայած ես հասկանում եմ, որ նրանց ճանապարհը չի անցնի առանց անհաջողության պահերի, ինձ համար մեծ ուրախություն է ամեն հաջորդ ամիս տեսնել, որ ամուսինն իրեն զերծ է պահել հեշտասիրությունից և պոռնոգրաֆիայից և տեսնել նրա կնոջ մոտ ինքնագնահատման և վստահության աճ, որն ակնհայտ է դառնում:

Վերջերս նրանց հետ ունեցած հարցազրույցների ժամանակ մեր նախկին հանդիպումների տառապանքն ու արցունքները փոխարինվել էին հաճախակի երևացող ժպիտներով և նույնիսկ ծիծաղով: Բայց, թերևս, ամենամեծ արդյունքը եղել է հույսը. հույս, որ ոչ միայն կարող է նրանց ամուսնությունը շարունակվել, այլ նաև, որ այն ունի ներուժ՝ դառնալու զեղեցիկ և վեհացնող մի բան:

Ես հասկանում եմ, որ, դժբախտաբար, ոչ բոլոր զույգերն են արդյունքում ունենում այս նույն փորձառությունը: Որոշ ամուսնություններ կարող են չկայանալ, երբ պոռնոգրաֆիա օգտագործողը հրաժարվում է առաջընթացից: Անկախ այն բանից, թե ինչ ուղի կընտրեին ամուսինները, այնուամենայնիվ, ես հասկացա, որ կանանց ծառայություն մատուցելու խորհուրդը ոգեշնչում է: Հուսով եմ, որ ոչ մի քույր այս իրավիճակում երբեք չի ունենա այն զգացողությունը, որ ինքն անտեսված է, թերագնահատված կամ չհասկացված իր եպիսկոպոսի կողմից: Եպիսկոպոսի ծառայությունը գլխավոր միջոց է հանդիսանում, որի օգնությամբ Փրկիչը ի հայտ է բերում յուրաքանչյուր սիրտ լիարժեք բուժելու Իր զորությունը, նույնիսկ նրանց, ովքեր «խոցված են խորը վերքերով» (Հակոբ 2.35): ■

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻՆ

«Որպես ղեկավարներ՝ մենք նաև մեծապես մտահոգված ենք պոռնոգրաֆիայի կախվածությունից տառապողների կողակիցների և ընտանիքների համար: Երեց Ռիչարդ Գ. Սքոթը խոստացել է. «Եթե դուք անձամբ ազատ եք լուրջ մեղքերից, զուր տեղը մի տառապեք ուրիշի մեղքերի հետևանքով: . . . Դուք կարող եք կարեկցանք զգալ: . . . Սակայն դուք չպիտի ձեզ պատասխանատու զգաք այդ արարքների համար»: Իմացեք, որ դուք մենակ չեք: Կա օգնություն: Ամուսինների համար մատչելի են կախվածությունից ազատվելու ժողովները, ներառյալ հեռախոսային ժողովները, որոնք թույլ են տալիս ամուսիններին զանգահարել ժողովի ժամանակ և մասնակցել իրենց իսկ տնից»:

Լինդա Ս. Ռիվս, Սփոփող Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական, «Պաշտպանություն պոռնոգրաֆիայից՝ Քրիստոսակենտրոն տուն», *Լիահոնա*, մայիս 2014, 16:

ԱՇՏԱՐԱԿԻ պահապանները

«Քո պարիսպների վերայ, ով Երուսաղէմ, պահապաններ եմ դրել. նորանք բոլոր օրը եւ բոլոր գիշերը բնաւ պիտի չլռեն. դուք ով Տիրոջը յիշողներ, մի լռէք»:
Եսայիա 62.6

Պահապաններ

Պահապանները պահակներ էին, որ կանգնում էին պատերի կամ աշտարակների վրա, որպեսզի կարողանային հսկել և զգուշացնել հեռվից մոտեցող վտանգի մասին: Նրանք վարձվում էին պաշտպանելու քաղաքները, այգիները, դաշտերը և արոտավայրերը:

Աշտարակների տեսակները

Քաղաքի պատերի աշտարակները սովորաբար կառուցվում էին դարպասների վրա կամ անկյուններում (տես Բ Մնացորդաց 26.9): Դարպասների և անկյունների աշտարակները ապահովում էին բարձր դիրք, որտեղից տեսնում էին մոտեցող վտանգը և կանխում թշնամու հարձակումները (տես Բ Մնացորդաց 26.15):

Բերդերի կամ միջնաբերդերի աշտարակները սովորաբար առանձին կառույցներ էին, կառուցված բարձր մակարդակի կամ այլ ռազմավարական վայրերում: Դրանք երբեմն այնքան մեծ էին լինում, որ վերջնական ապաստան էին ծառայում մի ամբողջ քաղաքի բնակիչների համար, երբ նրանք հարձակման էին ենթարկվում (տես Դատավորաց 9.46–52):

Այգիների, դաշտերի կամ արոտավայրերի աշտարակները փոքր շինություններ էին, որոնք կառուցվում էին օգնելու պաշտպանել բերքը և նախիրները գողերից ու գազաններից (տես Բ Մնացորդաց 26.10, Եսայիա 5.2, 27.3): Հաճախ առաջին հարկում գտնվում էր այն սենյակը, որտեղ պահվում էին գործիքները:

Աշտարակի պահապանները

մեծ տեսադաշտ ունեն: Որպես Աստծո կողմից կանչված և լիազորված ծառաներ, մարգարեներն առանձնանում են աշխարհից, ավելի են մոտենում Նրան և նրանց թույլ է տրվում ամեն ինչ տեսնել երկնային տեսանկյունից:

Տեսնում են բաներ, որոնք ուրիշները տեսնել չեն կարող: «Բայց տեսանողը կարող է իմանալ բաների մասին, որոնք անցյալ են և նաև բաների մասին, որոնք պետք է գան, և նրանց միջոցով բոլոր բաները պետք է բացահայտվեն, կամ, ավելի շուտ, գաղտնի բաներ պիտի հայտնի դարձվեն, և թաքնված բաներ պետք է ի լույս գան, և բաներ, որոնք չեն իմացվել, պիտի իմացվեն նրանց միջոցով, և նաև նրանց միջոցով պիտի իմացվեն բաներ, որոնք այլ կերպ չէին կարող իմացվել» (Մոսիա 8.17):

Զգոն են: Մարգարեներն ունեն լուրջ պատասխանատվություն՝ զգուշացնելու մեզ եկող վտանգների մասին, և նրանք կշարունակեն անել դա՝ անկախ ժողովրդի կարծիքից կամ հասարակության միտումներից:

Զգուշացնում են բաների մասին, որոնք դեռևս հեռվում են: «Մարգարեն դատապարտում է մեղքը և կանխավ ասում է հետևանքների մասին: Նա արդարության քարոզիչ է: Երբեմն մարգարեները կարող են ոգեշնչվել կանխավ պատմելու ապագան՝ մարդկության օգտի համար» (Guide to the Scriptures, "Prophet," lds.org/scriptures/gs):

Առաջարկում են ապահովություն և պաշտպանություն Ականջ դնելով մարգարեի զգուշացումներին՝ մենք կարող ենք ապահովություն գտնել և խուսափել փորձանքներից, որոնք սպասվում են մեզ անհատապես կամ ընդհանուրին, եթե մենք չհնազանդվենք: ■

ՍԵՂՄՐԱԿԵՐԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ԵՏԻՆ ՖՈՆ © ISTOCK/THINKSTOCK, ՔՐԻՍՏՈՍԸ ԿԱՆՉՈՒՄ Է ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՄԻՏՔԵՐՈՒՄ Կ. ԹԵԼՅԵՆԻՆ

ՀԵՏԵՎԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Դարեր շարունակ մարգարեները կատարել են իրենց պարտականությունները և մարդկանց զգուշացրել սպասվող վտանգների մասին: Տիրոջ Առաքյալները պարտավոր են հետևել, զգուշացնել և օգնության հասնել նրանց, ովքեր պատասխաններ են փնտրում կյանքի հարցերին»:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Աստված ղեկի մոտ է», *Լիահոնա,* նոյեմբեր 2015, 25:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՓԱՍՏԵՐ

Հին Կտակարանում Տերը երբեմն համեմատվում է բերդի կամ աշտարակի միջնաբերդի ապաստանի հետ (տես Սաղմոս 18.2, 61.3, Առակաց 18.10, Բ Թագավորաց 22.3), իսկ մարգարեները երբեմն համեմատվում են պահապանների հետ (տես Եսայիա 62.6, Երեմիա 6.17, Եզեկիել 3.17, 33.7, Ովսէէ 9.8, Միքիա 7.4):

«Մարդի որդի, ես քեզ դէտ եմ դրել Իսրայէլի տան համար. եւ դու պետք է իմ բերանից խօսք լսես եւ զգուշացնես նորանց իմ կողմանէ» (Եզեկիել 3.17, տես նաև Եզեկիել 33.1–7):

ԵՐԿՐՈՐԴ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Երբ առաջին անգամ տեսա նրան, իմ ձեռքին ջութակ կար:

Նա մոտեցավ ինձ, երբ ես ջութակի պատյանը ձեռքիս քայլում էի դեպի ճաշարան:

«Ջութակ»,- ասաց նա, երբ մոտեցավ ինձ:

«Այո»,-ասացի ես:

Ես երբեք իրականում չէի խոսել որևէ հաշմանդամի հետ և չգիտեի, թե էլ ինչ ասեմ: Նա հետևեց ինձ մինչև իմ սեղանը և նստեց իմ կողքին՝ ցույց տալով իմ ջութակի պատյանը:

«Ջութակ»,- կրկին ասաց նա:

Ես բացեցի իմ պատյանը և նրա աչքերը փայլեցին: Շատ կոպիտ ձևով նա քաշեց լարերից: Իմ սիրտը տակնուվրա եղավ, երբ պատկերացրեցի, թե իմ ջութակից մի լար է պոկվում, և ես անմիջապես փակեցի պատյանը: Նախքան գնալը, նա գրկեց ինձ:

Դրանից հետո ես նրան հաճախ էի տեսնում:

Ամեն անգամ ինձ տեսնելիս նա ձեռքերը դնում էր իմ ուսերին և համբուրում ճակատս:

Ավագ դպրոցի տարիներին ես միշտ փորձում էի խուսափել նրանից, երբ տեսնում էի, որ գալիս էր դեպի իմ կողմը: Երբ նրան հաջողվում էր գտնել ինձ և պարուրել գրկախառնումներով ու համբույրներով, ես մի քանի վայրկյան հանդուրժում էի դրանք, ինձ ստիպելով ժպտալ և ապա արագ հեռանում էի՝ առանց որևէ բան ասելու:

«Օ՜հ, ոչ»,- ցածր ձայնով ասացի ես, երբ տեսա նրան ավագ դպրոցի նվագախմբի իմ վերջին համերգի ժամանակ: Համերգից հետո նա մոտենում էր այն տեղին, որտեղ ես կանգնած էի իմ ընկերների հետ դահլիճից դուրս:

Իմ ընկերները հետ քաշվեցին, երբ նա մոտեցավ ինձ ժպիտը երեսին՝ պատրաստվելով գրկել ինձ:

«Վիլյամ»:

Ես շրջվեցի և տեսա մի կնոջ, ով վազելով մոտենում էր մեզ:

«Կներեք»,- ասաց նա՝ բռնելով նրա ձեռքից: «Վիլյամը ջութակ շատ է սիրում: Նա ինձ խնդրեց, որ այս երեկո բերեի նրան այս համերգին: Արի գնանք, սիրելիս»:

Մինչ այդ պահը ես չէի էլ գիտակցել, որ ես երբեք չեմ էլ իմացել նրա անունը: Ես հանդիպել էի Վիլյամին երկու տարի առաջ, սակայն այնքան շատ ժամանակ էի վատնել նրանից խուսափելու համար, որ երբեք չէի ջանացել իսկապես ճանաչել նրան: Մինչ ես նայում էի, թե ինչպես էին հեռանում Վիլյամն ու իր մայրը, ես ամաչեցի: Տարիներ անց, երբ ամուսնացա, ունեցա մի գեղեցիկ փոքրիկ տղա, ով Դաունի համախտանիշ ուներ, ում մենք կոչեցինք Սպենսեր: Երբ նայում էի իմ տղային, ես հաճախ հիշում էի Վիլյամին և խորհում էի, թե արդյոք Սպենսերն էլ է ունենալու նման փորձություններ: Արդյո՞ք մարդիկ կխուսափեն նրանից, քանի որ նա շատ է համբուրում կամ շատ ամուր է գրկում: Արդյո՞ք նրա հասակակիցներն իրենց անհարմար կզգան նրա սահմանափակումների պատճառով:

Երբ Սպենսերը չորս ամսական էր, ես տարա նրան մեր տարածքի հիվանդանոցը, որտեղ հանդիպում էր նշանակված բժշկի հետ: Մինչ մեքենայից հանում էի նրան, ես տեսա երկու մարդու, ովքեր մտան հիվանդանոց: Անհավատալի էր, սակայն ես հասկացա, որ դա Վիլյամն ու իր մայրն էին:

«Վիլյամ»: Ես կանչեցի, երբ մենք ավելի մոտեցանք: Միրտս սկսեց արագ բաբախել:

«Ողջույն»: Նա դանդաղ անցավ ավտոկայանատեղով՝ մինչ մի մեծ ժպիտ շողում էր նրա դեմքին: Նա առաջ մեկնեց իր ձեռքը և ոգևորված սեղմեց իմ ձեռքը:

«Ինչպե՞ս ես»: Հարցրի ես նրան:

«Ջութակ»,- ասաց նա՝ հուզմունքից փայլող աչքերով:

Ջութակ: Նա նույնպես հիշեց ինձ: «Այո,- ասացի ես ժպտալով, մինչ արցունքները խեղդում էին ինձ,- ես ջութակ էի նվագում»:

Մինչ մենք զրուցում էինք, իմ սրտում ես երախտագիտության աղոթք էի հղում սիրող Երկնային Հոր զորովագութ ողորմությունների համար, ով գիտեր, թե ես որքան էի ցանկանում կրկին հանդիպել Վիլյամին: Ես շնորհակալ եմ, որ Աստված տեսավ ինձ՝ պայքարող մի երիտասարդ մոր, որ ծանրաբեռնված էի իմ որդու առողջական խնդիրներով և մտահոգվում էի նրա ապագայի համար, և տվեց ինձ մի փորձառություն, որը հիշեցրեց ինձ, որ Նա տեղյակ է մեր մասին: ■

Քայլի Բալդվին՝ Արիզոնա, ԱՄՆ

«Ջութակ»,- ասաց Վիլյամը, երբ մոտեցավ ինձ:

ԱՍՈՒՄՆԱՐԱՆ ԱԼԵՆ ԳԱՐԻՆ

Ես լսեցի, թե կինն ինչպես էր անվերջ քանակությամբ մետաղադրամներ դնում վաճառասեղանի վրա իր հաշիվը վճարելու համար:

ԳՆԱ՛, ՕԳՆԻՐ ՆՐԱՆ

Ես կանգնած էի բենզալցակայանի հերթում: Իմ դիմաց մի մայր երկու երեխաների հետ խնդրեց 3 դոլարին համարժեք բենզին և երկու վանիլային կոն պաղպաղակ:

Առաջին հայացքից ես հասկացա, որ նրանք չունևոր էին: Երեխաները ոտաբոբիկ էին, իսկ հագուստները՝ պատառոտված:

Ես լսեցի, թե կինն ինչպես էր անվերջ քանակությամբ մետաղադրամներ դնում վաճառասեղանի վրա՝ իր հաշիվը վճարելու համար:

Իմ բենզինի համար վճարելուց հետո ես դուրս եկա և նայեցի մոր մեքենային: Այն մի հին մոդելի մեքենա էր, հավանաբար քիչ վազքով:

Ես կարեկցանքի ցավ զգացի այս երկու զավակների մոր համար, բայց շարժվեցի իմ մոտոցիկլով և գնացի իմ առօրյա գործերով:

Մայրուղու վրա մի ոռպե քշելուց հետո մի ձայն լսեցի. «Գնա՛, օգնիր նրան»: Հուշումը եկավ երկու անգամ:

Ես գլուխս տարուբերեցի՝ մտածելով, որ նա արդեն գնացած կլինի: Համենայն դեպս, ի՞նչ կասեի ես նրան:

Ձայնը պարզորոշ լսվեց երրորդ անգամ. «Գնա՛, օգնիր նրան»:

Ես շրջվեցի դեպի լցակայանը՝ փորձելով հասկանալ, թե ինչ էի պատրաստվում ասել, եթե նա դեռ այնտեղ էր:

Երբ տեղ հասա, տեսա, որ նրա մեքենայի դռները բաց էին: Նա վարորդի նստատեղում էր, իսկ նրա երկու երեխաները վայելում էին պաղպաղակը ետևի նստատեղին:

Ես մի կարճ աղոթք ասացի՝ Երկնային Հորից հարցնելով, թե ինչ պիտի ասեի: Նույն ձայնն ասաց ինձ. «Ներկայացիր և հարցրու՝ արդյոք նա օգնության կարիք ունի»: Ես մոտեցա նրա ավտոմեքենային և ներկայացա: Ես կիսվեցի նրա հետ, որ հուշում էի ստացել հարցնել նրան, արդյոք նա օգնության կարիք ուներ:

Նա սկսեց լաց լինել և ասաց. «Ես հենց նոր ավարտեցի աղոթքս՝ Հիսուսին խնդրելով, որ Նա ուղարկի ինչ-որ մեկին՝ օգնելու ինձ»:

Երկնային Հայրը պատասխանել էր նրա աղոթքին: Ես վճարեցի նրա ավտոմեքենան ամբողջովին վառելիք լցնելու համար և նրան տվեցի մեր երեցների քվորումից մեկի հեռախոսահամարը, ով այդ ժամանակ աշխատող էր փնտրում: Ես չգիտեմ, թե ինչ պատահեց այս երիտասարդ մոր հետ դրանից հետո, բայց երախտապարտ եմ, որ հետևեցի նրան օգնելու հուշումին: ■

Թոմաս Ռոբինս, Կալիֆորնիա, (ԱՄՆ)

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒՄԸ՝ ՍԹԵՆ ՖԵԼՈՈՆԻ

ՄԻ՛ ԿՐԱԿԻՐ

Ես ու Բոբը նստած էինք մեր ոստիկանական մեքենայում՝ սպասելով փողոցով ներքև շարժվելու հրամանին: Մենք արդեն երկու ժամ հետևում էինք ավտոմեքենային, երբ ոստիկանության ռադիոն տագնապի ազդանշան տվեց:

«Զինված կողոպուտ», - հաղորդեց ազդանշանը: «Երկու տղամարդ, երկուսն էլ զինված: Նրանց հենց նոր տեսել են նարնջագույն մեքենայով: Ականատեսներն ասում են, որ տղամարդիկ դաժան են և կրակելու պատրաստ»:

Այս տարածքում վերջերս տեղի էին ունեցել բազմաթիվ զինված կողոպուտներ, սակայն կողոպտիչներին մի քանի անգամ հաջողվել էր փախչել, չնայած մեր լավագույն ջանքերին: Այս մտքերն էին անցնում իմ գլխով, երբ տեսա, թե ինչպես փողոցի մթության մեջ երկու կերպարանք դուրս եկան մի տնից և ցատկեցին նարնջագույն մեքենայի մեջ: Հիմա նրանք ընթանում էին մեր առջևից:

«Լրացուցիչ օգնություն եմ խնդրում», - ասացի ես: «Կասկածյալները մեր տարածքից ուղևորվում են դեպի հյուսիս»:

Մեզ օգնության հասած քաղաքացիական հագուստով խուզարկուները սովորական



Չնայած լարվածությանը, ես մի ձայն լսեցի: Այն հանգիստ էր, բայց հրամայական ու ազդու: «Մի՛ կրակիր»:

ՆԱՐՈՒՍՐԴՈՒՆԸ՝ ԱԼԵՆ ԳԱՐՆԻՍ

ավտոմեքենայով գնում էին նարնջագույն ավտոմեքենայի առջից, իսկ ես ու Բոբը հետևում էինք նրանց: Երբ երեք ավտոմեքենաները կամրջի վրա էին, մեր լրացուցիչ խումբը հանկարծ թեքվեց և կամրջի լայնքով արգելակելով՝ փակեց նարնջագույն մեքենայի ճանապարհը, իսկ մենք կանգ առանք դրա ետևում՝ շրջափակելով մեր կասկածյալներին: Համարյա անմիջապես մեքենան կանգ առավ և երկու կերպարանքները կորան տեսադաշտից:

«Մեքենայից դու՛րս եկեք՝ ձեռքերը գլխին դրած»: Հրամայեցի ես, երբ դուրս եկա իմ մեքենայից: Ոչ ոք չարձագանքեց:

Ուժերս լարած և կրակելու պատրաստ, ես նորից հրամայեցի. «Մեքենայից դու՛րս եկեք՝ ձեռքերը գլխին դրած: Հենց հիմա»:

Հանկարծ վարորդը բարձրացավ և շրջվեց դեպի ինձ: Ես տեսա, թե ինչպես մի նիկելապատ առարկա փայլեց նրա ձեռքում:

Ոստիկանի իմ պատրաստվածությունը և սթափ միտքը թելադրեցին ինձ, որ քաշեմ ձգանը իմ կյանքը փրկելու համար: Չնայած լարվածությանը, ես մի ձայն լսեցի: Այն հանգիստ էր, բայց հրամայական և ազդու: «Մի՛ կրակիր»:

Ես ակնկալում էի, որ ինձ վրա կկրակեն ցանկացած պահի, բայց սպասում էի, որ ինչ-որ մեկը մեքենայից առաջինը կրակ բացի: Փոխարենը, վարորդը բարձրացրեց իր ձեռքերը և գլխից վերև պահեց այն, ինչը զենքի էր նման, և իջեցրեց ձեռքերը իր փեշի մեջ:

«Չշարժվե՛լ»: Ասացի ես, երբ շտապեցի դեպի մեքենան: «Մի՛ շարժվիր»:

Այդ պահը նման էր հեռուստատեսային ծրագրի, մինչև որ ես գիտակցեցի, որ մեքենայում քարացած հանցագործները, փաստորեն, երկու վախվորած երիտասարդ աղջիկներ էին: Այն, ինչը ես զենքի տեղ էի ընդունել, ամրագոտու մի փոքրիկ ճարմանդ էր:

Շուտով իմացանք, որ աղջիկները ավտոմեքենան ժամանակավոր տվել էին իրենց ընկերներին: Նրանք գաղափար չունեին, թե ինչպիսի մարդիկ էին նրանք:

«Կարծում էի, քեզ կխփեն, Քոլ», Բոբն ասաց ինձ ավելի ուշ: «Ես համարյա կրակ էի բացել: Ես չգիտեմ, ինչու չարեցի»:

Երկու խուզարկուները նույնպես ասացին նույն բանը, բայց ոչ մեկը, ինձնից բացի չէր լսել ձայնը: Ես գիտեմ, որ միայն երկնային ուժը կարող էր փրկել այդ երկու աղջիկներին մահից, իսկ չորս ոստիկանական սպաներին՝ ողբերգական սխալ կատարելուց: Այս փորձությունը ինձ մի ամուր գիտելիք տվեց, որ մեր Երկնային Հայրը կարող է և կմիջամտի ի օգուտ մեզ: ■

Անանուն

ՍՈՎՈՐԵՑՐՈՒ ՆՐԱՆՑ ԿԱՐԴԱԼ ՄՈՐՄՈՆԻ ԳԻՐՔԸ

Շվեյցարիայի Ժնևի միսիայում ծառայելիս ես կանչվեցի և ձեռնադրվեցի որպես ճյուղի նախագահ, իսկ կինս կանչվեց որպես Սփոփող Միության նախագահ: Միասին մենք աշխատում էինք մեր ողջ ուժով, որպեսզի վերակենդանացնեինք մաքառող ճյուղը: 1960-ականներին կազմակերպված ճյուղում վերջին տարիներին ոչ մի մկրտություն չէր կատարվել և 15 տարվա ընթացքում այդ ճյուղից ոչ մի միսիոներ չէր մեկնել միսիա ծառայելու:

Ակնհայտ էր, որ մենք Տիրոջ օգնության կարիքն ունեինք, որպեսզի կարողանայինք լուծումներ գտնել ճյուղի դեմ ծառացած բազում խնդիրների համար: Երբ աղոթեցի ճյուղում առկա խնդիրների համար, Տիրոջ Հոգին ասաց ինձ. «Սովորեցրու անդամներին կարդալ Մորմոնի Գիրքը և դու հաջողություն կունենաս»:

Անմիջապես մենք ծրագրեր կազմեցինք, որպեսզի բոլոր անդամները սկսեին կարդալ Մորմոնի Գիրքը:

Մենք արտասովոր արդյունքների ականատեսը եղանք: Խաղաղությունն ու Հոգին կրկին պարուրեցին այդ ճյուղը: Նոր ընտանիքներ միացան Եկեղեցուն: Ծառայելու ցանկությամբ տոգորված մի երիտասարդ մեկնեց միսիա: Քայքայման եզրին կանգնած բազում ամուսնություններ ամրացան և ընտանիքներ սերտացան: Առ այսօր այդ ճյուղը շարունակում է առաջադիմել:

Մենք և ճյուղի անդամները վկայություն ունենք Մորմոնի Գրքի զարմանահրաշ զորության մասին: Այն իրոք մեր կրոնի, ավետարանի և Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայությունների պորտաքարն է: Մենք սիրում ենք այն մեր ողջ սրտով: Դա անսահման և հաստատուն գիտելիքի աղբյուր է:

Այդ փորձառությունն ուսուցանեց մեզ, որ Մորմոնի Գիրքը հավաստի միջոց է օգնելու մեր եղբայրներին և քույրերին՝ դուրս գալ երկիրը ստվերող հոգևոր խավարից: Այս գիրքը խաղաղություն, ուրախություն, երջանկություն և Փրկիչ Հիսուս Քրիստոսին հետևելու մեծ ցանկություն է պարգևում: ■

Էմիլիան Ռիու, Քվեբեք, Կանադա

Ճանաչել սատանայի կեղծիքները

Դենիս Ք. Գանթ

Խանութում ես մի քանի ամերիկյան թղթադրամ էի դնում դրամապանակիս մեջ, երբ դրանցից մեկը գրավեց իմ ուշադրությունը: Ինձ թվաց, որ մյուսների համեմատ դրա կանաչ գույնը մի քիչ բաց երանգ ուներ, ուստի ես մոտիկից զննեցի այն: Ապա ես նկատեցի, որ Նախագահ Ջորջ Վաշինգտոնի նկարն այդքան էլ պարզ չի երևում: Նույնիսկ թուղթը մի տեսակ տարօրինակ թվաց ինձ: Դա կեղծ թղթադրամ էր: Վաճառողը փոխանակեց այն իսկական դոլարով և ապա կեղծ դրամը հանձնեց խանութի մենեջերին:

Դրանից հետո ես շատ եմ մտածել այդ կեղծ դոլարի մասին: Խորհել եմ, թե որքան ժամանակ է այն շրջանառության մեջ եղել, և քանի մարդ է տարիների ընթացքում խաբվել դրանով: Ի դեպ, եթե ես ուշադիր չլինեի, ես նույնպես կարող էի խաբվել: Սակայն, համեմատելով այն իրական փաստերի հետ և կենտրոնանալով տարբերությունների, այլ ոչ թե նմանությունների վրա, ես նկատեցի, որ դա կեղծ էր:

Մորմոնի Գիրքը լի է հոգևոր կեղծիքների օրինակներով, որոնց հեղինակները հետևում էին սատանային իրենց խաբեություններում և մոլորեցնում ուրիշներին իրենց իսկ շահի համար: Ուսումնասիրելով նրանց հնարքներն ու մարտավարությունը, մենք սկսում ենք նկատել նրանց թերություններն ու սխալները, ճիշտ ինչպես փորձառու աչքն է սկսում նկատել իսկական և կեղծ դրամների տարբերությունները: Որքան շատ ենք վարժեցնենք մեր աչքերը տարբերությունները նկատելուն, այնքան ավելի լավ կպատրաստվենք բացահայտելու մեր օրերի կեղծիքները և դիմակայելու դրանց ստերին:

Երբ մենք հադիպում ենք հոգևոր կեղծիքների, Մորմոնի Գիրքը կարող է օգնել մեզ որոշել, թե ինչն է ճիշտ և ինչը՝ ոչ:

Գիտելիք ձեռք բերել սատանայի կեղծիքների վերաբերյալ

Սատանան փորձում է մոլորեցնել մեզ հոգևոր կեղծիքների իր սեփական նշաններով, և եթե մենք ուշադիր չլինենք, մենք կխաբվենք: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը (1838–1918) նախազգուշացրել է. «Սատանան հմուտ նմանակող է, և մինչ ճշմարիտ ավետարանը տրվում է աշխարհին ավելի շատ, քան երբևէ, նույն արագությամբ էլ նա տարածում է կեղծ վարդապետությունները: Զգուշացեք նրա կեղծ զաղափարներից. դրանց միջոցով դուք ձեռք կբերեք ոչ ավելին, քան հիասթափություն, թշվառություն և հոգևոր մահ»:[1]

Լավագույն պաշտպանությունը, որն ունենք սատանայի կեղծիքներին խաբվելու դեմ, ավետարանի ճշմարտություններին լավագույնս ծանոթ լինելն է: Որքան ավելի խորը իմանանք ճշմարտությունը, այնքան ավելի հեշտ կլինի նկատել տարբերությունները, երբ սատանան ներկայացնի մեզ իր կեղծիքները: Ուստի, երբ նա անի դա, մենք պետք է փնտրենք տարբերությունները և ոչ թե նմանությունները, ճիշտ՝ ինչպես ես

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ՝ ISTOCK/THINKSTOCK

վարվեցի իմ դոլարի հետ, քանի որ այդ ձևով խաբեությունները միշտ հայտնի կդառնան:

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն (1899–1994) ուսուցանել է. «Մորմոնի Գիրքը բացահայտում է Քրիստոսի թշնամիներին: . . . Աստված Իր անսահման կանխագիտությամբ այնպես է ձևավորել Մորմոնի Գիրքը, որ մենք կարողանանք տեսնել սխալը և իմանալ, թե ինչպես պայքարել մեր օրերի կեղծ կրթական, քաղաքական, կրոնական և փիլիսոփայական տեսակետների դեմ»:[2]

Այսօր մենք պատերազմում ենք սատանայի դեմ: Մենք, ինչպես ցանկացած բանակ, պետք է իմանանք, թե ինչ է պատրաստվում անել թշնամին: Իմացությունը , թե երբ և որտեղից կհարձակվի թշնամին, կարող է չափազանց արժեքավոր տեղեկություն լինել: Ահա, թե ինչու է նման տեղեկատվություն ձեռք բերելու եզրույթը կոչվում «գիտելիքներ հավաքել»: Ճանաչել մեր թշնամուն նշանակում է դառնալ ավելի խելացի, քան մեր թշնամին է: Մորմոնի Գիրքը կարող է օգնել մեզ «գիտելիքներ հավաքել» սատանայի կեղծ մեթոդների վերաբերյալ:

Շողոքորթությունը կեղծիք է

Մորմոնի Գրքի կեղծավորների մեծ մասը օգտագործում են շողոքորթությունը և անձնական հմայքը՝ իրենց նպատակին հասնելու համար: Օրինակ, Մերեմը «ուներ ժողովրդի լեզվի կատարյալ իմացություն. ուստի, կարողանում էր օգտագործել անչափ շողոքորթություն և խոսքի մեծ զորություն՝ ըստ դևի զորության» (Հակոբ 7.4): Նոյ թագավորի ամբարիշտ քահանաները

ասում էին «սին ու շողոքորթ խոսքեր» (Մոսիա 11.7)՝ դրդելով ժողովրդին կռապաշտություն և այլ ամբարշտություններ գործել: Կորիհորը հասավ նման արդյունքների իր օրերում՝ «մոլորեցնելով շատերի սրտերը» (Ալմա 30.18): Ամաղիկիան և Գադիանթոնը օգտագործել են շողոքորթելու իրենց հակումները, որպեսզի հավաքեն ամբարիշտ հետևորդների բանակներ (տես Ալմա 46.10, Հելաման 2.4):

Սա պատահականություն չէ: Շողոքորթությունը ծանծաղ է, կեղծավոր, սին և չափազանցվող: Նեփին զգուշացրել է նրանց մասին, ովքեր «կսովորեցնեն այս ձևով՝ կեղծ, սին և հիմար վարդապետություններ, և փքված կլինեն իրենց սրտերում, և կջանան իրենց խորհուրդները խորը թաքցնել Տիրոջից. և նրանց գործերը խավարում կլինեն» (2 Նեփի 28.9):

Շողոքորթությունը հաճախ օգտագործվում է խաբելու համար. այն սովորաբար ունենում է ծածուկ շարժառիթ կամ գաղտնի նպատակ: Շողոքորթությունը հիմնականում վերաբերում է ձևին և ոչ թե գաղափարին, և այն հրապուրիչ է բնական մարդու մեջ եղած ունայնության ու հպարտության համար: Ուստի, Տիրոջ մարգարեներն ասում են մեզ պարզ, սակայն կարևոր ճշմարտություններ, որոնք մենք *պետք է* լսենք:

Շողոքորթությունն այն լեզուն է, որով խոսում է սատանան: Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստը (1920–2007)՝ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականը, բացատրել է. «[Սատանայի] ձայնը հաճախ հնչում է շատ ողջամիտ և նրա ուղերձը շատ արդարացված: Դա գրավիչ, հետաքրքիր ձայն է՝ քաղցր հնչողությամբ: Այն ոչ կոպիտ է, ոչ էլ անհամապատասխան: . . . Ոչ ոք ականջ չէր դնի սատանայի ձայնին, եթե այն կոպիտ ու անդուր հնչեր»:[3]

«[Սատանայի ձայնը] գրավիչ ու հետաքրքիր է: . . . Ոչ ոք ականջ չէր դնի սատանայի ձայնին, եթե այն կոպիտ ու անդուր հնչեր»:

Երբ աշխարհը ներկայացնում է մեզ որևէ գաղափար, փիլիսոփայություն կամ կարծիք, որը ունայն է և բխում է հպարտությունից կամ չափից ավելի լավն է թվում ճշմարիտ լինելու համար, դա անմիջապես պետք է նախազգուշացում լինի մեզ համար: Վերաբերվեք դրանց որպես կեղծ գաղափարների: Համեմատեք դրանք ճշմարտությունների հետ, որոնք ուսուցանվել են Տիրոջ մարգարեների կողմից: Փնտրեք տարբերություններ, այլ ոչ թե նմանություններ, և կեղծ գաղափարներն ակնհայտ կդառնան:

Նեորը հայտնի կեղծավոր էր

Նեորը ազատորեն օգտագործում էր սատանայի շողոքորթության մեթոդը: Եկեք ուսումնասիրենք նրան որպես հոգևոր կեղծավորության օրինակի: Նեորը, ում վարդապետությունը կարծես թե ընդունում էր փրկիչ ունենալու գաղափարը, հայտնի և տաղանդավորքարոզիչ էր նեփիացիների մեջ: Նեորը բազմաթիվ հետևորդներ ձեռք բերեց, ուսուցանելով, որ «ողջ մարդկությունը կփրկվի վերջին օրը» և «վերջում բոլոր մարդիկ պետք է ունենան հավերժական կյանք» (Ալմա 1.4):

Կարո՞ղ ենք տեսնել, թե ինչու էր Նեորի ուղերձը շատ գրավիչ: Նա ուսուցանում էր շատ հեշտ թվացող գաղափարներ, ասելով, որ քանի որ Աստված սիրում է բոլորին, Նա կփրկեր բոլորին՝ անկախ ամեն ինչից: Ուստի, առաջ գնացեք և արեք ինչ ուզում եք, քանի որ ամեն բան լավ է լինելու: Դա մի հրապուրիչ փիլիսոփայություն է, որը թևածում էր Նեորի օրերում (տես Ալմա 1.5), ինչպես նաև այն ներկայացվում

է շատերի կողմից մեր օրերում: Երկինք տանող անվճար տոմսը մի բան է, որը մարդիկ ըստ երևույթին ցանկանում են ունենալ:

Այսպիսով, ո՞րն էր Նեորի ուղերձի խնդիրը: Եկեք կրկին վերանայենք նրա փաստարկների հիմնական կետերը.

- Աստված ստեղծել է ողջ մարդկությանը. ճիշտ է:
- Աստված ստեղծել է ողջ մարդկությանը. ճիշտ է:
- Մենք չպիտի վախենանք Աստծուց. ճիշտ է:
- Փրկության գաղափարը պետք է ուրախացնի մեզ. ճիշտ է:

Առայժմ կան բազմաթիվ նմանություններ Նեորի ուսուցանածի և ավետարանի ճշմարտությունների միջև: Սակայն հիշեք, ճիշտ՝ ինչպես կեղծ թղթադրամի դեպքում, մենք պետք է փնտրենք տարբերությունները, ոչ թե նմանությունները: Ուստի, եկեք դիտարկենք Նեորի վերջին գաղափարը.

- Աստված բոլորին կպարգևի հավերժական կյանք. կեղծ է:

Սիա այն կարևոր տարբերությունը, որն ասում է մեզ, որ Նեորը հոգևոր կեղծավոր է: Ֆիզիկական մահից փրկությունը ապահովագրված *է* բոլորի համար, սակայն հոգևոր մահից փրկությունը կախված է ապաշխարելու մեր ցանկությունից: Եթե մենք ապաշխարենք, ապա կարող ենք ստանալ հավերժական կյանք (տես Հակոբ 6.11): Սակայն այն ձրի չի տրվում:

Գեդեոնն ու Ալման նկատում են կեղծիքը

Նեորի չար մտադրությունները բացահայտվեցին այն օրը, երբ նա հանդիպեց Գեդեոնին՝ Աստծո Եկեղեցու մի արդար ուսուցչի: Տարիներ առաջ Գեդեոնը պայքարել էր Նոյ թագավորի դեմ, ուստի փորձառություն ուներ հոգևոր կեղծավորների հետ (տես Մոսիա 19.4–8): Նեորը «սկսեց սաստիկ վիճել նրա հետ, որպեսզի կարողանար եկեղեցու ժողովրդին մոլորեցնել. բայց [Գեդեոնը] ընդդիմացավ նրան՝ խրատելով նրան Աստծո խոսքերով» (Ալմա 1.7): Գեդեոնը հասկացել էր, որ Նեորը կեղծավոր էր: Երբ բացահայտվեց Նեորի էությունը, նա ցանկացավ կիրառել սատանայի մեկ այլ միջոց՝ սպանությունը: Սակայն Գեդեոնի մահը զուր չանցավ: Մարդիկ կեղծավոր Նեորին բերեցին Ալմայի առաջ դատվելու:

Ալման նկատեց, որ Նեորը ոչ միայն մեղավոր էր քահանանենգության և սպանության համար, այլ նաև, որ եթե նա ազատության մեջ մնար, քահանանենգությունը ժողովրդի մեջ «լիակատար կործանման կհասցնի նրանց» (Ալմա 1.12): Ուստի, Նեորը մահվան դատապարտվեց, և «խայտառակ մահ տարավ» (Ալմա 1.15):

Գեդեոնն ու Ալման օրինակ են ծառայում մեզ համար: Երբ մենք ունենք Հոգին մեզ հետ, մենք կտեսնենք և կլսենք «բաները, ինչպես դրանք իրականում կան» (Հակոբ 4.13): Մենք կկարողանանք տարբերել սատանայի կեղծավոր ծրագրերն ու նախագծերը «կատարյալ իմացությամբ, ինչպես ցերեկը խավար գիշերից» (Մորոնի 7.15):

Մեր «կեղծավոր» թշնամին խելացի է, սակայն Գեդեոնի և Ալմայի նման մենք կարող ենք լինել ավելի խելացի: Ճիշտ, ինչպես ես սկսեցի աստիճանաբար նկատել իմ դոլարների միջև եղած տարբերությունները, մենք կարող ենք աստիճանաբար վարժել մեր աչքերը, ինչպես նաև մեր միտքը և հոգին, որպեսզի զանազանենք ճշմարիտը և սուտը: Երբ այդպես անենք, մենք կբացահայտենք կեղծավորներին և կդիմակայենք նրանց ստերին: ■

Հեղինակն ապրում է Յուտայում (ԱՄՆ):

ՍԱՏԱՆԱՆ ՍՏԵՐ Է ՏԱՐԱԾՈՒՄ

«Սատանան, մեր հակառակորդը, ուզում է, որ ձախողվենք: Նրա ջանքերի մի մասը ստեր տարածելն է, որպեսզի ոչնչացնի մեր հավատը: Նա խորամանկորեն առաջարկում է, որ կասկածամիտը, թերահավատը, ցինիկը, հարուստ կենսափորձ ունեն և խելացի են, իսկ նրանք, ովքեր հավատում են Աստծուն և նրա հրաշքներին՝ տգետ, իրականությունից կտրված և կամ մտամոլոր են, ընդունակ չեն իրենց մտածելակերպով նորմալ ընկալելու: Սատանան քարոզում է, որ սոցիալապես ընդունելի է կասկածել հոգևոր պարգևներին և իսկական մարգարեների ուսմունքներին»:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական, «Մի վախեցիր, միայն հավատա», *Լիահոնա,* նոյ. 2015, 78:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Joseph F. Smith, *Gospel Doctrine,* 5th ed. (1939), 376.
2. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն* [2014], 159):
3. James E. Faust, “The Forces That Will Save Us,” *Liahona,* Jan. 2007, 4.

Չափենք Մադագասկարի օրինությունները

Մայնդի Էնն Սելու
Եկեղեցու ամսագրեր

Այն բանից հետո, երբ Սոլոֆո Ռավելոջաոնայի կինը իր առաջին հղիության ժամանակ ցավալիորեն կորցրեց երեխային, նա զգաց, որ իրենց աղոթքները տեղ էին հասել. մեկ տարի անց նա երկրորդ անգամ հղիացավ: Նա և կինը՝ Հարի Մարտինը, դստեր ծնունդը համարում են իրենց մեծագույն օրհնություններից մեկը: Սոլոֆոն պարզաբանում է. «Քանի որ մենք խնդրել ենք Աստծուն և Նա տվել է մեզ դուստր, մենք կոչել ենք նրան մի անունով, որը մալագասերեն նշանակում է «Աստծո պատասխան»:

Սոլոֆոն՝ Մադագասկարից այդ երիտասարդ չափահասը, կառչում է այն գիտելիքից, որ Աստված պատասխանում է աղոթքներին և Իր ժամանակին օրհնում է հավատարիմներին: «Կյանքը դժվար է,- ասում է Սոլոֆոն,- և երբ մարդիկ չեն ստանում այն, ինչ ուզում են, ոմանք սկսում են հարցնել. «Ինչո՞ւ սա պատահեց ինձ հետ»: Պատահում է, որ նրանք հեռանում են Եկեղեցուց կամ հարցականի տակ դնում իրենց հավատն առ Աստված: Սակայն, երբ մենք ապրում ենք ավետարանի համաձայն և կարդում սուրբ գրությունները, ավելի հեշտ է լինում: Երբ դուք իրոք ապրում եք ավետարանի համաձայն, դուք իրոք կարողանում եք տեսնել օրհնությունները»:

Ապրելով մի երկրում, որն ունի լուրջ խնդիրներ, ինչպես օրինակ ծայրահեղ աղքատությունը, անկայուն կառավարությունը, թույլ ենթակառուցվածքները, բնական աղետները, պարզ է դառնում, թե ինչու է Սոլոֆոն ասում, որ կյանքը դժվար է: Սակայն նրա համար օրհնությունները, որոնք բերում է ավետարանով ապրելը, գերազանցում են ցանկացած դժվարության: «Ես նույնիսկ չեմ էլ կարող հաշվել օրհնությունները, որոնք ստանում եմ ավետարանով ապրելու շնորհիվ», ասում է նա:

Քանի որ Եկեղեցին համեմատաբար նոր է Մադագասկարում (առաջին ճյուղը ձևավորվել է 1990 թվականին), Սոլոֆոն ասում է, որ անդամ լինելու հետ կապված դժվարություններն առաջ են գալիս Եկեղեցու հետ կապված ասեկոսների և թյուրըմբռնումների արդյունքում: Սոլոֆոն մեկնաբանում է, որ ճիշտ ինչպես կենաց ծառի վերաբերյալ Լեքիի տեսիլքում էր, «մարդիկ ամբողջությամբ չեն ընդունում ավետարանը գուցե այն պատճառով, որ ամաչում են իրենց ընկերներից և վախենում, որ կմերժվեն իրենց ընտանիքի կողմից»: Սոլոֆոն տարբերվում է մյուսներից այն պատճառով, որ, ինչպես ինքն է ասում՝ «Ես երբեք չեմ ամաչել: Ես ապրում եմ ավետարանի համաձայն և ես միշտ ուզում եմ կիսվել իմ գործընկերների հետ, չնայած նրանցից մի քանիսն այդքան էլ չեն հետաքրքրվում»: Նա այնքան հաճախ է կիսվում իր պարզ վկայությամբ, որ գործընկերները նրան տվել են «քահանա» մականունը:

Անկախ իր երկրի քաղաքական ցնցումներից և տնտեսական ճգնաժամից, Սոլոֆոն ապավինում է օրհնություններին, որոնք գալիս են ավետարանով ապրելուց:

Տնտեսական և քաղաքական ցնցումների միջով անցնելով՝ Սոլոֆոն և Հարի Մարտինը ապավինում են իրենց տաճարային ուխտերի օրհնություններին (նրանք ամուսնացել են Յոհանեսբուրգ Հարավային Աֆրիկայի Տաճարում՝ իրենց միսիայից մեկ տարի հետո. նա ծառայել է Ուգանդայում, իսկ կինը՝ Մադագասկարում), ինչպես նաև վստահում են Տիրոջը: «Ես ունեմ ավետարանը, և ես պարզապես իմ կյանքը դնում եմ Աստծո ձեռքերում», մեկնաբանել է Սոլոֆոն: Նա կարող է ապավինել իր ամուր վկայությանը, քանի որ նա արդեն իսկ հավատում է «Աստծո պատասխաններին»: ■

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ՝ ՎԵՐԵՎՈՒՄ՝ SOLOFO RAVELOJAONA; ՆԵՐՔԵՎՈՒՄ՝ © ISTOCK/THINKSTOCK

ԱՎԵԼԻՆ ՍՈՒՐՈՖՈՅԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ եք դուք սիրում ուտել:

Մենք հիմնականում ուտում ենք բրինձ, շատ բրինձ: Ուտեստներից մեկը, որը ես շատ եմ սիրում, կոչվում է *ռավտոտո*: Կասավայի տերևները կտրատելու համար մենք օգտագործում ենք հատուկ գործիք և մատուցում այն բրնձի ու խոզի մսի հետ:

Ինչո՞վ եք սիրում զբաղվել ազատ ժամանակ:

Ես սիրում եմ դաշնամուր նվագել, երգել և կարդալ: Քանի որ ճյուղի նախագահը գիտեր, որ ես սիրում էի երգել և կարողանում էի դաշնամուր նվագել, երբ եկա ճյուղ, նա ասաց. «Ահա, կա մեկը, ով կարող է ղեկավարել մեր երգչախումբը», և ես սիրով տրամադրեցի իմ ժամանակը: Նախկինում նրանք երգչախումբ չեն ունեցել, սակայն ես սկսել եմ սովորեցնել նրանց և այժմ նրանք հաճույքով են պարապում:

ՓԱՍՏԵՐ ՄԱԴԱԳԱՍԿԱՐԻ ՄԱՍԻՆ

Լեզուներ. ֆրանսերեն, մալագասերեն
Մայրաքաղաքը՝ Անտանանարիվո

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԸ

22005222 մարդ (2012թ. տվյալների համաձայն)
Մադագասկարում հանդիպող կենդանիների 80 տոկոսը աշխարհում ուրիշ ոչ մի տեղ գոյություն չունեն
Աշխարհի 4-րդ ամենամեծ կղզին
Աշխարհի վանիլի 60 տոկոսը արտահանվում է Մադագասկարից

ԵԿԵՂԵՑԻՆ ՄԱԴԱԳԱՍԿԱՐՈՒՄ

9190 Վերջին Օրերի Սրբեր
37 ծխեր և ճյուղեր
2 ցից
1 միսիա

Երեց Դեյլ Գ. Ռենլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

ՀՈԳԵՎՈՐ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ. ԿԱՌՈՒՑԵԼ ՉՍՈՒՋՎՈՂ ՆԱՎ

Մենք պետք է ունենանք բավարար հոգևոր կայունություն, որպեսզի կարողանանք հաջողությամբ նավարկել մեր մահկանացու կյանքում և ապահով վերադառնալ մեր երկնային տուն։

17-րդ դարի սկզբին շվեդացիների թագավոր Գուստավ II Ադոլֆը հանձնարարեց կառուցել մի ռազմանավ, որը կնքվելու էր *Վասա* անունով։ Նավի կառուցման համար մեծ ռեսուրսներ պահանջվեցին, հատկապես կաղնի, որից պատրաստվելու էր առագաստանավը։ Գուստավ Ադոլֆը ուշադրությամբ հետևում էր կառուցման գործընթացին, փորձելով համոզվել, որ *Վասան* լիովին համապատասխանելու էր իր սպասումներին։

Կառուցման աշխատանքները սկսելուց հետո Գուստավ Ադոլֆը պատվիրեց, որ *Վասան* ավելի երկար լիներ։ Քանի որ լայնությունն ապահովող հենարաններն արդեն իսկ կառուցված էին թանկարժեք կաղնուց, թագավորը հանձնարարեց կառուցողներին մեծացնել նավի երկարությունը առանց լայնությունը մեծացնելու։ Չնայած նավաշինարարները գիտեին, որ փոխզիջման գնալը վտանգելու էր *Վասայի* կայունությունը ծովում, նրանք վարանեցին ասել թագավորին մի բան, ինչը նա չէր ցանկանա լսել։ Նրանք համաձայնվեցին։ Գուստավ Ադոլֆը նաև պնդեց, որ այս նավն ունենար ոչ թե մի սովորական տախտակամած, որտեղ հրացաններ էին դրվում, այլ երեք, որոնց վրա թնդանոթներ կդրվեին՝ ամենածանր թնդանոթները տեղակայելով վերին տախտակամածի վրա։ Կրկին դեմ գնալով իրենց ավելի խելացի վճիռներին, նավաշինարարները համաձայնվեցին։

1628 թվականի օգոստոսի 10-ին *Վասան* սկսեց իր առաջին նավարկությունը։ Երբ *Վասան* հեռացել էր նավահանգստից, ուժգին քամին ներխուժեց առագաստների մեջ, և նավը սկսեց թեքվել։ Շուտով «այն շուռ եկավ և ջուրը սկսեց լցվել տախտակամածները, մինչև այն կամաց-կամաց ամբողջովին սուզվեց ջրի տակ»։[1] *Վասայի* առաջին ճամփորդությունը կազմեց 1280մ։

Հասարակական բարձր դիրքի խորհրդանիշ ստեղծելու Գուստավ Ադոլֆի ցանկությունը կործանեց մի հոյակապ առագաստանավի նախագիծը, որը կարող էր դառնալ իր ժամանակի ամենահզոր ռազմանավը։ Նավաշինարարները լռեցին, քանի որ վախեցան դժգոհություն առաջացնել թագավորի մոտ, որի արդյունքում էլ զրկեցին թագավորին իրենց գիտելիքներից ու մտքերից։ Բոլոր ներգրավվածները կորցրեցին այդ կարևոր նախագծի

նպատակների հեռանկարը՝ պաշտպանել Շվեդիան և նպաստել երկրի շահերին ամեն պայմաններում: Նավը, որը փորձում է չենթարկվել ֆիզիկայի օրենքներին, պարզապես մի նավակ է, որը չի լողա:

Մենք պետք է ունենանք բավարար հոգևոր կայունություն, որպեսզի կարողանանք հաջողությամբ նավարկել մեր մահկանացու կյանքում, դիմակայելով հակասական հոսանքներին ու քամիներին, կատարելով անհրաժեշտ շրջադարձեր և ապահով վերադառնալ մեր երկնային տուն: Կան բաներ, որ մենք կարող ենք անել մեր հոգևոր կայունությունը զարգացնելու համար: Ես կնշեմ դրանցից չորսը.

Հնազանդվել Աստծո պատվիրաններին

Առաջինը Աստծո պատվիրաններին հնազանդվելն է: Ճիշտ ինչպես *Վասան* ենթակա էր ֆիզիկական օրենքներին, մենք բոլորս էլ ենթակա ենք հոգևոր օրենքների: Ոչ ոք բացառություն չէ: Մենք պետք է ենթարկվենք այս հոգևոր օրենքներին, որոնց մենք անվանում ենք Աստծո պատվիրաններ:

Նավը կառուցելիս ֆիզիկական օրենքներով աշխատելը միգուցե սահմանափակող թվար Գուստավ Ադոլֆին, սակայն *Վասան* չէր սուզվի նախքան իր առաքելությունը սկսելը, եթե այն համապատասխաներ այդ օրենքներին: Դրա փոխարեն այն կունենար ազատություն և ճկունություն՝ իրականացնելու այն, ինչի համար այն նախատեսված էր:

Այդպես էլ Աստծո օրենքներին հնազանդվելը պահպանում է մեր ազատությունը, ճկունությունը և ունակությունը՝ հասնելու մեր ներուժին: Պատվիրանները նախատեսված չեն մեզ սահմանափակելու համար: Դրա փոխարեն, հնազանդությունը մեծացնում է հոգևոր կայունությունը և ապահովում անսահման երջանկություն:

Հնազանդությունը մեր ընտրությունն է: Հիսուսն ասել է. «Ահա, ես տվել եմ ձեզ պատվիրանները. ուստի, պահեք իմ պատվիրանները» (3 Նեփի 15.10): Դա այնքան պարզ է: Եկեք անենք դա: Որոշեք, թե ինչպես կարող եք իսկապես հնազանդ լինել: Ոչ մի ուրիշ բան չի կարող ավելի շատ մեծացնել հոգևոր կայունությունը: Ոչ մի ուրիշ բան չի կարող տալ մեզ ավելի մեծ ազատություն՝ մեր կյանքի առաքելությունը կատարելու համար:

Ականջ դնել խորհրդին և սովորել ողջ կյանքի ընթացքում

Երկրորդը, մենք պետք է ուշադրություն դարձնենք և ականջ դնենք հուսալի աղբյուրներից եկող խորհրդին և պարտավորվենք սովորել մեր ողջ կյանքի ընթացքում:

Գիտելիքներ ձեռք բերելիս որոգայթ կարող է հանդիսանալ գոռոզությունը, որը կարող է առաջանալ, երբ մենք մտածում ենք, թե այնքան շատ բան գիտենք, որ էլ բան չկա սովորելու: Մենք բոլորս էլ տեսել ենք սա այն անհատների մոտ, ովքեր չափից ավելի վստահ են, որ իրենք խելացի են: Իսկապես շատ դժվար է ուսուցանել մեկին, ով կարծում է, թե արդեն ամեն ինչ գիտի:

Հաշվի առնելով այս փաստը և ցանկանալով լինել մեկը, ով կսովորի ողջ կյանքի ընթացքում, Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, ասել է. «Ես դեռ երեխա եմ, ով շատ բան ունի սովորելու: Գրեթե ցանկացած մարդ կարող է ինձ ինչ-որ բան սովորեցնել»:[2] Երբ Նախագահ Այրինգը կանչեց ինձ լինելու Բարձրագույն Իշխանավոր, նա ինձ մի կարևոր բան սովորեցրեց: Նա ասաց, որ երբ մեկը պատմում է մի պատմություն, որը նա նախկինում լսել է կամ օգտագործում է մի սուրբ գրություն, որին նա լավ ծանոթ է, նա ինքն իրեն հարցնում է. «Ինչո՞ւ է Տերն իմ ուշադրությունը սևեռում դրա վրա» և «Է՞լ ինչ կարող եմ սովորել այդ պատմությունից կամ սուրբ գրությունից»: Եթե մենք ցանկանում ենք մեծացնել մեր հոգևոր կայունությունը, մենք հոժար կլինենք սովորելու և բավականաչափ խոնարհ կլինենք ընդունելու առաջնորդություն՝ անկախ մեր տարիքից ու փորձառությունից:

Դա իսկապես մեր ընտրությունն է: Մենք կարող ենք լսել և ականջ դնել խորհրդին, որ տրվում է մեզ Եկեղեցու ղեկավարների՝ հատկապես նրանց, ում մենք հաստատում ենք որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ, ծնողների և վստահելի ընկերների կողմից կամ ոչ: Մենք կարող ենք ջանալ սովորողներ լինել մեր ողջ կյանքի ընթացքում կամ ոչ: Մենք կարող ենք մեծացնել մեր հոգևոր կայունությունը կամ ոչ: Եթե մենք չմեծացնենք մեր հոգևոր կայունությունը, մենք կնմանվենք *Վասային*՝ նավակի, որը չի լողում:

ՆԱՎԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ © LUBLUBACHKA/THINKSTOCK, MICHELEBOLERO/THINKSTOCK, DAVID HARDING/THINKSTOCK

Ծառայել ուրիշներին

Երրորդը, անմիջական լինելը, ուրիշների համար մտահոգվելը և ուրիշներին ծառայելը մեծացնում է մեր հոգևոր կայունությունը:

Հավերժությունը մնում է մեր ուշադրության կենտրոնում, երբ մենք կենտրոնանում ենք ուրիշների վրա, մինչ փորձում ենք օգնել Երկնային Հոր զավակներին: Ես նկատել եմ, որ ավելի հեշտ եմ ոգեշնչում ստանում, երբ աղոթում եմ իմանալու, թե ինչպես կարող եմ օգնել մեկ ուրիշին, քան երբ ես պարզապես աղոթում եմ ինձ համար:

Մենք գուցե կարծենք, թե ապագայում մի օր ավելի լավ վիճակում կլինենք, որպեսզի օգնենք ուրիշներին: Իրականում հիմա է ժամանակը: Մենք սխալվում ենք, եթե մտածում ենք, որ ավելի հարմար կլինի ծառայել ուրիշներին, երբ կունենանք ավելի շատ ժամանակ, փող կամ որևէ այլ բան: Անկախ պայմաններից՝ մենք ընտրություն ունենք: Կօգնե՞նք ուրիշներին, թե՞ ոչ: Մենք կձախողվենք մահկանացու կյանքի կարևորագույն փորձություններից մեկում, եթե չընտրենք օգնելու կարիքի մեջ գտնվողներին: Իսկ եթե օգնենք, մենք կմեծացնենք մեր հոգևոր կայունությունը:

Դարձնել Հիսուս Քրիստոսին մեր հիմքը

Չորրորդը, վերջինը և ամենակարևորը, մեր հոգևոր կայունությունը կախված է այն բանից, թե որքանով ենք մենք հաստատում Հիսուս Քրիստոսին որպես մեր հիմք:

Առանց Քրիստոսի մենք նման ենք ալիքների վրա տարուբերվող նավակի: Մենք չունենք զորություն, քանի որ չունենք առագաստ: Մենք չունենք կայունություն, հատկապես փոթորիկների ժամանակ, քանի որ չունենք խարիսխ: Մենք չունենք ուղղություն կամ նպատակ, քանի որ չունենք նպատակակետ: Մենք պետք է Քրիստոսին դարձնենք մեր հիմքը:

Որպեսզի կյանքում պատրաստ լինենք հանդիպելու հակասական հոսանքներին և հաղթահարելու դրանք, մենք պետք է հնազանդվենք Աստծո պատվիրաններին, լինենք խոնարհ, հոժարակամ և որոշում կայացնենք սովորել ողջ կյանքի ընթացքում, ծառայենք ուրիշներին և հաստատենք Հիսուս Քրիստոսին որպես մեր կյանքի հիմք: Երբ անենք այդ ամենը, մենք կմեծացնենք մեր հոգևոր կայունությունը: Ի տարբերություն *Վասայի,* մենք կկարողանանք ապահով վերադառնալ նավահանգիստ՝ իրականացրած լինելով այն, ինչ նախասահմանված էր մեզ համար: ■

2014 թվականի սեպտեմբերի 16-ին Բրիգամ Յանգ Համալսարանում կայացած հանդիպման ելույթից: Անգլերեն լեզվով ողջ հոդվածը կարդալու համար այցելեք *speeches.byu.edu*:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Նամակ Թագավորության շվեդական կոնսուլից թագավոր Գուստավ II Ադոլֆին. թարգմանությունը մեջբերված է Ռիչարդ Օ. Մեյսոնի «*Վասան* շրջվել է» գրքից, virtualschool.edu/mon/CaseStudies/Vasa/vasa.html: Կան բազմաթիվ պատմություններ *Վասայի* վերաբերյալ, պատմական տեղեկությունների համար տես, օրինակ vasamuseet.se/en և այլ կապուղիներ:
2. Henry B. Eyring, in Robert I. Eaton and Henry J. Eyring, *I Will Lead You Along: The Life of Henry B. Eyring* (2013), 409.

ՍՈՎՈՐԵՔ ՕՐՇՆԵՐԳ ՆՎԱԳԵԼ *10 րոպեում:*

Կազմված և հարմարեցված է Դանիել Քարտերի կողմից:
Եկեղեցու երաժշտական և մշակութային արվեստների բաժին

Եթե դուք նախկինում երբեք դաշնամուր չեք նվագել, բայց միշտ ցանկացել եք սովորել, ահա ձեր հնարավորությունը: Ձեզ անհրաժեշտ է ունենալ ստեղնաշար: Նույնիսկ եթե դուք ստեղնաշար չունեք տանը, կարող եք այս ուղեցույցը ձեզ հետ տանել որևէ տեղ, որտեղ դաշնամուր կամ աստեղնաշար կա, և սկսել սովորել:

Այս դասն այնքան պարզ ու հեշտ է, որ դասի վերջում դուք կկարողանաք որևէ օրհներգ նվագել: Իրականում հնարավոր է, որ այս դասին դուք կարողանաք մոտ 10 րոպեում նվագել օրհներգի մեղեդին:

Պատրա՞ստ եք: Եկեք սկսենք:

Պատրաստվում ենք դաշնամուր նվագել

1. Երբ նստում եք դաշնամուրի մոտ և ձեր մատները դնում ստեղնաշարին, ետ հրեք ձեր աթոռը բավականաչափ հեռու, որպեսզի ձեր արմունկները թեթևակի թեքվեն:
2. Նստեք աթոռի վրա այնպես, որ այն լինի ստեղնաշարի ուղիղ կենտրոնի դիմաց:
3. Նստեք աթոռի ծայրին, մեջքը ուղիղ, իսկ մարմնի ծանրությունն առաջ:
4. Ոտքերը դրեք գետնին:
5. Հարմարավետ նստեք՝ ճիշտ կեցվածք պահպանելով:
6. Համոզվեք, որ լուսավորությունը լավ է նոտաներն ու ստեղնաշարը տեսնելու համար:

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ԴԵՅԿԻՆ ՀԱՅԿԵՆԻ



7. Կանգնեք: Ձեռքերը իջեցրեք և թուլացրեք: Ուշադրություն դարձրեք դրանց բնական թեքությանը՝ կարծես դրանք գնդակ են պահում: Երբ նորից նստեք, մատները դրեք ստեղնաշարին՝ պահելով նույն բնական թեքությունը:
8. Դրեք ձեր ձեռքերը ստեղնաշարի վրա, թույլ տալով, որ ձեր մատները դիպչեն սպիտակ ստեղներով կազմվող մեծ տարածքի կենտրոնին: Ձեռքի ափերը պահեք ստեղնաշարից վերև, բայց մի իջեցրեք դրանք ստեղներից ներքև գտնվող փայտի վրա:
9. Խփեք ստեղնին մատի թմբիկով՝ձեր մատի մատնահետքի վերին մասով: Բոլոր մատները կորացրեք, բարձրացնելով այն ձեռքի ետնամասի հողից: Երբ հարվածում եք ստեղնին, մատների հողերը պահեք թեք վիճակում:

Նվագել մատների թմբիկներով

Որպեսզի հեշտությամբ ճիշտ մատը տեղադրեք յուրաքանչյուր ստեղնի վրա, մատները համարակալեք՝ ինչպես ցուցադրված է այստեղ: Մատների համարները գրված են էջի վրա՝ նոտաների կողքին:

Դրեք ձեր ձեռքը ցանկացած հինգ ստեղնի խմբի վրա՝ պահելով յուրաքանչյուր մատը մեկ ստեղնի վերևում: Օգտագործելով մատների համարները վարժվեք՝ նվագելով ստեղները ճիշտ մատով՝ինչպես ցույց է տրված: Նոտաների վերևի նշանները աջ ձեռքի համար են: Նոտաների ներքևի նշանները ձախ ձեռքի համար են:



Նվագել «Կա մի հեռու կանաչագեղ մի սար» հաղորդության օրհներգը

Դրեք ձեր ձեռքերը ստեղնաշարի վրա՝ ինչպես ցուցադրված է ներքևում:

Օգտագործեք սև ստեղների երկու կամ երեք խումբ, որպեսզի հեշտությամբ գտնեք ճիշտ դիրքը:

Նվագեք այս օրհներգը՝ հետևելով մատների համարներին՝ ինչպես ցույց է տրված: Նոտաների վերևի նշանները աջ ձեռքի համար են, իսկ նոտաների ներքևի նշանները ձախ ձեռքի համար են: Նվագեք օրհներգը մինչև զգաք, որ ձեզ համար արդեն հեշտ է: Օգտագործեք ճիշտ նվագելու տեխնիկայի սկզբունքները, որոնք թվարկված են ինը կետից բաղկացած ցուցակում:

Դուք սովորեցիք դաշնամուրի վրա նվագել մի պարզ օրհներգի մեղեդի: Ուրիշ օրհներգեր նվագելու համար պիտի սովորեք հարվածելու, ռիթմի և նոտաների մի քանի հիմնական տարրեր:

Ահա ամենալավ մասը. դասը, որ դուք հենց նոր սովորեցիք, Եկեղեցու ստեղնաշարային դասընթացի առաջին դասն է, որը Եկեղեցու բաշխման կենտրոնում մատչելի է վեց լեզուներով:[1] Արագ յուրացնելու հրահանգների ծրագիրը կօգնի ձեզ սովորել ինքնուրույն կամ խմբով: Կարող եք սովորելու գործընթացում նույնիսկ ընդգրկել ձեր ողջ ընտանիքը՝ որպես ընտանեկան երեկոյի միջոցառում: Դասընթացը կարելի է ավարտել ընդամենը վեց շաբաթում:

Բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երաժշտության անհատական դասերն օգնում են լավացնել ուսանողների կենտրոնանալու, ուսուցման վարպետության և տրամաբանելու հմտությունները:[2]

Երաժշտական հմտություններ սովորելիս մենք զարգացնում ենք Տիրոջ պարգևած շնորհը, ավելացնում ենք մեր գիտելիքները և սովորում շատ տարբեր եղանակներ, որոնցով կարող ենք կիրառել մեր գիտելիքները և տաղանդները՝ կառուցելու Նրա արքայությունը: ■



ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ստեղնաշարային դասընթացի փաթեթը պատվիրելու համար այցելեք store.lds.org կայքը:
2. Տես Laura Lewis Brown, “The Benefits of Music Education,” pbs.org; Jessica Velasco, “How the Arts Can Help Students Excel,” the Science of Learning Blog, Dec. 11, 2012, scilearn.com/blog/how-arts-help-students-excel; “Music Helps Children Learn Maths,” *The Telegraph,* Mar. 22, 2012, telegraph.co.uk:

ՈՐՈՇԵԼ ԷԻ **թողնել** ՆՎԱԳԵԼԸ

Դաշնամուր նվագելու իմ հմտությունները չէին բարելավվում՝ անգամ տարիներ տևած պարապմունքներից հետո: Ծնողներս ասացին, որ կարող եմ թողնել այն մեկ պայմանով. Ես պետք է 50 օրհներգ սովորեի:

Գրեթչեն Բլաքբըրն

Դաշնամուրի հերթական հիասթափեցնող դասից հետո աչքերս արցունքով լցված ես ներխուժեցի տուն: Դա իմ դաշնամուր պարապելու չորրորդ տարին էր, և ես հազիվհազ կարողանում էի վարժ նվագել վերջին՝ «Շողա, շողա, փոքր աստղ» երգը: Ուսուցիչս փորձեց ինչ-որ դրական բան ասել իմ սոսկալի կատարման մասին, բայց դրանից ես ինձ միայն ավելի վատ էի զգում: Ծնողներս վճարում էին դաշնամուրի իմ դասերի համար, բայց ես չէի ուզում գնալ դաշնամուրի և հույս չունեի, որ նվագել կսովորեի:

Ուզում էի, որ ծնողներս ինձ թույլ տային՝ այլևս դաշնամուրով չզբաղվել: «Խնդրում եմ,- աղերսում էի ես,- ես ամեն ինչ կանեմ: Ի՞նչ անեմ, որ թույլ տաք»:

Նրանք միասին խորհրդակցելուց հետո ասացին. «Եթե 50 օրհներգ նվագել սովորես, մենք թույլ կտանք, որ դու այլևս չգնաս դաշնամուրի դասերին»:

Առանց հապաղելու ես սկսեցի պարապել: Ես այնքան շատ էի ուզում թողնել այն, որ պատրաստ էի դաշնամուրի վրա լրացուցիչ ժամանակ ծախսել: Առաջինը «Փառք Քեզ Տեր Մարգարեի համար» (*ՀՄԵ,* էջ 36) օրհներգն էր, որը վարժ նվագելու համար գրեթե մեկ ամիս պահանջվեց: Ես դեռևս ուզում էի թողնել դաշնամուրը, այնպես որ շարունակեցի պարապմունքներս:

Մի հետաքրքիր բան տեղի ունեցավ՝ օրհներգերն ավելի հեշտ էր ստացվում նվագել: Ես ավելի ուրախ էի ինձ զգում շաբաթվա ընթացքում: Օրվա ընթացքում քթիս տակ ցածրաձայն երգում էի օրհներգերը, իսկ հաղորդության ժողովին ավելի բարձրաձայն էի երգում:

Եղավ մի պահ, որ այլևս չէի հաշվում, թե քանի օրհներգ եմ սովորել: Որքան վարժ էի դաշնամուր նվագում, հասկանում էի, որ կարող եմ նոր օրհներգը գրեթե 30 րոպեում կատարյալ սովորել:

Երբ վերջապես հաշվեցի, թե քանի օրհներգ գիտեմ նվագել, հասկացա, որ 50-ից ավելի օրհներգ եմ սովորել: Եվ այլևս ոչ մի կերպ չէի ուզում թողնել դաշնամուր նվագելը: Ես շատ ավելի ինքնավստահ էի նվագում և զգում էի օրհներգերի ուժն իմ կյանքում:

Օրհներգերը սուրբ գրությունների պես են, դրանք ասում են ճշմարտությունը: Երբ օրհներգեր եմ նվագում, ասես խորասուզվում եմ սուրբ գրությունների մեջ: Օրհներգեր նվագելը նպաստեց, որ ես կառուցեի իմ վկայությունը և սովորեի ճշմարտությունը: Այժմ տարբեր օրհներգերի խոսքերն եմ կրկնում, որն օգնում է ինձ օրվա ընթացքում: Դաշնամուր նվագելն ամրացրել է իմ վկայությունը և ամենուր դռներ բացել ինձ համար: ■

Հեղինակն ապրում է Նյու Յորքում, ԱՄՆ:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ, ՎԻՇՏԸ ԵՎ ԱՍՏՈ ԾՐԱԳԻՐԸ

*Իմ կյանքի **ամենաողբերգական փորձառության** ժամանակ ես զգացել եմ, որ **Երկնային Հայրն ինձ հետ է եղել** ողջ ընթացքում:*

Պաոլա Քեյջուպի

2008 թվականն էր. մի օր վաղ առավոտյան մայրս արթնացրեց ինձ, որ գնամ դպրոց: Ես շատ ուրախ էի այդ առավոտ, սակայն չգիտեի, որ դա դառնալու էր իմ կյանքի ամենասարսափելի օրը կամ վերջին անգամը, որ տեսնելու էի նրան: Այդ օրը ես չավարտեցի իմ բոլոր դասերը, քանի որ մեր ընտանիքի ընկերներից մեկը եկավ իմ հետևից և ասաց ինձ, որ մայրս ինքնասպան էր եղել: Ես ընդամենը 12 տարեկան էի:

Ես մտածեցի. «Ինչպե՞ս կարող եմ ապրել առանց իմ մայրիկի»: Նա իմ լավագույն ընկերն էր:

Ամիսներ շարունակ ես լաց էի լինում: Ես չէի ուզում դպրոց գնալ, քանի որ երեխաների վերաբերմունքն իմ հանդեպ փոխվել էր. նրանք խղճում էին ինձ: Ես չէի հասկանում, թե ինչ պետք է անեմ. ես միայն գիտեի մի բան, որ պետք է ուժեղ թվամ բոլորին:

Մի օր, մայրիկիս մահից հինգ կամ վեց ամիս հետո, ես մենակ կանգնած էի իմ սենյակի պատուհանի մոտ և լալիս էի, փորձելով հասկանալ, թե ինչի համար եմ ես այստեղ: Հանկարծ իմ սրտում ես լսեցի մի ձայն: «Դու իմ դուստրն ես. ես թույլ չեմ տա, որ դու տառապես»: Ես գիտեի՝ դա Աստված էր: Սակայն դա զարմացրեց ինձ, քանի որ ես այլևս չէի հավատում Նրան, հատկապես այն պատճառով, որ կարծում էի, թե Աստված էր տարել մայրիկիս ինձանից: Չնայած ես չգիտեի, թե Նա ինչ նկատի ուներ, ես ինձ ապահով զգացի:

Երեք տարի անց ես գնացի Հռոմ՝ Իտալիա, այցելելու իմ հորեղբորը: Նա անընդհատ ինձ պատմում էր մի եկեղեցու մասին, ուր նա հաճախում էր: Մի կիրակի նա ինձ տարավ իր հետ: Ես միշտ կհիշեմ, թե ինչպես առաջին անգամ մոտեցա եկեղեցու դռներին և զգացի Երկնային Հոր սերը, երբ ներս մտա: Կարծես տանը լինեի:

Ես սկսեցի ամեն կիրակի գնալ եկեղեցի, իսկ շաբաթվա ընթացքում մասնակցում էի բոլոր միջոցառումներին: Ես սիրում էի լինել Եկեղեցու երիտասարդների շրջապատում: Նրանք ինձ ավելի երջանիկ էին դարձնում: Մենք մտածում և հավատում էինք նույն բաներին: Ապա, երեք ամիս անց, իմ ամառային արձակուրդներն ավարտվեցին, և ես պետք է վերադառնայի Ալբանիա:

Երբ ես տուն վերադարձա, պատմեցի հայրիկիս իմ ունեցած զգացողությունների մասին և թե որքան երջանիկ էի ինձ զգացել այդ ընթացքում: Նրան դա դուր չեկավ: Նա ասաց, որ թույլ չի տա ինձ շարունակել եկեղեցի գնալ կամ ավելին սովորել դրա մասին: Ուստի, ես պետք է համբերատար սպասեի հաջորդ երեք տարիների ընթացքում, մինչև կդառնայի 18 տարեկան: Այդ ժամանակ ես կարող էի ինքնուրույն որոշում կայացնել և մկրտվել:

Այդ ընթացքում ես օրհնվեցի, շփվելով շատ մարդկանց հետ, ովքեր պատմում էին ինձ, թե եկեղեցում ինչ էին սովորում ամեն կիրակի: Այդ մարդկանցից մեկը Ստեֆանին էր: Նա ապրում էր Իտալիայում, երբ հորեղբայրս միացել էր Եկեղեցուն, սակայն նա վերադարձել էր իր տուն, որը գտնվում էր Միացյալ Նահանգներում: Հորեղբայրս մտածեց, որ լավ կլիներ, եթե մենք միմյանց նամակներ գրեինք, ուստի, ես ավելացրեցի նրան որպես Facebook-ի ընկեր:

Չնայած մենք երբեք չենք հանդիպել, ես միշտ երախտապարտ կլինեմ նրան, քանի որ նա օգնեց ինձ



ձևավորել հավատք և ավելի շատ բան սովորել Հիսուս Քրիստոսի ավետարանի վերաբերյալ: Նա գրեթե ամեն կիրակի գրում էր ինձ և պատմում ամեն բան, որ սովորում էր եկեղեցում և ապա պատասխանում էր իմ հարցերին: Նա հրաշալի ընկեր էր ինձ համար:

Ի վերջո, համբերատար սպասված տարիներից հետո, ես մկրտվեցի իմ 18-ամյակից ընդամենը երկու օր անց: Եվ շուտով, ես մայրիկիս հետ կկիսվեմ այն ուրախությամբ, որը զգացել էի այդ օրը, քանի որ ես մկրտվելու եմ նրա փոխարեն: Ես գիտեմ, որ նա կհպարտանա իմ ընտրած կյանքով:

Ես օրհնված եմ զգում Երկնային Հոր կողմից, քանի որ Նա այդ ամբողջ այդ ընթացքում ինձ հետ է եղել բազում դրսևորումներով: Ես պարզապես պետք է սպասեի և համբերատար լինեի, քանի որ Նա ծրագիր ուներ ինձ համար: Նա էր, որ ինձ ուժ տվեց անցնելու բոլոր դժվարությունների միջով, որոնց ես հանդիպեցի: Նա միշտ ինձ հետ էր՝ օգնելով ինձ լինել ավելի ուրախ: ■

Հեղինակն ապրում է Ալբանիայում:

ԱՄՈՒՍՄՐԳՈՒՄԸ: ՌԵՅԼԻ ՔՈՐԹԻՍ

Երեց Խոսե Ա. Տեքսեյրա
Յոթանասունից

ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ԴՈՒ ԱՄԱՉԿՈՏ ԵՍ

ՆԿԱՐԱԶՄԱԴՈՒՄԸ՝ ԴԵՅԻՐ ՄԱԼՈՅԻ

Սպավինիր Տիրոջը և Նա կօրհնի ձեզ ավետարանով կիավելու ձեր ջանքերում:

Երբ Բրազիլիայում նոր էի որպես միսիայի նախագահ կանչվել, ես հարցազրույց էի անցկացնում երեցների հետ: Նրանցից մեկին խնդրեցի պատմել իր մասին:

«Ես շատ ամաչկոտ եմ»,- ասաց նա: Նա անհանգստանում էր, որ իր ամաչկոտությունը կխանգարի իրեն ծառայության ընթացքում:

Ես հարցրեցի. «Իսկ ի՞նչ ես կարծում, Տերը կարո՞ղ է օգնել քեզ լավ միսիոներ լինել»:

«Ես հավատում եմ, որ Տերը կարող է ամեն ինչ անել»:

«Ուրեմն թույլ տուր, որ Նա օգնի քեզ: Կարծում ես, կարո՞ղ ես դա անել»:

«Կարող եմ»,- ասաց նա:

Պիտի խոստովանեմ, որ երբ նա գնաց, ես մտածեցի. «Հուսով եմ, դա կօգնի»:

Շաբաթներ անց այդ միսիոներները կրկին եկան հարցազրույցի: Այս անգամ այդ ամաչկոտ երեցի զուգընկերն ասաց. «Նախագահ, ես չգիտեմ, թե դուք ինչ եք ասել նրան, բայց նա շատ է փոխվել: Նա անկաշկանդ է խոսում մարդկանց հետ»: Եվ ես անհամբեր սպասում էի նրա հետ հանդիպմանը:

Երբ նա ներս մտավ, աչքերը խոնարհեց։

«Ես լավ լուր ունեմ,- ասաց նա,- Ճիշտ է, դեռևս ամաչում եմ, բայց խնդրեցի Տիրոջը, որ օգներ ինձ։ Դրանից հետո լեզուս բացվեց և սկսեցի խոսել։ Եվ գիտե՞ք ինչ եղավ։ Այժմ անընդհատ խոսում եմ։ Նույնիսկ չեմ հիշում, թե ինչ եմ ասում։ Անհավատալի է, բայց մարդիկ սիրով են լսում ինձ։ Նրանք զգում են Հոգին։ Նրանք ընդունում են ինձ և իմ ասածները»։

Ես ապշել էի տեսնելով, թե ինչպես էր այդ միսիոները կերպարանափոխվել, երբ հույսը դրել էր Տիրոջ վրա։ Նա հրաշալի գործիք էր դարձել՝ երջանկություն բերելով բազմաթիվ մարդկանց։

«Ճիշտ է, ես դեռևս ամաչկոտ եմ, բայց խնդրեցի Տիրոջն օգնել ինձ»։

Հաղթահարեք վախը

Ավետարանով կիսվելիս երբեմն լարվածություն ենք զգում։ Բայց ինչպես այդ ամաչկոտ միսիոների դեպքում եղավ, Տերը կուղեկցի մեզ, եթե մենք վստահենք Իրեն։ Սուրբ Հոգին կօգնի մեզ իմանալ՝ ինչ պիտի ասենք (տես 2 Նեփի 32.2–3), և երբ մարդիկ զգում են Հոգին, նրանք հաճախ դրական պատասխան են տալիս։ Շատերին հետաքրքրում է, թե ինչին ենք մենք հավատում և ցանկանում են ավելին իմանալ։

Մեծ ուրախություն

Ես վկայություն ունեմ, որ Երկնային Հայրը կառաջնորդի մեզ ավետարանով կիսվելու մեր ջանքերում, և արդյունքում մենք մեծ ուրախություն կապրենք։ Իրականում, այդ ուրախությունը կլինի մեզ հետ ոչ միայն այս, այլև գալիք աշխարհում։ (Տես ՎԵՈՒ 18.16։) Դա լավ պատճառ է, որ դուրս գաք ձեր հարմարավետության գոտուց և անեք ինչ-որ բան, անգամ եթե դուք ամաչկոտ եք։ ■

ԵՐԵՔ ՎԱԽԵՐ, ՈՐՈՆՔ ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ

Ամաչկոտությունից բացի ես գիտեմ երեք վախեր ևս, որոնք մեզ ստիպում են ասել. «Ես վախենում եմ, որ եթե խոսեմ ավետարանի մասին, ես կկորցնեմ իմ ընկերներին»։ Փառք Աստծուն, որ կարող ենք հավատքով այդ վախերը հաղթահարել։

1. ԵՍ ԲԱՎԱԿԱՆԱՉԱՓ ՉԳԻՏԵՄ։

Եթե ավետարանի մասին գիտելիքի պակաս ունեք, լիաժամկետ միսիոներները կարող են օգնել։ Նրանք կարող են ուսուցանել մեզ Վերականգնման ուղերձը, օգնել մեզ ամրացնել մեր հավատքն առ Տեր Հիսուս Քրիստոս, օգնել մեզ հասկանալ, թե ինչ է ապաշխարությունը և ինչպես կիրառել այն մեր կյանքում, և ինչու են մկրտությունն ու Սուրբ Հոգու պարգևը կարևոր։ Գիտելիքի մեկ այլ հրաշալի աղբյուր է *Քարոզիր Իմ ավետարանը* ձեռնարկը։ Ես կխրախուսեի յուրաքանչյուր երիտասարդ տղամարդու և երիտասարդ կնոջ ունենալ այդ ձեռնարկը, և ձեր սուրբ գրությունների հետ միասին դարձնել այն ձեր ամենօրյա ուսումնասիրության մասը։

2. ՆԱԽԿԻՆՈՒՄ ԵՍ ԵՐԲԵՔ ԴԱ ՉԵՄ ԱՐԵԼ։

Եթե դուք փորձի պակաս ունեք, պարապեք միսիոներների հետ։ Նրանք կօգնեն ձեզ իմանալ, թե ինչ պիտի ասեք կամ չասեք տվյալ իրավիճակում։ Միսիոներների հետ ժամանակ անցկացնելով, դուք կզգաք այն սերը, որ նրանք տածում են ավետարանի և իրենց մերձավորների հանդեպ։ Նրանք ավետարանով կիսվելու քաջություն են գտել. այդ հարցում նրանք կարող են օգնել ձեզ։

3. ԵՍ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՄ ԿԻՍՎԵԼ։

Երբ կիսվում ենք մեր վկայությամբ, մենք օգնում ենք մեր ընկերներին ավելի կարևոր բաներ տեսնել, և նրանք սկսում են հարգել և սիրել մեզ այլ լույսի ներքո։ Դա տեղի է ունենում գրեթե միշտ։ Շատ երիտասարդներ են ասում. «Ես վախենում էի, բայց երբ անկեղծորեն խոսեցի, իմ ընկերը սկսեց ինձ վստահել և ավելի շատ հարցեր տալ»։ Մենք չպետք է վախենանք կիսվել մեր ունեցածով։ Դա թանկ է, որովհետև պարգև է Աստծուց։ Կա՞ արդյոք մեր ընկերների հանդեպ սեր ցուցաբերելու ավելի լավ ճանապարհ, քան կիսվել նրանց հետ նրանով, ինչ գիտենք, որ ճշմարիտ է։

ՄԵՐ ԸՆԹԱՑՔԸ

ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ ԲԱՆՈՒՄ

Ալիվսի Հ., Հոլիսկա, Մեքսիկա

Դպրոցում յուրաքանչյուր կիսամյակի սկզբում մենք ստանում ենք դպրոցական պարագաներով անվճար մի փաթեթ՝ տետր, օրագիր և մի քանի գրենական պիտույքներ: Մի տարի ես հերթ էի կանգնել, որպեսզի ստանայի իմ փաթեթը և տեսա, որ փաթեթի մեջ կար այն ամենը, ինչ ինձ հատկապես անհրաժեշտ էր:

Օրվա վերջում ես տեսա, որ նրանք նույն փաթեթից երկու հատ էին տալիս: Դժվար չէր կրկին հերթ կանգնել և երկրորդ փաթեթը ստանալ, և ես որոշեցի այդպես էլ վարվել: Ի վերջո, դա ձրի էր, և ես այդ դպրոցական պարագաների կարիքն ունեի:

Ես արագ գնացի զուգարան, որտեղ տեսա բջջային հեռախոս, որն ինչ-որ մեկը պատահաբար մոռացել էր այնտեղ: Դա վերջին մոդելի հեռախոս էր, իսկ ես մեկ շաբաթ առաջ էի կորցրել իմ հեռախոսը: Բայց ես անգամ չմտածեցի այն ինձ վերցնելու մասին: «Դա գողություն է»,- ասացի ինքս ինձ:

Իսկ երբ գնացի վերցնելու անվճար երկրորդ փաթեթը ես հասկացա, որ հեռախոսը վերցնելու պես դա ևս անազնիվ քայլ էր, քանի որ պետք է ստեի և ասեի, որ իմ փաթեթը չէի ստացել:

Ես երախտապարտ էի այդ փոքր փորձառության համար, որից մեծ դաս քաղեցի: Ես միացրեցի հեռախոսը և գնացի տուն մեկ տետրով, մեկ օրագրով և մի տուփ գրենական պիտույքներով, բայց լավ զգացողությամբ, որ ազնիվ եմ եղել ամեն ինչում, թեպետև՝ փոքր բաներում: ■

ՕՐՇՆՎԵՑԻՆՔ ՏԱՍԱՆՈՐԴԻ ՕՐԵՆՔԻՆ ՀՆԱԶԱՆԴՎԵԼՈՎ

Սաբրինա Տ., Սան Պաուլո, Բրազիլիա

Երբ ես փոքր էի, իմ ընտանիքն անցնում էր ֆինանսական փորձությունների միջով, որոնք շարունակվեցին մինչև իմ 10 տարեկան դառնալը: Հայրս չէր կարողանում այլ աշխատանք գտնել. նա փողոցում առևտուր էր անում և շատ քիչ էր վաստակում: Մայրս տնային տնտեսուհի էր և խնամում էր ինձ ու փոքր եղբորս:

Սակայն, այդքան շատ դժվարությունների միջով անցնելով, մենք տասանորդ վճարելու և այլ նվիրատվություններ կատարելու մասին վկայություն ունեինք: Ամեն ամիս մենք հավատքով էինք վճարում մեր տասանորդը և երբեք ինչ-որ բանի պակասություն չենք ունեցել: Մենք վստահաբար գիտենք, որ մշտապես օրհնվել ենք Տիրոջ անսահման բարության և այն բանի շնորհիվ, որ Նա պահում է Իր խոստումները, երբ մենք հնազանդվում ենք Նրա պատվիրաններին:

Մեր ֆինանսական փորձության օրերն ի վերջո ավարտվեցին: Մեզ հրաշալի օրհնություններ տվեց Տերն այս վերջին տարիներին:

Ես գիտեմ, որ նրանք, ովքեր հավատարմորեն են վճարում իրենց տասանորդը և սիրով են տալիս իրենց նվիրատվությունները, նպատակ ունենալով, որ կօրհնեն ուրիշների կյանքը, պակասություն չեն ունենա, և նույնիսկ ավելի լավ բաներ տեղի կունենան, ինչպես եղավ իմ և իմ ընտանիքի հետ: Օրհնությունները կավելանան: Ես գիտեմ դա: Ես տեսել եմ դա իմ կյանքում: ■

ՆԱՄԱՍԱՐԳՈՒՄԸ՝ ՔԵԼԻ ՄԱՍՈՐԻՍ

ԼԱ՞Վ Է։

Նորից նայեք։ Սատանան ցանկանում է, որ մենք փոխանակենք իսկական ուրախությունը երջանկության բացարձակ պատրանքով, որը երբեք չի բավարարում։ Ոչ մի կտոր մի կծեք։

(Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Դուք կարող եք անել այդ հիմա», *«Լիահոնա»*, նոյեմբեր 2013, 56)

ԼՈՒՍԻՆԴԱ Հ. ԴԱՎԻԹՅԱՆ ՍԱՐԳԻՍԻ

«Ինձ դպրոցում ծաղրում են ՎՕՍ լինելու համար: Ես գիտեմ, որ պիտի պաշտպանեմ այն, ինչին հավատում եմ, բայց դա այնքան դժվար է: Ինչպե՞ս դառնամ բավականաչափ քաջ:

Դուք ճիշտ եք, որ քաջության կարիք ունեք այս իրավիճակին դիմակայելու համար: Ի վերջո, Հիսուս Քրիստոսը պատվիրել է. «Վեր կացեք և շողացեք, որպեսզի ձեր լույսը չափանիշ լինի բոլոր ազգերի համար» (ՎԱՌ 115.5): Բայց քաջություն ունենալը, որպեսզի թույլ տաք, որ ձեր լույսը շողա, կարող է կամ չի կարող նշանակել դուրս գալ նրանց դեմ, ովքեր ծաղրում են ձեզ:

Երկու դեպքերում էլ դուք կարող եք թույլ տալ, որ դիմադրությունը ոգեշնչի ձեզ՝ավելի լավը լինելու համար: Երբ դուք տքնաջան աշխատում եք՝ ամրացնելու ձեր վկայությունը, կարող եք զարգացնել մի տեսակ հանգիստ քաջություն, որը կօգնի ձեզ բարձրաձայնել կամ պարզապես շարունակել անել այն, ինչը ճիշտ է, նույնիսկ երբ ուրիշները ծաղրում են:

Զայրացնում է, երբ ձեզ ծաղրում են, բայց հիշեք, որ դուք կարող եք աղոթել զթությամբ լցվելու համար, այնպես որ ուրիշներն էլ կարողանան ձեր միջոցով զգալ Քրիստոսի սերը (տես Մորոնի 7.48): Քանի որ յուրաքանչյուր իրավիճակ եզակի է, ուղղորդում փնտրեք Սուրբ Հոգուց, որպեսզի իմանաք, թե յուրաքանչյուր իրավիճակում ինչպես պատասխանել Քրիստոսանման եղանակով:

Կախված իրավիճակից, ամենալավ եղանակը անձամբ խոսելն է նրանց հետ, ովքեր ծաղրել են ձեզ կամ նույնիսկ պարզապես անտեսելն է անբարյացակամ ծաղրանքը, մինչ շարունակում եք ապրել ձեր համոզմունքներով: Եթե մյուսները հետաքրքրված չեն լսելու այն, ինչ դուք պիտի ասեք, բարության, ներողամտության ու անկեղծության ձեր օրինակը կարող է դառնալ ամենալավ ուղերձը, որը դուք կարող եք ուղարկել:

Ցուցադրեք իսկական քաջություն
Նրանք, ովքեր ծաղրում են ձեզ, հնարավոր է, չդադարեն այդ անելուց, պարզապես քանի որ դուք բավականաչափ քաջություն ունեք խնդրելու նրանց դադարեցնել, բայց նրանք կդադարեցնեն, երբ դուք քաջություն գործադրեք՝ ապրելով այնպես, ինչպիսին կաք՝ որպես Վերջին Օրերի Սուրբ: Նախքան դու կիմանաք, մեր Երկնային Հոր հավանության շողը կփայլի ձեզ վրա, բացելով նրանց աչքերը վերականգնված ավետարանի դիմաց:
Բրայթ Ու. 17 տարեկան, Իմո նահանգ, (Նիգերիա)

Առաջնորդվիր աղոթքի միջոցով
Երկար ժամանակ իմ դպրոցում ես միակ անդամն էի: Իմ մոտ ընկերները, կարծես, հասկանում էին ինձ, բայց մյուս դպրոցական ընկերները ծաղրում էին ինձ: Մի օր ես աղոթեցի և զգացի, որ պիտի խոսեմ նրանցից մեկի հետ, ով քաջալերում էր մյուսներին ծաղրել ինձ: Ես բացատրեցի, որ զայրացած չէի նրա վրա, բայց խնդրեցի նրան հարգել ինձ այնպես, ինչպես ինքը կկամենար, որ իրեն հարգեն: Մեր խոսակցությունը լսելուց հետո իմ ուսուցիչներից մեկը միշտ պաշտպանում էր ինձ, երբ ինչ-որ բան էր պատահում: Եվ ես գիտեմ, որ Տեր Աստված ձեզ հետ կլինի, երբ դուք խոսեք այս մարդկանց հետ:
Շանելա Ս. 14 տարեկան, Պանգասինան, (Ֆիլիպիններ)

Ստեղծեք ձեր վկայությունը
Նախ ձեռք բերեք իսկական վկայություն այն ճշմարտությունների

Պատասխանները Եկեղեցու վարդապետության մասին պաշտոնական հայտարարություններ չեն, այլ միտված են օգնելու և խորհուրդ տալու:

մասին, որոնցով դուք ցանկանում եք կիսվել ուրիշների հետ: Հետո սեր ցուցաբերեք այն մարդկանց հանդեպ, ովքեր ծաղրում են ձեզ, և վեճի մի բռնվեք, որովհետև հակառակության ոգին երբեք Աստծուց չէ (տես 3 Նեփի 11.29): Եվ ամենակարևորը՝ ձգտեք Հոգին միշտ ձեզ հետ ունենալ: Հոգին կօգնի ձեզ ավելի շատ սեր ցուցաբերել ու լինել ավելի քաջ, և Նա ձեր խոսքերը զորեղ կդարձնի:

Ջուլիա Ֆ. 19 տարեկան, Հեսսե, (Գերմանիա)

Սիրեք ձեր թշնամիներին

Ես եղել եմ նմանատիպ իրավիճակում: Եթե դուք հավատ ունեք և խոնարհվում եք, դուք կօրհնվեք զորությամբ ու հավատով, որի կարիքը դուք ունեք, որ «սիրեք ձեր թշնամիներին, օրհնեք ձեզ անիծողներին, . . . և աղոթք արեք նրանց համար» (Մատթեոս 5.44): Ես քաջալերում եմ ձեզ սուրբ գրություններում պատասխան փնտրել այն հարցին, թե ինչպես ուժեղ լինել: Աղոթեք, երբ մենակ եք զգում ձեր հավատքում: Հռովմայեցիս 8.31 հատվածում ասվում է. «Ապա ի՞նչ ասենք այս բաների համար: Եթե Աստուած մեր կողմն է՝ ո՞վ է մեզ հակառակ»: Աստված ձեր կողքին է: Ամեն բան հնարավոր է:

Ռեյգան Տ., 15 տարեկան, Յուտա (ԱՄՆ)

Ուժ գտնեք սուրբ գրություններում

Աղոթելն ու ծոմ պահելը կարևոր են, քանի որ դրանք կօգնեն ձեզ դիմակայել կատակներին և մարտահրավերներին դպրոցում, ճիշտ ինչպես Հիսուս Քրիստոսը դեմ առ դեմ կանգնեց այդքան շատ ծաղր ու ծանակին այստեղ՝ երկրի վրա: Դրանք կօգնեն ձեզ զարգացնել ավելի շատ սեր ու համբերություն մարդկանց հանդեպ:

Վալտեր Ս. 15 տարեկան, Ջաեն (Պերու)

Մի վախեցեք

Ավելի հաճախ խոսեք ձեր կրոնի մասին կամ նպատակային բաներ արեք այն ի հայտ բերելու համար: Ես նույն իրավիճակում էի և իմ պայուսակի վրա գրեցի. «Ինձ դուր է գալիս ՎՕՍ լինելը»: Այդպես վարվելով ես դուռ բացեցի մի քանի միսիոներական հնարավորությունների համար և չէի վախենում նրանց տեղեկացնել, որ ես ՎՕՍ եմ: Ինչ էլ որ անեք, թույլ մի տվեք նրանց ձեզ հունից հանել: Աղոթեք նրանց և ձեր համար: Շուտով դուք կպարզեք, որ եթե դուք կենտրոնանաք ուրիշների հոգիները փրկելու վրա, դուք այդքան չեք վախենա պատմել նրանց մեր Հոր ավետարանի ճշմարտությունը:

Սավաննա Պ., 14 տարեկան, Տեխաս (ԱՄՆ)

ՄԵՐ ՀԱՄՈՁՄՈՒՆՔՆԵՐԻ ՔԱՋՈՒԹՅՈՒՆԸ

«Հաճախ դժվար է տարբերվել մյուսներից և մենակ կանգնել ամբոխի մեջ: Բնական է, որ վախենում եք, թե ուրիշներն ինչ կարող են ասել կամ մտածել: Հանգստացնող են սաղմոսի բառերը. «Տերն է իմ լույսը և իմ փրկությունը, ես ումի՞ց պիտի վախենամ. Տերն է իմ կեանքի զօրությունը, ես ումի՞ց պիտի սարսափիմ» [Սաղմոս 27:1]: Երբ մենք Քրիստոսին կենտրոնական դեր տանք մեր կյանքում, մեր վախերը կփոխարինվեն մեր համոզմունքների քաջությամբ»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն. «Օրինակ և լույս եղեք աշխարհի համար», *Լիահոնա* նոյեմբեր 2015, 88:

ՀԱՋՈՐԴ ՀԱՐՑԸ

«Ինչպե՞ս կարող եմ հասկանալ, որ Աստված լսում է իմ աղոթքները»:

Ձեր պատասխանը և, ցանկության դեպքում, բարձրորակ լուսանկարը ներկայացրեք մինչև 2016 թվականի մայիսի 1ը liahona.lds.org կայքին, է-փոստով ուղարկեք liahona@ldschurch.org, կամ փոստով (տես հասցեն էջ 3-ում):

Հետևյալ տեղեկությունը և թույլտվությունը պետք է ներառված լինի ձեր է-փոստի կամ նամակի մեջ. (1) լրիվ անունը, (2) ծննդյան թիվը, (3) ծուխը կամ ճյուղը, (4) ցիցը կամ շրջանը, (5) ձեր գրավոր թույլտվությունը, և, եթե դուք 18 տարեկանից ցածր եք, ձեր ծնողի գրավոր թույլտվությունը (է-փոստը ընդունելի է) ձեր պատասխանը և լուսանկարը տպագրելու համար:

Պատասխանները կարող են խմբագրվել ծավալի ու պարզության համար:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ի՞նչ են անում Առաքյալները:

Առաքյալները Տիրոջ ծառաներն են: Նրանք ճամփորդում են՝ այցելելով Եկեղեցու անդամներին ողջ աշխարհում:

Որպես Առաքյալ առաջին անգամ ճամփորդելիս հանդիպեցի մի մարդու, ով չէր կարողանում պահել Իմաստության Խոսքը: Ես նրան ասացի. «Տերն ուղարկել է ինձ այստեղ, որ ձեզ հայտնեմ մի պարզ ուղերձ. Դուք կարող եք դա անել: Ես խոստանում եմ՝ դուք կունենաք Նրա օգնությունը այդ մարտահրավերին դիմակայելիս»:

Արդյո՞ք Տերը կուղարկի Տասներկու Առաքյալներից մեկին աշխարհի մյուս ծայրը՝ ընդամենը մեկ մարդու օգնելու համար: Պատասխանն է՝ *այո:* Նա միշտ այդպես է վարվում: ■

Հատված Երեց և Քույր Բեդնարների համաշխարհային դեմառդեմ հեռարձակումից:

ՆԱՄՈՒՇԵՐԸ ՍՅՈՆ ԳՈՒԵՐԻՐ

Խաղաղությունն իմ սրտում

Քերոլ Ֆ. Մակքոնկի
Երիտասարդ կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդական

Երբ ութ տարեկան էի, ես տեսա մարգարե Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյին (1873–1970)։ Նա եկել էր նվիրագործելու Եկեղեցու մի նոր շենք ԱՄՆ-ի Նյու Յորք նահանգի Պալմիրա քաղաքում։ Իմ ընտանիքը գնաց նվիրագործմանը։ Շատ մարդիկ էին հավաքվել։ Մենք բոլորս շատ ոգևորված էինք, որ տեսնելու էինք մարգարեին։

Ես բավականին փոքրիկ էի, դրա համար էլ ինձ դժվար էր տեսնել թե ինչ էր կատարվում շուրջս։ Բայց ես, այնուամենայնիվ, կարողացա զգալ Նախագահ Մակքեյի սերը։ Ընդամենը մեկ րոպե ես տեսա նրա սպիտակ մազերը և բարի դեմքը։ Ես մտածեցի. «Ահա թե ինչպիսին է Աստծո մարգարեն»։ Ես կարդացել էի մարգարեների մասին սուրբ գրություններում, բայց սա առաջին անգամն էր, որ անձամբ տեսնում էի մարգարեի կամ որևէ Բարձրագույն Իշխանավորի։ Ես հասկացա, որ մարգարեներն իրական մարդիկ են։ Եվ նրանք սիրում են մեզ։ Ես միշտ կհիշեմ այն խաղաղությունն ու սերը, որ ես զգացի այդ օրը։

Երբ 11 տարեկան էի, ես ունեցա մեկ այլ փորձառություն, որն ինձ օգնեց խաղաղություն զգալ իմ սրտում։ Մոտենում էր ցցի համաժողովը, և ես պիտի երգեի ցցի երգչախմբում։ Ես այնքա՜ն ոգևորված էի։ Ես հագել էի գեղեցիկ սպիտակ վերնաշապիկ և ինձ առանձնահատուկ էի զգում։ Երգը, որը երգում էինք, գրված էր Հովհաննես 14.27-ի բառերով՝ «Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ։ Ձեր սիրտը չխռովի և չվախենայ»։

Այս բառերն իրոք հուզեցին ինձ, և ես հիշում եմ դրանք այդ ժամանակից ի վեր։ Երբ ես երգում էի այդ բառերը, ես գիտեի, որ դրանք ճշմարիտ են։ Ես զգացի, որ Սուրբ Հոգին ասում էր ինձ, որ Հիսուս Քրիստոսին հետևելն օգնում է մեզ խաղաղություն զգալ։ Այդ ժամանակից ի վեր ամեն անգամ, երբ ես դժվարություն եմ ունենում, իմ միտքն է գալիս այս սուրբ գրությունը և ինձ խաղաղություն բերում։ Ճշմարտությունը, որը ես սովորեցի, երբ երիտասարդ էի, օրհնեց իմ ամբողջ կյանքը։ ■

ՆԿԱՐԱԶՄՈՒՆԸ՝ ԷՄԻ ԲԵՅԹՍԻ

Էթանի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Լարի Հիլլեր

Հիմնված է իրական պատմության վրա

«Լսիր, լսիր: Սուրբ Հոգին է շշնջում: Լսիր, լսիր ցածր մեղմ ձայնն է խոսում» (Children's Songbook, *106*):

Էթանը նստեց միացյալ ժամի և նայեց, թե ինչպես էր իր լավագույն ընկերը՝ Սեմը, իր վկայությունը բերում: Իր ընկերուհին՝ Սառան, սպասում էր իր հերթին: Սեմը խոսում էր իր կատարած ծառայության ծրագրի մասին: Նա ասաց, որ վկայություն ուներ ծառայության մասին: Սառան իր վկայությունը բերեց ընտանիքների մասին: Էթանի ուսուցիչը նույնպես բերեց իր վկայությունը: Նա խոսեց տաճարային աշխատանքի մասին: Նրանք բոլորն էլ վկայեցին, որ Եկեղեցին ճշմարիտ է: Թվում էր, թե բոլորը, բացի Էթանից, վկայություն ունեին:

«Ես ինչի՞ մասին վկայություն ունեմ»,- մտածում էր Էթանը:

Նա հիշեց, երբ մի քանի տարի առաջ ինքն ու իր ընկերները մկրտվեցին: Իրենց Երեխաների խմբի ուսուցիչը, Քույր Քալդերը, խոսեց Սուրբ Հոգու մասին:

«Սուրբ Հոգին կարող է քո սրտում այրող զգացում առաջացնել: Նա կարող է օգնել քեզ իմանալ, թե ինչն է ճշմարիտ: Այդպես ենք վկայություն ստանում այն ամենի մասին, ինչին հավատում ենք»:

Էթանը փորձել էր անել այն, ինչ ճիշտ էր, որպեսզի զգար Սուրբ Հոգին: Նա կարդում էր

Թվում էր, թե բոլորը, բացի Էթանից, վկայություն ունեին:

սուրբ գրություններն ու աղոթում: Սակայն երբեք չէր ունեցել այդ այրող զգացումը, որի մասին մարդիկ ասում էին: Արդյո՞ք դա նշանակում էր, որ նա վկայություն չուներ:

Հաջորդ օրն այդ միտքն անընդհատ պտտվում էր Էթանի գլխում: Նա դեռևս մտածում էր այդ մասին, երբ դասերից հետո Սեմի հետ սքեյթբորդ էին վարում: Նա մտածում էր, ինչպես կարող էր հարցնել Սեմին այդ մասին:

«Հեյ, Սեմ,- վերջապես հարցրեց Էթանը,- դու վախենո՞ւմ էիր, երբ երեկ քո վկայությունը բերեցիր»:

Սեմը ցատկեց սքեյթբորդի վրայից և քայլեց դեպի խոտածածկույթը: «Ոչ այդքան,- ասաց նա՝ խոտերի վրա նստելով,- Դրանից առաջ ես կիսվել եմ իմ վկայությամբ ընտանեկան երեկոյի ժամանակ»:

Էթանը մոտեցավ նրան և սքեյթբորդը դրեց իր ծնկներին: «Բայց ինչպե՞ս իմացար, որ դու վկայություն ունես»:

«Դե, ես աղոթեցի և լավ զգացողություն ունեցա»:

Էթանը դանդաղ գլխով արեց. նա ձեռքով ակն էր պտտում: Ինչ-որ կերպ ինքն էլ էր ուզում այդ նույն զգացողությունն ունենալ:

Այդ երեկո, երբ տանը մութ էր և հանգիստ, Էթանն իր մահճակալի մոտ ծնկի իջած աղոթեց:

«Երկնային Հայր,- ասաց նա,- խնդրում եմ օգնիր ինձ վկայություն ունենալ: Օգնիր իմանամ, որ Եկեղեցին ճշմարիտ է: Որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր: Եվ որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է»:

Իր աղոթքի մեջտեղում Էթանը կանգ առավ: Նա մի պահ մտածեց: Ապա ինքն իրեն հարցրեց. «Լավ, իսկ ես ինչ-որ բան գիտե՞մ»:

Ապա մի հանգիստ խաղաղ զգացում պարուրեց իրեն: Դա ուժեղ այրող զգացում չէր: Էթանը գիտեր, որ *դա* Սուրբ Հոգին էր:

Նրա գլխում մի միտք ծագեց. «Ես գիտեմ, որ գիտեմ»: Այդ մասին մտածելիս Էթանը հասկացավ, որ նախկինում ունեցել էր այդ խաղաղ զգացումը:

Երբ նա կարդում էր Մորմոնի Գիրքը, շատ լավ էր իրեն զգում: Այժմ գիտեր, որ դա Սուրբ Հոգին էր վկայում իրեն: Երբ նա գնում էր եկեղեցի և իրեն այնտեղ լավ էր զգում, դա ևս Սուրբ Հոգին էր: Նա արդեն վկայություն ստացել էր:

Նա հենց հիմա ամեն ինչ իմանալու կարիքը չուներ: Բայց նա գիտեր, որ Սուրբ Հոգին իրական է և կարող է օգնել իրեն զարգացնել իր վկայությունը:

Էթանը սկսեց կրկին աղոթել: Բայց այս անգամ նա աղոթեց, որ շնորհակալություն հայտներ: ■

Հեղինակն ապրում է Յուտայում, ԱՄՆ:

ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄԸ՝ ՄԵԼԻՍԱ ՄԵՆՎԻԼԻ

Պեսոներ Երկնային Հոր համար

Անջելա Փենիա Դալի

«Պատվիրանները պահիր: Դա ապահովություն ու խաղաղություն կբերի» (Children's Songbook, *146):*

Աննան ծամում էր իր լոշիկի վերջին կտորը: Այն փափուկ ու համեղ էր: Աննան սիրում էր իր տատիկի պատրաստած լոշիկները: Դրանք նախաճաշի լավագույն մասն էին:

Աննան նայում էր՝ ինչպես էր Աբուելա տատիկը լվանում ափսեները:

Սովորական առավոտ էր: Բայց մի բան այն չէր:

Աբուելան սովորաբար գնում էր շուկա՝ մթերք գնելու: Իսկ այսօր չգնաց: Քանի որ նրանք մթերք գնելու փող չունեին:

«Վաղն ի՞նչ ենք ուտելու»,- մտածում էր Աննան:

Ապա նա հիշեց: Նա գիտեր, որտեղ էր գտնվում փողը: Անցած գիշեր նա տեսավ, ինչպես Աբուելան մի քանի պեսո դրեց սպիտակ թաշկինակի մեջ և կապեց:

«Աբուելա, մոռացե՞լ ես: Դու ուտելիք գնելու փող ունես»:

«Ի՞նչ փող»,- հարցրեց Աբուելան:

Աննան վազեց փողը բերելու: Նա թափահարեց կոպեկներով փոքրիկ տոպրակը: *Չրխկ: Չրխկ:*

Աբուելան ժպտաց: «Դա մեր տասանորդն է, Աննա: Դա *Նրա* փողն է»:

«Իսկ ի՞նչ ենք ուտելու վաղը»,- Աննան հարցրեց:

«Մի անհանգստացիր,- ասաց Աբուելան,- Ես հավատում եմ, որ Երկնային Հայրը կօգնի մեզ»:

Հաջորդ առավոտյան Աբուելան վերջին եգիպտացորենի լոշիկը տվեց Աննային: Ապա նստեց իր աթոռին: Նա ալ կարմիր ծաղիկներ էր կարում զգեստին և պատմություններ պատմում իր

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ ԷԴՎԱՐԴԻ ԲՈՍԻԿ

մանկությունից: Նա շատ հանգիստ էր երևում:

Ապա Աննան դռան թակոց լսեց: Նա վազեց դուռը բացելու:

«Քեռի Պե՜դրո»:

«Զգում էի, որ պետք է այցելեմ ձեզ երկուսիդ»,- ասաց քեռի Պեդրոն: Նա երեք պարկ դրեց սեղանին: Մեկը եգիպտացորենի այլուր էր՝ լոշիկ պատրաստելու համար: Մյուսը միս էր: Իսկ երրորդը շուկայից գնված թարմ բանջարեղեն էր:

«Օ՜, սիրելի որդիս,- ասաց Աբուելան,- Հիմա քեզ համար իմ լավագույն կոլոլակով ապուրը կպատրաստեմ»:

«Դա աշխարհի լավագույն ապուրն է»,- ասաց քեռի Պեդրոն:

Աննան ծիծաղեց և ծափ տվեց:

Ապա կանգ առավ: Մի բան կար, որ նա ուզում էր իմանալ: «Աբուելա, դու գիտեի՞ր, որ այսօր քեռի Պեդրոն գալու էր: Դա՞ էր պատճառը, որ դու չէիր անհանգստանում»:

«Ոչ,- ասաց Աբուելան,- Երբ տասանորդ եմ վճարում, ես հավատում եմ, որ Երկնային Հայրն ինձ կօրհնի: Եվ Նա օրհնեց»:

Աննան ջերմ փարվեց Աբուելային: Նա իրեն Մեքսիկայի ամենաերջանիկ աղջիկն էր զգում: Նա և Աբուելան հավատում էին Երկնային Հորը: Այժմ նա անհամբեր սպասում էր Աբուելայի համեղ ապուրին: ■

Հեղինակն ապրում է Հյուսիսային Կարոլինայում, ԱՄՆ:

Հետևել Մարգարեներին և Առաքյալներին

Ջենևա Կոֆորդ

Աստված կանչում է մարգարեներ և առաքյալներ, որպեսզի ուսուցանեն մեզ այն, ինչ Աստված ցանկանում է, որ մենք իմանանք: Սուրբ գրություններում մենք կարող ենք կարդալ մարգարեների մասին, ինչպես օրինակ՝ Նոյի, Նեփիի և Ջոզեֆ Սմիթի մասին, և առաքյալների մասին, ինչպես օրինակ՝ Պետրոսի և Պողոսի մասին: Այսօր մենք ունենք մարգարեներ և առաքյալներ:







ՀԱՏՎԱԾՆԵՐ ՆԿԱՐՆԵՐԻՑ. ՏԵՐԸ ԿՍԱՄՈՒՍԻ Է ԻՐ ԲՈԼՈՐ ՈՐՈՒՆՔՆԵՐԸ, ՔԱՐԿ Ա Ք. ՓՐԱՏԻ; ՋՈՋԵՖ ՍՄԻԹ ԿՐՏԵՐԸ ՀԱՆՔԱՐՏԱԿԱՆ ՎԵՐԵԼՆԻ; ՆՈՒՄ ԿՏԻԱՄՈՒՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՓՈԼ ՍՍԱՆ; ՆԵՓԻ ԵՎԼԵԲԻՆ ՆԵԿԱՎԱՐՈՒՄ ԵՆ ՆԱՎԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ, ՋԵՐԻ ԹՈՄՍՈՆ; ՆԱՐԱՍՔԱՐՈՒՄԸ՝ ԳԱՐԻ ԲՐՅՈՒՆԵՐԻ

Ի՞նչ է նշանակում «մարգարե, տեսանող և հայտնող»:

Մարգարեն խոսում է Աստծո փոխարեն:

Տեսանողը կարող է տեսնել անցյալը, ներկան և ապագան:

Հայտնողը հայտնում (կամ ցույց է տալիս) մեզ Աստծո կամքը:

- Առաջին Նախագահության բոլոր անդամները մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ են, ինչպես նաև բոլոր Առաքյալները:
- Միայն Եկեղեցու Նախագահն է լիազորված Աստծո կողմից առաջնորդելու ողջ Եկեղեցին:
- Ընդամենը քանի՞ ապրող մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ մենք ունենք:

12 15 3 1

Դասախոսություն. 15

Ինչո՞ւ է կարևոր մարգարեին հետևելը:

Մարգարեն նման է մեկին, ով դիտում է աշտարակից (տես նաև էջ 38): Նա կարող է տեսնել մոտեցող վտանգը և ասել է մեզ, թե ինչպես ապահով լինենք: Նա օգնում է մեզ հետևել Հիսուս Քրիստոսին:



Ի՞նչ է մեզ խնդրել անել մեր մարգարեն:

Այսօր մեր մարգարեն Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն է: Ահա մի քանի բաներ, որ նա խնդրել է մեզ անել:

- Հետևեք Հիսուսի օրինակին և սիրեք բոլորին:
- Վճարեք տասանորդ և նվիրաբերություն կատարեք միսիոներական ֆոնդին:
- Հեռու մնացեք վատ ֆիլմերից, հեռուստատեսային ծրագրերից և այլ լրատվամիջոցներից:
- Տաճարի նկար փակցրեք յուրաքանչյուր ննջարանում:
- Ուսումնասիրեք գերագույն համաժողովի ելույթները:
- Այցելեք ծերերին և եղեք լավ հարևան:

Ցանկից ընտրեք մի բան, որը կարող եք անել այս ամիս: Ի՞նչ եք պատրաստվում անել: ■

Ալման ապաշխարում է

Ալման եղել է ամբարիշտ Նոյ թագավորի քահանան: Նա լսել է, թե ինչպես է Աբինադի մարգարեն սովորեցնում պատվիրանների մասին: Ալման գիտեր, որ ամբարիշտ բաներ անելու փոխարեն պետք է փոխեր իր կյանքը և հետևեր Աստծուն: Նա գրի առավ այն ամենը, ինչ Աբինադին սովորեցնում էր: Նա սկսեց ուրիշներին ուսուցանել ավետարանը: Հետագայում նա ընտանիք կազմեց և իր որդիներից մեկին կոչեց Ալմա:

Ես ֆուտբոլ էի խաղում և ինձ մոտ շատ լավ էր ստացվում: Ապա ես հիշեցի, որ պիտի ապաշխարեի, քանի որ երեկ կոպիտ բառեր էի օգտագործել: Ես պիտի անեի դա, սակայն խաղը դեռ չէր ավարտվել: Ապա ես հիշեցի մի բան: Անհրաժեշտության դեպքում դու կարող ես աղոթել ամեն տեղ: Աղոթելուց հետո ես ինձ լավ զգացի, որ ապաշխարել էի:

Պիտեր Ջ., 8 տարեկան, Յուտա (ԱՄՆ)

Դեյմոն Բ., 8 տարեկան, Յուտա (ԱՄՆ)

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՋԱՐԵՆ ԲԵՔՍԹՐԵՆԻՆ ԿՈՂՄԻՑ

Կտրեք, ծալեք և պահեք պարտավորության այս քարտը:

Ես կարող եմ ապաշխարել

- ☐ Անգիր սովորեք Մոսիա 18.9:
- ☐ Գրեք կամ նկարեք մի բան, ինչը մարգարեն ասել է գերագույն համաժողովի ժամանակ:
- ☐ Ընտրեք մի եղանակ, որը կօգնի ձեզ փոխվել դեպի լավը: Փորձեք անել դա այս ամիս:
- ☐ Ես պարտավորվում եմ . . .

_____

Այս ամսվա սուրբ գրությունները

Սուրբ գրության հատվածը կարդալուց հետո գունավորեք Մորմոնի Ջրերի հետևյալ տարածքները:

1 Մոսիա 21.14–16, 32–35

2 Մոսիա 22.2, 10–16

3 Մոսիա 24.8, 10–14

4 Մոսիա 27.8, 11, 18–24

5 Մոսիա 27.30–37

6 Մոսիա 28.3, 5–15, 20

7 Ալմա 8.11–16, 18–27

8 Ալմա 11.38–46



Մորմոնի Ջրերը

Ալման թաքնվում էր ամբարիշտ Նոյ թագավորից մի խաղաղ վայրի մոտակայքում, որը կոչվում էր Մորմոնի Ջրեր: Շատ մարդիկ եկան լսելու Ալմային, երբ նա ուսուցանում էր ավետարանը: Նրանք ցանկացան մկրտվել: Երբ Ալման մկրտեց նրանց, մարդիկ տվեցին նույն խոստումները կամ կապեցին նույն ուխտերը, որոնք մենք ենք կապում, երբ մկրտվում ենք: Հաջորդ էջում կարող եք գտնել ավելին այս խոստումների վերաբերյալ: ■

ՆԿԱՐՆԵՐԸ: ՋԱՐԵԴ ԲԵԳԱՅԹՐԵՆԻՑ ԿՈՐՈՒՄ, ԱԼՄԱՅԻ ՂԱՐՁԸ, ՄՈՆՈՒՆ ՖՐԻԴԷՐԻԿԻ ԿՈՐՈՒՄԻՑ

Ալման մկրտում է շատ մարդկանց



Աբինադին մարգարե էր։
Նա ուսուցանում էր մարդկանց հավատալ Հիսուսին և վերջ տալ վատ բաներ անելուն։ Նոյ անունով ամբարիշտ թագավորը բարկացած էր Աբինադիի վրա։ Նոյը չէր ցանկանում ապաշխարել։

Ալմա անունով մի մարդ հավատաց Աբինադիին։ Նա փախավ ու թաքնվեց բարկացած թագավորից։ Նա զղջաց իր վատ արարքների համար և ապաշխարեց, ճիշտ ինչպես Աբինադին էր ուսուցանել։

ՆԱՄՈՒՇԱՐԴՈՒՄԸ ԷԹՐԻ ՍԱՌՆԻ



Շատ մարդիկ գալիս էին լսելու, թե ինչ էր Ալման ուսուցանում Հիսուս Քրիստոսի մասին: Ալման սովորեցրեց, որ եթե նրանք ապաշխարեն և հետևեն Հիսուսին, նրանք կարող են մկրտվել:

Մարդիկ ուրախ ծափ տվեցին: Նրանք խոստացան մխիթարել ուրիշներին: Նրանք խոստացան սիրել Աստծուն և պատմել ուրիշներին Նրա մասին: Նրանք պատրաստ էին մկրտվելու:



Ալման մեկ առ մեկ մկրտեց մարդկանց: Նրանք շատ ուրախ էին լինելու Հիսուսի Եկեղեցու մի մասը:

Երբ մենք մկրտվում ենք, տալիս ենք նույն խոստումները, ինչ Ալմայի մարդիկ տվեցին: Եվ մենք նույնպես դառնում ենք Հիսուսի Եկեղեցու մի մասը: ■

Մեջբերված է Մոսիա 16–18-ից:

Կիրակին հատուկ օր է

ՆԿԱՐԸՆԴ՝ ԷԴՈՒԱՐԴ ԱԳՈՅԵՆԻ

Նախագահ Ջորջ Ք. Քենոն (1827–1901)

Առաջին Նախագահության առաջին խորհրդական

ՓՆՏՐԵՔ ՀՈԳԵՎՈՐ ՊԱՐԳԵՎՆԵՐ

Չեզանից քանի՞սն են փնտրում այն պարգևները, որոնք Աստված խոստացել է շնորհել:

Քրիստոսի Եկեղեցու յուրաքանչյուր տղամարդ և կին կարող է ունենալ Աստծո Հոգու պարգևները, որոնք բաժանվում են նրանց՝ համաձայն իրենց հավատքի և ինչպես Աստված է կամենում: . . .

Չեզանից քանի՞սն են . . . փնտրում այն պարգևները, որոնք Աստված խոստացել է շնորհել: Չեզանից քանի՞սն են ընտանիքով կամ ձեր գաղտնի տեղերում Երկնային Հոր առաջ ծնկի գալիս պայքարում, որ այդ պարգևները շնորհվեն ձեզ: Չեզանից քանի՞սն են խնդրում Հորը Հիսուսի անունով, որ հայտնի դարձնի Իրեն ձեզ այս զորությունների և այս պարգևների միջոցով: Թե՞ դուք անց եք կացնում ձեր օրերը, ինչպես դուռը, որը տարուբերվում է՝ հենվելով ծխնիներին, առանց որևէ զգացողություն ունենալու տվյալ հարցի շուրջ, առանց հավատք գործադրելու, բավարարվելով լոկ այն բանով, որ մկրտվել և Եկեղեցու անդամ եք դարձել և ահա այդտեղ էլ հանգիստ եք առնում, մտածելով, որ ձեր փրկությունն ապահովված է, քանի որ դուք արել եք դա: . . .

. . . Ես գիտեմ, որ Աստված կամենում է բուժել հիվանդներին, որ Նա կամենում է շնորհել հոգիներ թափանցելու պարգևը, իմաստության պարգևը, գիտելիքների և մարգարեության պարգևը և այլ պարգևներ, որոնք անհրաժեշտ են: Եթե մենք թերանում ենք ինչ-որ բանում, ապա մենք պարտավոր ենք աղոթել պարգևի համար, որը մեզ կատարյալ կդարձնի: Ունե՞մ ես թերություններ: Ես լի եմ դրանցով: Ո՞րն է իմ պարտականությունը: Աղոթել Աստծուն, որ տա ինձ պարգևներ, որոնք կուղղեն այս թերությունները: Եթե ես լցված եմ զայրույթով, ապա իմ պարտականությունն է աղոթել գթության համար, որը երկայնամիտ է և բարի: Ես նախա՞նձ մարդ եմ: Իմ պարտականությունն է աղոթել գթության համար, որը չի նախանձում: Այդպես էլ ավետարանի բոլոր պարգևների համար: Դրանք նախատեսված են այս նպատակի համար: Ոչ մի մարդ չպիտի ասի. «Ես չեմ կարող զսպել ինձ, իմ էությունն է այդպիսին»: Դա նրան չի արդարացնում, քանի որ Աստված խոստացել է ուժ տալ այդ բաներն ուղղելու համար և տալ պարգևներ, որոնք արմատախիլ կանեն դրանք: Եթե մարդը իմաստության պակաս ունի, նրա պարտականությունն է Աստծուց խնդրել իմաստություն: Նույնը պետք է անել ցանկացած խնդրի դեպքում: Դա է Աստծո նախագիծը կապված Իր Եկեղեցու հետ: Նա ցանկանում է, որ Իր Սրբերը կատարելագործվեն ճշմարտության մեջ: Այդ նպատակով է Նա տալիս այդ պարգևները և շնորհում է նրանց, ովքեր փնտրում են դրանք, որպեսզի դառնան կատարյալ մարդիկ երկրի վրա, անկախ իրենց բազում թուլություններից, քանի որ Աստված խոստացել է տալ պարգևներ, որոնք անհրաժեշտ են նրանց կատարելագործման համար: ■

The Latter-day Saints Millennial Star, *Apr. 23, 1894, 258–61, կենտրոնությունը և մեծատառերը ստանդարտացված են:*

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ © ISTOCK/THINKSTOCK

ՆԵՐԾՆՉՈՒՄՆԵՐ

Ինչպե՞ս է վաղ ձևավորված հավատքն աճում՝ վերածվելով գիտելիքի և վկայության:

«Ես չեմ հիշում մի ժամանակ, երբ չեմ հավատացել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Ես սիրել եմ Նրանց այն ժամանակից ի վեր, ինչ լսել եմ Նրանց մասին իմ հրեշտակ մոր ծնկներին նստած, ով կարդում էր սուրբ գրությունները և ավետարանական պատմությունները: Այդ վաղ ձևավորված հավատքն այժմ աճել է՝ վերածվելով սիրող Երկնային Հոր մասին գիտելիքի և վկայության, ով լսում է մեր աղոթքները և պատասխանում դրանց»:

Երեց Ռոնալդ Ա. Ռազբանդ, Տասներկու Առաքյալների Քվորումից, «Ես մնում եմ զարմացած», *Լիահոնա,* նոյ. 2015, 90:

Նաև այս համարում

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նկատել սատանայի կեղծարարությունները

էջ 44

Սիա մի հիմնարար եղանակ, որով կարող ենք նկատել սատանայի ստերի և Տիրոջ ճշմարտությունների միջև եղած տարբերությունները:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ

ԴՈՒ ԱՄԱՉԿՈՏ ԵՍ

էջ 60

Երբևէ զգացե՞լ եք, որ շատ եք ամաչում կամ վախենում կիսվել ավետարանով: Սիա երեք առաջարկ:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հետևել մարգարեներին և առաքյալներին

էջ 72

Ի՞նչ կարող եք դուք անել այս ամիս, որպեսզի հետևեք մարգարեին՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021328 42013